


199  
Punaru



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ	. . . . .	Քարայրին սաղեւ
Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ	. . . . .	Դաշտանկարներ
* * *	. . . . .	Ազնաւորի ճայնը
Շ. ԱԶՆԱՒՈՒՐ	. . . . .	Հարցազրոյցներ
»	»	Պարզ է, սիրում եմ էեզ
»	»	Տուր մեզ այսօր
Ա. ԱԼԻՔԵԱՆ	. . . . .	Ազնաւոր տաղամուկ
Ր. ՔԷՊԱՊՃԵԱՆ	. . . . .	Պառաւել
Պ. ՀԵՐԵԱՆ	. . . . .	Կարօտ
»	»	Անվտանգութիւն
Ն՝ * * *	. . . . .	Վախճանիկ Անանեան
Վ. ԱՆԱՆԵԱՆ	. . . . .	Մանկապարտէզի դաստիարակչուհին
Յ. ՔԻՒՐՔՃԵԱՆ	. . . . .	Մանկավարժութիւն մը՝ տարբերութեան ի խնդիր
Լ. ՄԿՐՏՁԵԱՆ	. . . . .	Արեւելեան Ծւրապայի երկրներում, 2.- Հունգարիա
Վ. ՕՇԱԿԱՆ	. . . . .	Հայաստանի երիտասարդ բանաստեղծները
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	. . . . .	Յապազած հասունացման սուաջին բողբոջները
Յ. Պ.	. . . . .	Փ. Ճերանեանի «Քամիներ»ը
Ս. Կ.	. . . . .	Յ. Մանուկեանի «Անբնական վաղորդանք»ը


 digitised by *8955-01/10*  
 A.R.A.R.@

# Բազմը

## ԱՎՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ՃԲ. ՏԱՐԻ. ԳՐԻ 4 Ա. ԳՐԻ Լ 1930 ԳԵՂԵՐՈՒՄ

Ն. Զ Ա Ր Խ Ո Ւ Տ Ե Ա Ն

### ՔԱՐԱՅՐԻՆ ԱՌՋԵՒ

Ինքնաշարժը կը կառչէր ասֆալթին եւ մետաղէ սարդի մը պէս կը հիւսիս դարձողարձիկ ու ցից ճամբուն ոտտայնը: Զատիվերը չսկսած՝ խնդրած էիր, որ ջեղի յանձնեմ դէկը եւ աչքերդ ուղղած զէպի բարձունքները՝ ինքնաշարժը առաջ կը մղէիր նոտրի մը պէս, որ գլալով ձեռքիդ հպումը, թեւեր առած կը յաղթահարէ ճամբուն որողայթները եւ մահացու գարձուածք ները:

Որքան գեղեցիկ էիր այդ օրը, ո՛վ անքուն գիշերներու աստղը: Նրոտած քով քովի՝ կ'ըմբռնէինք լեռներու գարթնումը եւ բնութեան համանրագին առաջին ձայնները: Կը չափէինք մեզի ընկերացող վիհին խորութիւնը եւ, իւրաքանչիւր դարձուածքի, յախտեանակուն Միկրկրականը մեզի կը ցուցադրէր իր առասպելական ջուրերուն կապոյտը: Բամոնա՛, Բամոնա՛...

Կը յիշես անպայման Մայիսի այդ առաւօտը, երբ երկինքը մեր դուրսերուն վերերը կը թրթուր նոսր աղամանդի մը պէս: Զովութիւնը կը սուղակէր լեռան կողերն ի վար, Աֆքայի քարայրէն ժայթքող ջուրերուն վազքին հետ եւ կը մեղմացնէր նորածին աստղին հուրը:

Մեր շնչած օդը կը պարունակէր ցնծութեան հիւլէներ, ինչպէս կիտաբաց արուակէ մը արտաբերուող թանկագին բոյրերուն ալիքները:

Սրբ մահը կը սաւաննէր չարագուշակ ամպի մը պէս, ծարաւ ունէի արծաթային ձայնիդ երաժշտութեան եւ նայուածքիդ մոզական վիճերուն, ուր այնքան հեշտանքով կ'ընկղմէի: Աղջամղջային մազերուդ խաղերը, էրննց իւրաքանչիւր շարժումով՝ եղեմներ կը ստեղծէին:

Հիմա ներկայութիւնդ միայն կը լեցնէր տիեզերքը եւ իմաստ մը կուտար կեանքին: Առանց գոյութեանդ՝ բնութիւնը պիտի չըլլար այնքան գեղե-

ցիկ: Թարթիչներուց իւրաքանչիւր ելեւէջը կը յորինէր լուռ համանուագ մը, որուն ունկնդիրները հեռաւոր համաստեղութիւններն էին: Երկիւղած մահ-կանացու մըն էի զէմքիդ անմեղութեան եւ խորհուրդին առջեւ, ո՞վ անդե-նականին վրայ բացուած լուսամուտո, ո՞վ երազներուս անհասանելի կողմին:

Պահ մը անհետացար նայուածքիս պատտառէն, կարծես նոյնացած էիր աիեղեբերին, եւ Միջերկրականը կրկին քաշեց իր կապոյտ վարագոյրը, առիթ տալու համար ճակատադրին, որպէսցի պատրաստէ այն բեմադրութիւնը, որուն գերակատարները դուն ու ես պիտի ըլլայինք:

Այդ պահուն կրկինքը եւ ծովը իրարու ժտեցան նորագոյն ու սիրա-տուշոր զոյգի մը պէս եւ իրենց համբոյրը թրթռացուց ամբողջ աիեղեբերը եւ կեանքը սկսաւ խլրտիլ անջրպետի անհունութեան եւ ովկիանոսներու ըն-դերքներուն մէջ:

Եւ զեղեցիկ կիսազէմը կրկին յայտնուեցաւ եւ վարագուրեց այս հրա-շալի տեսիլքը: Եւ ծովը, երկինքը, ձորը եւ Երկիրը անհետացած ամպերու պէս կը շողիանային հարաւէն փշոզ խորշակներու ջերմութեան մէջ:

Գոյութիւնդ մզում կու տար աշխարհի կեանքին եւ աստղերու ամենի շուրջպարը կը հնազանդէր սրտին զարկերու կլուսթին: Եւ կ'ունենայի այն տալանորութիւնը, որ տիեզերքը ստեղծուած էր քեզ փառաբանելու համար:

Ասֆալթէ ժապաւէնը վերջացաւ: Կը դտնուէինք բարձրագիւր հովիտի մը մէջ: Իջանք ինքնաշարժէն: Մեր զէմ կը ցոյւէր բարձունք մը, որ լեռան զապարթն էր: Անոր ծաղբերուն մէջ կը քնանային ձիւնի խորունկ խուկեր, իսկ կողն է վեր, աստիճանաւոր պտտողամներու վրայ շարուած խնձորենիները ծածկուած էին անբժակ ծաղիկներով: Գետինը վերածուած էր մարգագետնի: Քաշեցինք նեղ արահետէ մը, բարձունքին կողմը: Հովիտը կը վերջանար վի-հով մը, ուրկէ կը լսուէր վազող ջուրերու աղաղակը: Ջուրին աղմուկը եր-թաւով կ'աւելնար: Կանգ առինք վիհին ծայրը: ձիւք մեր զէմը, ապառաժի մը կողմին, կը բացուէր խորունկ քարայր մը, որ կը նմանէր հակայի մը ե-րտխին:

— Ատոնիսի քարայրն է, — ըսիր, — Աֆքոյի աղը, ուրկէ կը ծնի աստ-ւածային գետը:

Կանգնած էինք քարայրին ձիւք զէմը, վիհին այս կողմը: Ջուրը ըի-րեղեայ սաւանի մը պէս կը թաւալէր քարայրի երախէն ու կը կազմէր խո-րունկ աւազան մը, ուրկէ կը ցայտէր գետին հոսանքը:

Թոյց տուիր փոքրիկ տանարի մը աւերակները, աւազանի ափին: Քա-րէ կամուրջ մը իրարու կը միացնէր հոսանքին երկու ափերը:

Դարեր առաջ, այս քարայրին ծօտ, այդ տանարին տեղը, Աֆրոտիթէ իջաւ Ողիմպոսէն, ապասելու համար զեղեցիկ որսորդին՝ Ատոնիսին: Սիրոյ զիցուհին սիրահարած էր այս չքնաղ մահկանացուին:

Եւ այս զբոխտային հովիտին մէջ, երբ զարնան հովերը կը հալեցնէին ձիւնը եւ գետինը կը վերածուէր մարգագետնի, ջուրերու այս յաւիտենա-կան երզը կ'ընկերանար երկու սիրահարներու գիրկը՝ գիտահոգութիւն: Երբ օ-ղերը տաքնային, Աֆրոտիթէ իր աննման մարմինը կը յանձնէր զուլալ ծու-րերու շոյանքին:

Ատոնիս եւ Աֆրոտիթէ...

Սակայն Ողիմպոսի աստուածները կը նախանձէին այս մահկանացուին, որ զրուած էր իրենց անմատչելի ջրով սիրաւ եւ Ջեւաէն ինդրեցին, որ ա-նոր զէմ մահավճիւտ արձակէ:

Աշունը սկսած էր թափել ծառերուն չորցած տերեւները եւ պարարտ

երէնները կը վազվզէին անտուններու մէջ: Երիտասարդ որսորդը բաժնուեցաւ Աֆրոտիթի բազուկներէն, առաւ աղեղը, ուսին կապեց նետերով լեցուն կապարճը ու կորսուեցաւ ծառերուն տակ: Ատոնիս երկար չքալեց: Թաւուտի մը մէջ նկատեց խլրտում մը: Անմիջապէս նետը ամբացուց աղեղի լարին եւ սպասեց: Եւ յանկարծ թաւուտը ճեղքուեցաւ ու մտնէն զանդուած մը խոյսցաւ իր կողմը: Հսկայ վարդոյ մըն էր: Ատոնիս ճարտարօրէն արձակեց նետը, որ պիտի մխրճուէր կենդանիին այլքին մէջ: Բայց նետը վրկպեցաւ իր թիրախէն եւ մտաւ վարագի ուսին: Կատղած կենդանին արագացուց խոյսնալը: Ատոնիս ժամանակ չունեցաւ մէկ կողմ նետուելու, կարծելով, որ որսը պիտի փչի իր ոտքերուն առջեւ: Վարսողը արդէն հասած էր իրեն եւ ժանդօն մէկ հարուածով ճեղքած էր անոր մարմինը վարէն վեր: Փիւնիկեցի որսորդը ճիշ մը արձակեց եւ ինկաւ դետին: Աստուածուհին լսեց իր սիրած տղուն ճիշը եւ խենթի մը պէս վազեց անոր կողմը: Ատոնիս կը դաւարուէր արեան ճապաղիքներու մէջ: Իր հրաշագործ մազերով Աֆրոտիթէ սրբեց անոր արիւնը եւ վէրքը լուաց իր արցունքներով: Երիտասարդը նայեցաւ անոր կողմը ու ընդմիջա փակեց իր աչքերը եւ անոր հոգին իջաւ Տարտարոսի զարհուրելի խաւարներուն մէջ: Եւ դեղեցկութեան անմատչելի աստուածուհին դիմեց հոն, աղաչեց, պաղատեցաւ ու, վերջապէս, յաջողեցաւ մեղմացնել Հասէսի քար սիրտը: Դժոխքներու արքան հաւանեցաւ, որ Ատոնիս իւրաքանչիւր դարնտնամուտին վերադառնայ լոյսին եւ հոն ապրի վեց տարիս, իսկ ամէն աշնանամուտի վերադառնայ մեռելներու աշխարհը: Եւ այսպէս բնութիւնը կը վերածնէր ու կը մեռնէր Ատոնիսի յարութեամբ եւ մահով:

Եւ այդ օրերէն ի վեր, Փիւնիկէն եւ Նոյնիակ հետաւոր երկիրներէն, ամէն աշնանամուտի, ուխտաւորներ կը ժամանէին աստուածներու քապաքը՝ Պիպլոս, եւ թափօրներով կը բարձրանային մինչեւ Աֆթայի քարայրը՝ լալու եւ ողբալու համար դեղեցիկ որսորդին ողբերգական մահը: Եւ Աֆթայի ջուրերը կը ներկուէին Ատոնիսի կարմիր արիւնով, որ կ'երթար-կը խառնուէր ծովու արգասաբեր ջուրերուն, որոնցմէ ծնած էր հրաշափառ Աֆրոտիթէն:

Երեւակայէ, Թամոնա՛, անցեալի այդ տօնակատարութիւնը:

Երիտասարդ աղջիկները եւ հարսները ճերմակներ հաղած եւ ծաղիկներով պսակուած կը քալէին այն նոյն ճամբէն, ուրկէ մենք եկանք: Քուրմերը եւ քրմուհիները կը քալէին թափօրին առջեւէն՝ պարելով ու երգելով, եւ սրինգներու ողբը կը լեցնէր լեռան հովիտներն ու ձորերը, եւ դափերուն կշռոյթը կ'արձագանգէր մինչեւ Սիդոնի եւ Սուրի ծովափները:

Ուխտաւորներու բազմութիւնը կը հուաքուէր այս տափաստանին վերայ եւ մինչ քուրմերը կ'ողակոչէին աստուածացեալ որսորդն ու անոր երկնաւոր սիրուհին, աղջիկները եւ հարսները իրենց բերած ծաղիկները եւ պլտուղները կը թափէին այն աւազանին մէջ, ուր աասպելական զոյգը լուսնեքաւած էր: Տաճար տանող պզտիկ կամուրջին վերայ քրմապետը կը զննուր երինջներ եւ ոչխարներ, իսկ նշանուած աղջիկները եւ հարսները կ'աղօթէին սիրոյ դիցունիին, որպէսզի մինչեւ մահ հաւատարմութիւն ներշնչէ իրենց նշանածներուն եւ ամուսիններուն: Իսկ քրմուհիները եւ լքուած կիները ազիողորմ աղազակներ կ'արձակէին, կը փետէին իրենց մազերը, իրենց եղունգներով կը պատուէին իրենց որովայնն ու ստիճները եւ խելագար շուրջաբեր կը սարքէին:

~

Ամէն անգամ, որ ոտնաձայն մը լսեմ աստիճաններուն վրայ, սիրտս  
digitised by A.R.A.R.®

կը զարնէ ունելի արագ: Կը յուսամ, կը սպասեմ քեզի՝ ինչպէս շուրջած բոյ-  
սը կը սպասէ այդայնն ցօղին, ինչպէս Վիանդը՝ ապաքինման:

Եւ քաղաքին վրայ իշխող համառարած լուսթեան մէջ, որ դադարած է  
չարագուշակ ըլլալէ, կրունկներուդ կշռոյթը կ'երզէ քարէ տատնաններուն  
վրայ...

Եկար վերջապէս:

Հազած էիր կարմիր ու երկուր շրջազգեստ մը, որ կը դրկէր մարմ-  
նիդ բոլոր ելեւէջները: Սեւ եւ առատ մազերդ հաւաքած էիր ծոծրակիդ վը-  
րայ եւ կարմիր մեխակ մը կը մեղմացնէր անոնց դիշերը:

Նստար թիկնաթուփն վրայ: Երբէք այսքան դեղեցիկ չէի տեսած քեզ:  
Վրդիդ սեղի շղթայէն կախուած մետալիոնը կը կորսուէր ծիծերուդ բուրում-  
նաւէտ ծալքին մէջ:

Կեցուածքդ լուրջ էր եւ հանդիսաւոր, բայց աչքերուդ մէջ կար խոր-  
հըրդաւոր փայլ մը: Ուրախ էիր, որովհետեւ եկած էիր երջանկացնելու դիտ:  
Առաջարկեցի բաժակ մը ալքոլ: Մերթեցիր: Կը նախընտրէիր զովաջու-  
ցիչ մը: Քանի մը բառ փոխանակեցինք:

Գիտէի, որ շատ կը սիրեա երաժշտութիւնը: Առաջարկեցի դանազան  
եղանակներ, Թափէլի Վիպերասն, Սառաաթի ՎՄԵԽՍԻ ցիկանցը, Լիսթի  
«Հաւնգրալիամ ռափաւտիսն»:

Եւ մինչ Վիպերասի հետզհետէ շեշտուող կշռոյթը մեզ կը շրջապատէր  
մոզական տարադի մը կախարդանքով, վառեցի սիկարէթդ եւ տեղ առի դէմի  
թիկնաթուփն մէջ: Ջրաչարանքներս լարած՝ կ'ուզէի յիշողութեանս մէջ ար-  
ձանագրել շարժումներդ, ձայնիդ ելեւէջները, շրթներուդ խաղերը: Երբեմն  
դուրս կը մօտեցնէի քեզի եւ կը շնչէի այն խորհրդաւոր բոյսը, որուն մէջ  
կը միաձուլուին կնոջ մարմնին արտաբերած եւ անոր դործած անուշահոտին  
ներշնչանկ երզը: Երջագգեատիդ կերպասին ծալքերէն անդին կը դուրսկէի  
մարմինիդ յուզիչ աշխարհազրութիւնը եւ ըղձանքս կը բարձրանար քու կող-  
մըդ՝ աւազանի մը ստորերկրեայ ակին ջուրերուն մէջ:

Երաժշտութեան ձայնանիւնները կը թաւայէին աւելի բարձր մակար-  
դակի մը եւ անտեսանելի արուեստագէտին սիրային կանչը կը պրկէր ջի-  
դերս:

Յանկարծ սիկարէթդ ճգմեցիր մոխրամանին մէջ, մօտեցար ձայնազիբ  
գործիքին եւ, տեսել վերցնելով՝ դրիդ սկաւառակին սկիզբը:

— Հիմա՞ քեզի համար պիտի պարեմ:

Կախարդող կշռոյթը վերականաւ, դանդաղ ու խորունկ քունէ մը ար-  
թընցող դեղուհիին պէս: Եղանակը, որ արինի կաթիլներու պէս կը ծորէր  
վերաւոր սրտէ մը, կու լար, կը հանդարտէր, կ'աղաչէր:

Ու մարմինդ կը կաղապարուէր եղանակին ելեւէջներուն հետ, բայց  
դո՞ւն էիր այդ երաժշտութիւնը, դո՞ւն կը ստեղծէիր այդ կշռոյթն ու ներ-  
դաշնակութիւնը:

Եւ կը պարէիր՝ օբօրելով ճկուն իրանդ, կը սարսռայիր մահամերձ  
ծաղիկի մը պէս, որ կ'աշխուժանայ յանկարծ մոզական ձայնանիւններու կեն-  
սարար ցօղին տակ եւ ոռնացող յանկերգներու շոյանքով:

Եղանակը լուսց ու վերազարձար տեղդ: Անդիմադրելի ուժ մը դիտ հա-  
նեց տեղէս: Նստայ դորդին վրայ, ծունկերուդ առջեւ: Հանեցի կօշիկներդ  
եւ սաքերդ առի ձեռքերուս մէջ: Երկու ճերմակ աղանիներ բռնած էի ձեռ-  
քերուս մէջ: Անոնց մէջէն կ'անցնէր անզգալի սարսուռ մը: Եղունդներդ այն-  
քան թափանցիկ ու մանր էին, որ կը նմանէին սատափով եւ մարգարիտով  
զարդարուած գեղօրներու:

Այսպէս, ստեղծող երկար ժամանակ պահեցի ձեռքերու մէջ: Աչքերդ փակ, ձեռքիս շոյանքնհրուն տակ, Հաճոյքի տխրանք կը բարձրանային երակներուդ արեան հետ: Յանկարծ նայեցար իմ կողմս. մէկիկ-մէկիկ հանեցիր մազասեղաներդ եւ սեւ վարսերուդ Հոսանքը ջրվիժեց տակերէդ վար ու տարածուեցաւ ծունկերուդ վրայ:

Ձեռքերուս մէջ առի մաղերդ եւ գէճքս թաղեցի անոնց մէջ ու ներշնչեցի անոնցմէ արտաբերուող մուշկը եւ Հողիս անէպաւ անոնց գիշերային վիճերուն խորը:

Երբ գլուխս վերցուցի, ձեռքերդ տարածած՝ կիսափակ աչքերով կը նուարկէիր երանութեան ծովուն վրայ: Երթնեքս փակցուցի շրթներուդ եւ թարթիչներդ երկար պահեցի անոնց մէջ: Ձեռքերդ պըկուեցան, մարմինդ սարսրացաւ եւ մտտեցաւ ինծի: Պլուխդ հանգչեցաւ ուսիս վրայ: Թեւերս անցուցի մարմնիդ շուրջը եւ սեղմեցի կուրծքիս: Սիրտդ կը տրոփէր խանգարուած ժամացոյցի մը պէս եւ երկու ստինքներդ կը բարսխէին յոգնած աղանիւներու պէս:

Բացիր աչքերդ, նայեցար շուրջդ: Բերանդ կը ներկայանար Հասուն նուտի մը պէս: Երթնեքս մտտեցուցի: Չհեռացար սակոյն: Հասկցայ, որ իմս ես յաւիտեան:

Յետոյ ոտքի ելար ու մեկնեցար:  
Եկած էիր վերջապէս:

~\*~

Քառեցի դէպի ցած կամուրջը, որուն տակէն կը հոսէր քարայրէն ժայթքող ջրնը ջուրը: Հոսող ջուրը կը խորհրդանշէ կնոջ հոգին՝ խուսափուկ, խորհրդաւոր, կասարգող եւ անթափանցելի:

Դարձայ ետիս՝ ձեռքէդ բռնելու համար, բայց չկայիր:

Որքան պիտի ուզէի, որ այդ պահուն քովս ըլլայիր, փափուկ ու զգալուն ձեռքդ ձեռքիս մէջ, եւ նստած այս հեամենի քարին վրայ, միտսին դիտէինք ջուրին գահավիժող բիւրեղը:

Նայեցայ շուրջս, կարծելով, որ ապաստանած էիր խնձորենիի մը շուքին տակ: Նայեցայ աւելի վեր, քարայրին կողմը:

Ինչո՞ւ մինակդ գացած էիր մինչեւ Ատոնիսի քարայրը, դուն, որ չէիր սիրեր առանձնութիւնը: Հոն ժամադրուած էիր մէկու մը հետ: Ատոնիս քեզի կը սպասէր Հազարամեակներէ ի վեր: Կարծիր շրջադէտող կը բռնաբարէր քարայրին մութ երակը: Ատեն մը հոն մնացիր անշարժ, սպասելով հաւանաբար, որ դուրս դայ երիտասարդ որոտը: Ոտքերուդ տակ գահավիժող ջուրը կը յորդեցնէր այն առազանը, ուր Աֆրոտիթէ լուսցած էր իր աստուանային մարմինը:

Նայեցար շուրջդ, ձեռքով նշան քրիւ ինծի ու կորուեցար քարայրին մէջ: Երբ դուրս եկար՝ մերկ էիր Աֆրոտիթէի պէս: Կրկին ձեռք քրիւ ինծի եւ պահ մը անշարժ մնացիր, որպէսզի դիտեմ մերկութիւնդ, յետոյ նետուեցար առազանին ջուրերուն մէջ, ուր մնացիր բաւական երկար: Յետոյ ժայռին մէջ փորուած աստիճաններէն մազլցեցար վեր ու կրկին անհետացար քարայրին մէջ եւ հոն մնացիր երկար:

Ատոնիս քեզի կը սպասէր եւ անոր սիրոյն արժանանալու համար մարմինդ լուսցած էիր Աֆրոտիսի նուիրական ջուրերուն մէջ:

Կանչեցի անունդ բաղձաթիւ անդամներ եւ ձայն արձագանգեց քարայրին ընդերքներուն մէջ, բայց չյայտնուեցար:

Սակայն չէի մտահոգուեր, որովհետև առանձնութիւնը չէի սիրեր եւ շուտով պիտի վերադառնայի ինծի: Ի՞նչ պիտի ընէի այդ մութ ու խոնու քարայրին մէջ, դո՛ւն, որ չէի հասկնար քարերու, ծառերու եւ ջուրերու լեզուն:

Բայց կ'ուշանայիր: Անմիջապէս ուղի ելայ եւ բռնեցի այն ճամբան, որ ապառաժին կողմէ կը մազլցէր մինչեւ քարայրին երախը:

Յանկարծ որոտում մը ցնցեց գետինը եւ, ապառաժին կողմէ խոշոր ժայռեր բաժնուելով՝ թաւալեցան դէպի հովիտը, կարծէք լեռը վերածուած ըլլար հրաբուխի:

Հակառակ թաւալող ժայռերու ապառնալիքին, կանգ չառի: Երբ հասայ քարայրի մուտքին, ընութիւնը հանդարտած էր: Ժայռերու կոյտի մը տակ նշմարեցի կարծիք շրջադեհատչ: Բայց դուն չկայիր, բարեբախտաբար: Քիչ մը անդին նշմարեցի ժայռերու ուրիշ կոյտ մը: Տեսայ ճերմակ ոտքը, որուն վրայ արեան բիծեր կային: Ինչպէ՞ չէի խոսուչի մը մէջ եւ, հակայ ժայռ մը մէկ կողմի վրայ պտուկելով՝ կազմած էր կամուրջ մը, որ քեզ պաշտպանած էր միւս ժայռերուն անկումէն: Ուժերս տասնապատկուած էին, տեղափոխեցի քանի մը խոշոր քար եւ յաջողեցայ մարմինդ հանել կամբջացած ժայռին տակէն: Մատնէրս կ'արիւնէին, բայց ուրախ էի, որովհետև ողջ էի: Ստացած էի թևքեր վէրքեր եւ արեան բիծեր չորցած էին ճերմակ մորթիդ վրայ:

Քեզ առի բազուկներուս մէջ եւ վազելով հեռացայ այս շարագուշակ քարայրէն: Կուրծքդ կը հնար եւ թեթեւ աւաշներ կ'ելլէին շրթներուդ քայքայածքէն: Մարմինդ պտեղեցի ջուրին եզերքը, լուացի վէրքերդ: Աչքերդ քայքայի, նայեցար ինծի, յետոյ դուրսդ դարձուցիր քարայրին կողմը ու հազիւ լսելի ձայնով կանչեցիր.

— Ատոնի՛ս... Ատոնի՛ս...

— Մոռցիր Ատոնիսը, — ըսի, — այսուհետև դուն ինծի կը պատկանիս, ո՛վ Եւրիտիկէ, դո՛ւն, որ ուղեցիր աստուածանալ՝ նուիրական գետին ջուրերուն մէջ մկրտուելով:

Սրեք հազար տարի սպասեցի, ո՛վ Աֆրոտիթէ, որպէսզի վերակենդանանաս ու կրկին գեղեցկացնես աշխարհը:

Եղայ յանդուգն ալքիմիագէտը: Երկինքէն գողցայ կրակը՝ զարգարելու համար նայուածքդ, յափշտակեցի ծիրկաթիններուն սպիտակութիւնը եւ դայն տարածեցի մորթիդ վրայ, գիշերները դատապարտեցի խաւարի, մագերջ ներկելու համար խաւարով: Ճակատիդ վրայ գետեղեցի կիսալուսինը եւ շրթներդ ներկեցի քրմուհիներու արիւնով: Պորտիդ վրայ գետեղեցի այնպիսի՝ ազամանդ մը, որուն լոյսը կը գերազանցէ օրիններու փայլը: Մատներդ գեղեցկացնելու համար՝ արժատոխիլ ըրի եղեմի պարտեզներուն բոլոր շուշանները: Կոնքերուդ կորութիւնը հիացում պատճառեց հանճարեղ քանդակադործներու: Եւ երբ կը մերկանաս, աստղերը կանգ կ'առնեն երկնակամարին վրայ եւ կը փառաբանեն քեզ, եւ Աֆրոտիթէ նախանձէն կը ստիպէ իբր ամուսնոյն, որպէսզի իր զօրաւոր բազուկներով ցնցէ լեռները՝ քեզ թաղելու համար անոնց ծանրութեան տակ:

Բայց մենք ձեռք ձեռքի բունած՝ պիտի մաղցինք լեռներն ի վեր, որովհետև դտած ենք աստուածները յազթելու գազանիքը:

Շնորհիւ քեզի կրցանք տեսնել Աֆրոտիթէի մերկութիւնը եւ չենթարկուի մահուան:

ՆՈՒՊԱՐ ՉԱՐՈՒՏԵԱՆ



Յ. Պ Է Ր Պ Է Ր Ե Ա Ն

**Դ Ա Յ Տ Ա Ն Կ Ա Ր Ն Ե Ր**

I.—

Նարնջագոյն տարածութիւն  
անպարագիծ :  
Բլուրները աւագի՛  
կը խոյնարարիւն,  
կը կազմուին  
շարունակ :

բարակ աւագ  
մը կը սահի՛  
ժամանակի  
սովորական  
եւ անեքեք  
ըմբռնումով :

Մերկ ու լուռ է  
անապատը .  
ոչինչ ունի  
ամչնալու կամ պահելու .  
Ֆարնջագոյն  
աստուած մըն է,  
իմքնաբաւ եւ  
իմքնամտաց :

II.—

Այստեղ՝ միայն  
ժայռը գիտէ  
հովի լեզուն :

Դեմքը քերթուած  
 քարերում՝  
 աղաւաղուած  
 զիմագիծն իր  
 արդէն պահել  
 կը փորձէ :

Մութ խոռոչներ  
 ժայռին վրայ,  
 կը պատմեն խուզ  
 ժամանակներու  
 մասին,  
 այդքան տարբեր,  
 այդքան օտար  
 իրարմէ :—

Նոյն՝ ժամանակն էր ծովային  
 ձայներու եւ  
 անուններու ջրային :  
 Ապա՝ տակաւ  
 լռյսերն էին գիւժ ողորդ  
 եւ հովերը հեռակայ :  
 Ապա չէր յիշեր :  
 Ապա չէր յիշեր :  
 Բարակ աւազի ժամանակն էր՝  
 երագներու բուստրացոյ,  
 ձուկերու եւ  
 քոչուններու բրածոյ,  
 որոնք մարմնին մէջ էին,  
 եւ այնտեղ միայն  
 պիտի սահէին՝  
 իր ժայռային յիշողութեան  
 խանգարուած :

Մովը իջած էր,  
 քաշուած էր դանդաղ  
 ժայռային մարմնին՝  
 պահած հետքերն անհանգի,  
 հետգիտէ վար իջնող  
 գիծերով ազի... :

Ինք՝ ժամացոյց էր  
 ազի :

III.-

Ես՝ այստեղ եմ:  
Վարը  
    հողի-աւազի  
տարածութիւնն է ազի,  
ուր միմիայն  
հովը գիտէ  
ախտմութիւն գրել:

Հովերէն բշուած  
փուշերու խութներ  
կաւ գան քունելու  
քարային մարմնիս:

Իսկ մազէզը  
միտնաւս վրայ  
պաղ սարսուռ մը արձանագրած  
կը սահի:

IV.-

Այս ժայռային  
ու քանձրացեալ  
կռլր կենցաղէն  
ինչպէ՞ս դուրս գալ:  
ժամանակները անցեալ  
միտնաւս մէջ  
հետեւերն իրենց պահած են:  
Յիշատակներ կը շարժին:

Հեռուն՝ հիմա  
գոյութիւնդ է,  
քիչ մը տարբեր,  
քիչ մը նման  
իմնիս:  
Պէտք է ապրիլ,  
պէտք է կրկնել  
փորձառութիւնը նախկին...  
Եւ հետապնդել  
հետեւը ներքին:

Պէտք է լսեմ  
ձայնդ զերմ:  
պէտք է գգամ

շունչդ գեմքիս  
վերստին,

որ ըլլաս եւ  
սպրի՛ս կրկին:  
... Առանձնութեանս  
սարսափը քանդեմ:

V.-

Որքերու մերկ  
մարմիններն են,  
դաշտերուն մէջ երկաբաժ —  
ուրում  
եւ տարօրինակ:

Հողը բացուած է ճիւղհալէն  
եւ սարսաժ՝  
իր միւսերուն մէջ սուգուող  
շուրի սառն հոսանքէն:  
Երախն անոր  
խոցելի եւ անօգնական  
մտերմութիւն մը ունի:

Առուտուն՝  
ցօղը կը սատի  
որք-ասունկերուն  
եւ խորկանքներ կը ստեղծէ,  
սերնենքուն յիշատակը  
հետգնեստէ կ'արքնայ:  
Անոնք, կարծես,  
երբեւիցէ չեն եղած:

Տխրութիւնը կը շաղուի  
լուսքեան մէջ հասունցող:

Մէկը արդէ՞  
կը կրակէ բռնունմերուն:

VI.-

Մինչեւ ե՛րբ հաս  
հովը պիտի  
ազաւազէ  
դեմքը գաշտին:

Աւագը արդէն  
կը փորձէ փոխել  
սահմանները  
մեզի ծանօթ :

Դաշտը եիմա կը կարծէ,  
թէ քարտէսը իր մարմնի  
միշտ այս ձեւով գծուած է,  
եւ կը փորձէ փախցնել  
յիշողութեան  
խանգարում  
պատահիկներն անհանգիստ :

Գուցէ փոխուեցայ,  
երբ պառկած էի...  
Գուցէ դաշտը չկրցաւ  
իր մարմինը ծաղկեցնել  
վերստին  
(անապատը սրբեց գայն) :  
Զեմ գիտեր, բայց  
նման հազար անձկութիւններ  
ես չեմ կրնար ամէն օր,  
միսերուս մէջ պատուարել  
եւ շնչել... :

VII .-

Ժայռը՝ դէմքի  
պէս պիտի բացուի,  
եւ խոռչներ՝  
աչքերու պէս,  
յանսխամբը մայն  
եւ մարդկային  
վախերը մոյն պիտ՝ առթեմ :

Աւագուտքի  
հոգմը պիտի  
փորձէ ջնջել  
դիմագիծերը ժայռի :

Հովը, արդէն  
շեշտակի  
բոլոր գիծերն կը հարթէ :

Պիտի փորձես  
խոչարիտդ  
լեցում աւագը մաքրել,  
փրկել բերանդ այս չոր  
կլիմայէն աւագի,  
մտնալ գիծերը ազի՝  
ժամանակին ջրային

Եւ ... խօսի՛լ :

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

### ԱԶՆԱԻՈՒՐԻ ԶԱՅՆԸ...

Վերին սաս-ասերճին պարիներուն, օտար լիզուներով արտայայտուող և միջազգային համարումներ նուաճած մեր գրողներն ու արուեստագետները աւելի մեծ շահագրգռութիւն մը ցուցաներին իրենց հայկական բախտին նկատմամբ և հարաւոր բոլոր առթիւները օգտագործեցին ի նպաստ հասարակած ու կուսակազմած մեր ժողովուրդին գաղտ միջազգայնացնելու միտող աշխատանքներուն, իրենց խօսքով ու երգով, միջազգային լարաններու մէջ ունեցած իրենց առնակնալ ելոյթներով:

Յորովոր Շարլ ալ հօլի միահամու իշխանութեան օրօք իր ձայնով Ծրանած նուաճած և նոյնն բանի ֆրանսացիներուն կողմէ Շարլ Երկրորդ վերանուանուած Շարլ Ազնուորդ, Ուիլիւմ Մարտիանէն իտալ, միջազգային շուկայի վրայ համառուած այն արուեստագէտը եղաւ, որուն արտին լարունակ կոտորոց իր ժողովուրդին հասարակաց վերջը, Քուրթ բարբարոսներուն կողմէ լարուած միլիոններուն ցուր և հայրենիքին բռնազրտուած մէկ արտածութեան ցուր, և Ծրանայի թէ միւս երկիրներուն մէջ, իրեն հետ հարգադրոյցի նստած բոլոր Բաթմիկիներուն հետ խօսեցաւ այլ մասին և արծարեց մեր իրաւունքներուն հարցը, զայն համարելով աշխարհի առեւ գրուած լուծիլի ինչերներուն աճեցնելու մարզկայինը:

Յատկանշական է Փարիզ Օլիմպիոս որսէին մէջ իր յայտարարէն կատարած շնորհքը, ապրիլ-հունիս 1900-ի ինկամի երգին յանկարծակիս պոսթիւմը, որուն անդրադարձը անկարելի չէ գտակերացնել: Արուս լեցուցած բազմազգի արուեստները յայտարարին վրայ արձանագրուած երգերը անկիրքիւս կնիւն էին հարկաւ, և կրնային և իրաւունք ունենի սուրի ու ծառանայ որեւէ միջամտութեան դէմ, ըստ այնպէս Ապրիլի էր և սրը Չի, ու Ազնուորդի հողին ո՛վ դիտէ ի՛նչ դժոխքներ կը կազմուէին այլ պաւուն, կ'ազգայնէին ի՛նչ վերջեր, որ ստիպեց իրեն քանզի օրինակահետեան պատարարը, ու պոսալ:

Տաւակն եմ ես այն ազգին, որ անշիքիմ կը հմնջի...

Ապրիլեան յանախանքներէն բխած ցուեր



կրողները նման իրաւունքներ ունին, երբ մտնուածազ ուրիշ իրաւունքներ նուաճելով կը ներկայանան մարդոց, առաջանով կը ներկայանան, արուեստով, ծառայած բացարձիկ նմայեցնելով, ինք մը համապատասխան խոսքով, մարդկայնութեան ու վարակիչ լուծելով սնելու շարժներով, ինչպէս է իր՝ երգիչ Ազնուորդի, երգչուհի Ազնուորդի, բանաստեղծ Ազնուորդի, լարժանգորային սոսը Ազնուորդի գործած:

Ազնուորդի ելոյթները, վերջինները թէ ստեղծները, ձեռնիկ ինկամի երգին օրինակը և անկէ բխող հեղաշրջութիւններն ու յանձնարարութիւնները լուծելու կոչեր են աճեցուն, մտնուածազ սեռեց, որոնք ծանրակշիւ խօսք ունին, համայնաբար ձայն ունին, աճեցունս զոյն ունին, որպէսզի նոյն սպառնութեամբ լարեն իրենց կորուստիները, իրենց ժողովուրդին մեծ հարցերուն միջազգային հանդման օգտին, վերջին բուժման, արդարութեան իրաւունքին կենսազարման:

Ապրիլեան սրտառու էլ ելոյթը պատեւ առիթ մը համարելով՝ վերջին լարերուն հետ՝ հետազայն էջերուն կու տանք իր պարտմներէն, յանձնարարութիւններէն ու ստեղծագործակաւ արուեստէն լարք մը նմայեցնել, ու իր մէջ բանաստեղծը արժեւորող Արարած Ալիքեանի յարուածին հասունած մը, որոնք պատիկ դազախար մը կու տան տեսարար ստեղծագործական երկունքներու մէջ գտնուող այս անուարիտ ու բազմակողմանի սազանդին ձայն:

### «ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԵԱՆ ՄԸ ԶԱՅՆԸ»

Ծ Ապրիլը նոր հանգրուան մը եղաւ աշխարհաճոշակ Շարլ Ազնաւուրի համար: Սկսաւ Ազնաւուրի ամէնօրեայ ելլալիս Օլիմպիայի բնակն եւ, վեց շարժուան պայմանագրութեամբ, ճիշտ-եայ երկիրը եկաւ ապացուցելու, թէ այսօր, առաւել քան երբեք, անխախտ չեն հարկայութիւն է երգարուեստի բնմահարթակին վրայ, երբեք «չէ հինցած», որովհետեւ իսկական տաղանդները մընայուն արժէքներ են:

Եւ ինչպէս միշտ, այս անգամ եւս, Քրանսական ժամուրդ, պատկերասփիւռն ու ձայնասփիւռը լայն տեղ տուին Ազնաւուրի: Յատուկ հարցադրոյցներ, յօդուածներ եւ ելլալիս արձագանգող դրութիւններ լոյս տեսան բազմաթիւ թերթերու, ինչպէս՝ «Էր Մանս տը լա միզիէն», «Էր Փուան», «Փուս տը Ֆրանս», «Ֆրանս-Սուար» եւ այլ հըրատարակութիւններու էջերուն:

Այս առիթին յատուկ փայլ տուաւ Ազնաւուրի «Ինքնակենսագրութիւն» անուն նորագոյն ձայնագրակը, որուն պարզած տունակներէն մեկնելով՝ յօդուածագիրները լայն տեղեկութիւններ հաղորդեցին աշխարհաճոշակ հայ երգիչին ծնողքին, ընտանիքին ապրած ողբականին եւ թրքական գեշնէն ճորտարած հայերու դժուակ անցեալին մասին:

«Ֆրանս-Սուար» Ապրիլ 8ի թիւին մէջ, ժազիկ Գարթիէ լրիւ էջ մը յատկացուց Ազնաւուրի նորագոյն ստեղծագործութեան, հետեւեալ վերտառութեամբ. «Միջազգային դարձած, միշտ փրանսացի ողն աւ ծուծով, բայց հայ հագիով, Ազնաւուր, այսօր, նուազ կը հաւատայ յամառութեան, քան նախապարհին»:

Ապա, յօդուածագիրը կը ներկայացնէ «Չարգարար թուրքերէն ճորտարած եւ 1923ին Փարիզ հասած» Ազնաւուրի

ծնողքին գողթականի կեանքը, մաքառումները, դժուարին օրերուն յաջորդած համեմատաբար տանելի պայմանները, Ազնաւուրի ինքնակենսագրութիւնը եւ յօդուածը կ'եզրափակէ «Փոքրիկ Շարլին հետեւեալ խօսքերով».

«Երբ կը վերանայիմ կեանքիս՝ կը խորհիմ, թէ ամէն ինչ գրուած էր ի յաւապագումէ... Երեւի հարկ էր, որ այս խեղճ, անշուած, հալածուած, ջարդուած ժողովուրդին ծոցէն օր մը ծնէր փոքրիկ տղայ մը, որուն ձայնը կարեւար բարձրանալ համայն աշխարհի մէջ: Խորհիմ մէջ, ես ա՛յլ եմ՝ փոքրամասնութեան մը ձայնը: Կեանքս իմաստ մը ունի: Պէտք է, անկասկած, որ այս ժողովուրդը մտադրուած մեռնի»:

### «ԿԵԱՆՔՍ... ԵՐԳԵՐՈՒ ՇԱՐՔ ՄԸ»

Շարլ Ազնաւուր Օլիմպիայի մէջ ունեցած իր ելլալիս արձագանքներէն: Բայց, այս անգամ, ան պէտք ներկայանայ այցեստմտով մը, զոր հրդէլ մը բնաւ սովորութիւն չունի ցուցադրելու. ատիկա իր «Ինքնակենսագրութիւն» է:

56 տարեկանին, երգարուեստէն ներս 33 տարուան ասպարէզէ մը ետք, Ազնաւուր իր վաստակին վրայ կ'աւելցնէ իր սեփական կեանքին պատմութիւնը:

Յիշելով իր մանկութիւնը՝ կ'ըսէ. «Աչքերս բացած եմ տխուր կանկարասիներով սննեակի մը մէջ. Մէսօիէն ըր Փրէնս փառոց, Լատինական քաղ, այսինքն՝ միջավայրին մէջ ա՛յն երգիչներուն եւ արուեստագէտներուն, որոնք անվաղորդայն անցեալ մը ունէին, սքանչելի մարգիկ, Բիլ մը Փանթէզիսթ, որոնք ուսներէն եւ ապա հայերէն կը խօսէին...»:

Շարունակելով, Ազնաւուր կ'անդ-



ՀԱՅՐԵՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԻ ՔԱՆԴԱԿԱՆՈՐԾՈՒՄԻ ԱՐՈՒ ՄԻԼԻՔԵԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՈՑԻՆ ՄԻՋ.

**ԵՒ... ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹԵԱՆ ԵՐԳԸ**

Հինդարթի 24 Ապրիլի գիշերը վայր՝ Փարիզի նշանաւոր Օլիմպիան է Բեմին վրայ՝ 9 Ապրիլէն սկսեալ եւ վեց շաբթուան պայմանադրութեամբ այս ժողովրդային Հանդիսարանը դրաւած է «Ինքնամարմին հսկան» Ծարչ Ազնաւուրը:

Ճրտնական երգի մեծահամբաւ դեպքանը յանկարծ կ'ընդհատէ իր յայտագիրը: Անսկիւպի մատնուած՝ Ազնաւուրի ունկնդիրները կը սպասեն այս բացառիկ վերաբերումին Համազատասխանող գեղարուեստական պարզեւին եւ, յանկարծ, Ֆրանսայիներուն «Երկրորդ Ծարչ» կը յայտարարէ. «Այսօր, 65ամեակն է մեր ճանապարհորդում, հայ ժողովուրդի մէկուկէս միլիոն ճանապարհորդում, որոնք գոհուեցան վախճարի արիւնքում: Գիտէ՛ք, որ ես այ հայ եմ: Որպէսզի չմոռանմք անոնց յիշատակը, այս առիթով, յայտագիրէն դուրս պիտի ելլեմ «Անոնք ինկան» գործու...»

Անսխալեթաց յուզումի արիւրը, անբարոյանելի ելեկարական Հոսանք ժը ինչպէս՝ կը խոռովէ բոլոր ներկաներուն ողջ հուժիւնը: Եւ Ազնաւուր կ'երգէ. Եղեռնի Յուանակին առիթով յօրինած իր երգը կը հնչէ անզամ ժը եւս, այս անգամ Օլիմպիայի նշանաւոր բեմէն, իրրեւ ողբկոչում Եղեռնի Յուանակի:

Եւ երգին բառերուն Հեա Ազնաւուր կը ներկայանայ աշխարհին, յիւեցնելու Համար, որ չի կրնար ամբողջ ժողովուրդի մը նահատակութիւնը մոռցուել, իսկ յախճարուած Հայապատկան Հողերը կը սպասեն իրենց պատմական ժառանգորդներուն:

Կ'աւարտի երգը, բայց ստեղծուած յուզումի արիւրը առաւել թափ կը ստանայ եւ սրահին մէջ Հաւաքուած բազմազգի Հանդիսականները կը ծափահարեն իր ժողովուրդին նահատակութիւնը մոռացումէ փրկելու ելած ազնաւորեանք ելոյթը:

բաղաւնայ իր անցեալին եւ վերջակէտ չի գնոր սպարէզի մը, որ իրեն տուաւ ամէն բան, եւ որ ամէն բան կրնար խլել իրմէ: «Յարդ երգած էի միայն սէրը: Բայց առօրեայ կեանքին մեկնարանն եմ նաեւ: Այսուհետեւ, նաեւ պիտի խօսիմ անո՛նց հաշուոյն, որոնք կը տատայիմ: Մեր դարաշրջանը ժամանակն է ամէն տեսակի ցաւամենքու, նաեւ շրջանը՝ բոլոր տեսակի փոփոխութիւններու: Անոնց բարբիւն արձագանգ պիտի համղիտանամ...»:

Տառագողներէն մէկը, օրինակ, հայերն են: Ազնաւուր ինքն իր մէջ կը կրէ իր ժողովուրդին ջարդը, առանց վրէժիներական ողբի. «Մէկ բան կը պահանջեմ քուրբերէն. թող ընդունին, որ այդ ջարդը տեղի ունեցած է: Այն տունն, ես անձամբ պատրաստ եմ սկսելու տիտիլը»:

(«Էլ Փուան»)





\*\*\*

- Ի՞նչ է ձեր կեանքին նպատակը:
- Մարդուն միակ նպատակը պէտք է ըլլայ սպրեւելու ջանքը:
- Կը վախճա՞ք ծերութենէն:
- Անշուշտ: Դեռ շատ ըսելիք ունենալու զգացումով ապրող մարդուն համար՝ ժամանակը մեծ նշանակութիւն ունի:
- Փոխուա՞ծ էք վերջին տարիներուն:
- Ես՞տ: Աւելի մարդ եղած եմ, քան արուեստագէտ:
- Ի՞նչ բանի կը վերագրէք արուեստի մէջ արձանագրած ձեր յաջողութիւնը:
- Քերեւս այն իրողութեան, որ շահագանց շատ կ'աշխատիմ:
- Սնույ եղա՞ծ էք քնու:
- Զէ՞ք կարծեք, որ միայն անմիտները կրնան սնույ ըլլալ:
- Ի՞նչ կարծիք ունիք սիրոյ մասին:
- Այն արուեստագէտը, որ չի սիրեր ու չի տառապիր՝ չի կրնար լրջօրէն պնդել, թէ իրական արուեստագէտ է:

- Ի՞րն է ձեր մեծագոյն առաքինութիւնը:
- Անկեղծութիւնը: Եւ այդ մէկը կը պահանջեմ բարեկամներէս նաեւ:
- Ի՞նչ պարագաներու տակ ուստ մը պիտի խօսէիք:
- Երբ անկէ կտրուեմ ունենար մարդու մը փրկութիւնը:
- Ի՞նչ է ձեր կեցուածքը երիտասարդներուն ու ձեր սոցիալական կեանքը:
- Նման հարց գոյութիւն չունի: Երիտասարդներուն ըսելիք չունիմ: Երիտասարդութիւնը շատ զգայուն է այսօր: Դիւրին չէ երիտասարդներուն խրատ տալ, որ խուսափին սխալներէ: Պէտք է սխալներ պարծեն, որպէսզի կարենան օտարական փորձատութեամբ հասուննալ:
- Միշտ արուեստագէտի՞ մը պէտք կը զգտնէք կեանքը:
- Կը սիրեմ ամէն ինչ, որ արուեստ է, ամէն ինչ, որ կեանք է: Ուրեմն՝ արուեստագէտ եմ:
- Ի՞նչ բանը ամէնէն աւելի ազդած է ձեր կեանքին վրայ:
- Հայ ըլլալու: Երբ մարդ տարագիր է եւ կը պատկանի փոքրամասնութեան մը, որ շարժարունեցաւ ու ջարդունեցաւ թուրքերու կողմէ, ուրիշ բանի պէտք չունի եւ ուրիշ բան չի կրնար ըլլալ: Օտար երկրի մը մէջ, ուր խօսուած լեզուն անծանօթ է զեզի, ստիպուած ես շատ մը բաներու հետ հաշտուիլ: Դադար Ժողովուրդի մը ամէնէն մեծ ուժերէն է, բայց միտմտմանակ՝ մարդկային մեծագոյն ողբերգութիւններէն մէկը, երբ դադարեցնենք նախապէս շարժարանքներու ու ցեղասպանութեան ենթարկուած ըլլան:
- Եւ մինչ տեսակցութիւնը կ'աւարտի մեծ արուեստագէտին հետ, ան՝ արուեստագէտ Ազնաւուր կը բարձրացնէ իր ծայրին շեշտը, ծածկելու համար իր ժողովուրդին քնացնելու համար այրած իր անհուն դատութիւնը: Եւ այդ եղբրական պահուն, մեծ կը հիանալէ մեր դիմացը գտնուող արուեստագէտին եւ, մտնուանդ՝ մարդուն վրայ:

(«Ռատիօ Թեխասիսի», Աթենք, 1974, 23 Յունիս)

### Մ Ի Ի Ս Զ Ա Ր Ց Ա Ջ Ր Ո Յ Ց Ն Ե Ր Է Ն

Հայերը եւս կը հանդիսանան մարդկային հարց մը: Անոնց նուիրած եմ իմ «Անոնք ինկան» երգը: Անոնց հայրերը վայրագ ջարդերու ենթարկուցան, իրենց հայրենի հողերէն տարագրուեցան եւ մարդկութիւնը մեռաւ իրենց ժամանակ: ...Եւ անձնապէս զոհերէն մէկն եմ այդ ողբերգութեան: Պարագաններս զոհ գացած են Թուրքիոյ մէջ պատահած ջարդերուն:

Բայց պէտք է անկեղծօրէն բացուիմք այլեւս: ...Անձնապէս ես պատրաստ եմ հայերուն ու Թուրքերուն միջեւ միջնորդի դեր կատարելու: Այս իմաստով մէկէ աւելի անգամ լուր ղրկած եմ Թրքական կառավարութեան, բայց տակաւին պատասխանի կը սպասեմ: Իրենց կարգին, Թուրքերէն եւս կը պահանջուի, որ մաքրուին իրենց հայրերուն սխալներէն եւ ըմբռնեն Հայերու զգացումները: Օրինակ, անակնկալի եկայ Մարտի 1-ի մէջ, ուր մեծ է Թուրք ուսանողներու թիւը, երբ հանդիպեցայ Թուրքիկներու, որոնք կ'ըսեն, թէ Թուրքերը իրենք զոհ գացած են հայերուն, եւ թէ՛ ջարդերը գործադրուած են Հայերու կողմէ, Թուրքերու դէմ եւ ոչ թէ հակառակը: Երեւակայեցէք, որ նման արամարանութիւն մը կը տիրէ պատմական ճշմարտութեանց շուրջ:

Եթէ պատահի, որ Հոռոժի կամ Փաքիզի կամ ուրիշ երկրի մը Թուրք ղեկավանը օր մը, Ապրիլ 24-ին, հայերու դէմ գործադրուած Թրքական ջարդերու նահատակներուն յիշատակին տօնիմով, մասնակցի հայերու սուգին եւ անոնց ցոյցերուն, անպարման դիւանդիտական սքանչելի քայլ մը առած կ'ըլլայ:

Իմ կեցուածքներովս կամ երգերովս, մա'նաւանդ «Անոնք ինկան» երգով, ես կ'ուզեմ աշխարհին ծանօթացնել հայ ժողովուրդը, իր մարդկային բոլոր գիծերով:

ՇԱՐԼ ԱՋՆԱՒՈՒՐ

(«Հատուտ» — 1977)

Եւ կողմնակից չեմ արեւահեղութեան: Բայց նաեւ չեմ կրնար դատաւարանի այն երիտասարդ հայերը, որոնք բռնամիջոցի կը դիմեն: Իմ ցեղիս երիտասարդութիւնը կը պայքարէ 85 տարիներէ ի վեր՝ Հին երազի մը իրականացման համար: Երիտասարդ հայերը կը պահանջեն, որ պատմութիւնը պաշտօնապէս ճանչնայ հայերու հանդէպ 1915-ին գործադրուած ցեղասպանութիւնը:

Արդ, հակառակ միջազգային կազմակերպութիւններուն ուղղուած կոչերուն, ազգերը մերժեցին հետաքրքրուիլ մեր վրայ գործադրուած սպանդով: Պատճառը այդ էր, որ յուսահատ երիտասարդները որոշեցին գործի անցնել:

Ոչ մէկ հայ պիտի կարենայ խաղաղութեան մէջ ապրիլ այնքան տուն, որ մարդկութիւնը չընդունի, թէ Հայաստանը բռնազրաւուած է: Երբ զերմանացիները ջարդեցին Հրեաները, Իսրայէլի պետութիւնը հատուցում ստացաւ, իսկ հայերը պարզապէս կը պահանջեն, որ իրենց մեռելները պատմութեան կողմէ մոռացութեան չենթարկուին: Ոչ մէկ հայ պիտի կարենայ մոռնալ հրոսակներուն կողմէ կատարուած սարսափելի ջարդերը, որոնցմէ միայն բեկորներ ճողպարեցան:

ՇԱՐԼ ԱՋՆԱՒՈՒՐ

(«Լը Փուսմ» — 1980)

Շ Ա Ր Լ Ա Ջ Ն Ա Ի Ո Ի Ր

**ՊԱՐՁ Է, ՍԻՐՈՒՄ ԵՄ ՔԵՋ**

Եթէ սուկում եմ ես, որ էլ քեզ չեմ տեսնի,  
 Եթէ անխոս կեանքն է ուղեղիս մէջ գնում,  
 Եթէ ամբողջ գիշեր խեղճանում եմ անհուն,  
 Եթէ կասկածն է սեւ հմլում սիրտս գազանի,  
 Պարզ է, սիրում եմ քեզ,  
 Պարզ է, սիրում եմ քեզ:

Եթէ քա մասին եմ ես մտածում յաւիտ,  
 Եթէ կուսն ես օրուայ երազներին քառք,  
 Եթէ իմ մարմինն է վառում մարմնիդ բոցով,  
 Եթէ տազնապում եմ, քէ խաղում ես ինձ հետ,  
 Պարզ է, սիրում եմ քեզ,  
 Պարզ է, սիրում եմ քեզ:

Եթէ քեզ տեսնելով զգում եմ դող ու ցարտ,  
 Կարում է շունչս, եւ արիւնս սառում,  
 Եթէ խորունկ վիշտն է նուազեցնում հեռուն  
 Եւ այն ցաւը, որ մերթ պատճառում ես անվայթ,  
 Պարզ է, սիրում եմ քեզ,  
 Պարզ է, սիրում եմ քեզ:

Եթէ վիճում եմ իմ սիրուն ու միտքը անվերջ,  
 Կարած քան տարիս քեզնով եմ ես բերում,  
 Եթէ հերիք է ինձ մերթ նայումե՞դ հեռու,  
 Որ լաւագոյն օրուայ յայն է ծնում իմ մէջ,  
 Պարզ է, սիրում եմ քեզ,  
 Պարզ է, սիրում եմ քեզ:

Եթէ խորում եմ, քէ վերջն սկիզբ է գուցէ,  
 Եւ մարմնում, որ դու անտարբեր ես այնքան,  
 Եթէ սիրոյ խօսքեր տառապում եմ անձայն,  
 Քանզի արգելում է նրանց տալ ձայն ու ձեւ,  
 Պարզ է, սիրում եմ քեզ,  
 Պարզ է, սէ՛րս խորունկ:

## ՏՈՒՐ ՄԵՋ ԱՅՍՕՐ

Հատիկը չի ծլում՝ անձրևի չկայ, երաշտ:  
Արևն իր բարկ բոցով լցնելով ցամառն ու հերկ,  
Վաստակն է բնութեան խանձում երակ-երակ,  
Եւ ծարաւած հողը մահանում է անբերք:  
Արօրձեքը լինած ծածկում են փոշով.  
Ցամաքի են հարեր, էլ չի հոսում առուն,  
Եւ մարդկային սրտեր բշուռաւութեան գուժով  
Իրենց այժերը չար երկնէին են յառում:

Ծնրադիր են մարդիկ: Նրանց շուրթն ու հոգին  
Ազօթում են կամաց առ Բարձրեալն հօր:  
Պիղծ ձայներ են ձուլում ազգասների ձայնին.—  
Ջհաց մեր համապագորդ, Հա՛յր մեր, տո՛ւր մեզ այսօր,  
Ջհաց մեր համապագորդ, Հա՛յր մեր, տո՛ւր մեզ այսօր:

Չենք ունենայ մենք հաց, եթէ չկայ ցորեն,  
Չենք ունենայ գինի, եթէ ողկոյզ չկայ,  
Եւ կը մեռնի հողը, որ հիւանդ է արդէն,  
Արեգակը տխուր կը ցոյայ մեզ վրայ:  
Իրենց սոճոյն շուքը կը խաչեն մարդիկ,  
Կմախքացած եզներ կ'ընկողմանեն հեւքոտ,  
Եւ քաֆնած հողը, որ վառուել է սաստիկ,  
Ժամանակից լինած՝ կ'իջնէ փոշու տեսով:

Ծնրադիր են մարդիկ: Նրանց շուրթն ու հոգին  
Ազօթում են կամաց առ Բարձրեալն հօր:  
Պիղծ ձայներ են ձուլում ազգասների ձայնին.—  
Ջհաց մեր համապագորդ, Հա՛յր մեր, տո՛ւր մեզ այսօր,  
Ջհաց մեր համապագորդ, Հա՛յր մեր, տո՛ւր մեզ այսօր:

Անկարելի ոչինչ չենք պահանջում մենք, տե՛ս,  
Հայցում ենք ապրելու իրաւունքը միայն:  
Ուզում ենք, որ ծաղկեն մեր դաշտերը երկէզ,  
Վերադարձրա՛ն Նրանց բարիքը սրբազան:  
Արա նուազ արեւ ու անիլի ամպեր,  
Որ թող հեռու սամի ու կնճռոտի քամին,  
Եւ փայտելով տեսքը մեր դաշտերի անբեր,  
Թող մեր հոգում ծնի յոյսի ծիլը կրկին:

— Տէ՛ր իմ, հայի՛ր նրանց, տե՛ս, խոնարհ են ու հեզ,  
Նայի՛ր նրանց, ահա գլխահակ են բոլոր,  
Ազաշական ձայնով նրանք կանչում են ֆեզ.  
Ջհաց մեր համապագորդ, Հա՛յր մեր, տո՛ւր մեզ այսօր:

Քարդո՛ւ Ա. Ալիֆեմալ

### ԱԶՆԱԻՈՒՐ ՏԱՂԱՆԴ

Ազնաւորի անընկճելի հաւատը նրա ձայնի նման զարմանալի երեւոյթ է, որ պայմանաւորել է նրա անորակելիորէն տոկուն կամքը եւ կեանքում միշտ աշխատելու, վայրկեան չկորցնելու ոգեկան կորովը: «Կեռմէիս սպաքանքը, — ստեղ է նա, — հանգչում է իմ ժամացոյցի սլաքների ընթացքի վրայ»: Արդարեւ, Ազնաւորի մէջ երգիչն ու բանաստեղծն այս սլաքների շուքի պարտուելուն նայելով են ուռնացել, ինչպէս բոյսը՝ իր սեփական ստուերի տեղափոխմանը: Սակայն բոյսի ստուերն անդամ բարձրանում է հողից: Եւ Ազնաւորն իր արժատներն առհասարակ հողի ընդերքի մէջ խորունկ խրելուց յետոյ է, որ իր ստուերի ժամացոյցով կշռաւորել է իր հեւի հեւ աճը: Իսկ այդ արժատները, բանաստեղծի՝ իսկ խոստովանութեամբ, անցնելով Սայաթ-Նովայի տաղերի արզաւանդ թուսաճողի միջով, մերձուում են, կորչում հայ ժողովրդական քառեակների մէջ, որ այնքան սիրելի է ու երգելի նրա հայրը: Ուտի նաեւ, անկասկած, ջուշակեան հայբեմների մէջ, որոնց առողջ, կենսաթրթիւ, Ֆիզիքական սիրոյ մաքրութիւնը փառաբանող յափշտակութեան մթնոլորտում են յնչում Ազնաւորի երգերը: Գուշակի նրման նա էլ «Եանց սերն քաղցրիկ լիայ» երգուելով, երգում է այդ մեծ գրաչումը՝ որպէս վայելք ու գինովութիւն, որպէս յափտեանական երիտասարդութիւն, որպէս զերբազոյն «երկրային սնունդ», ուտի, Գուշակի նման, չի վախենում երբեմն նոյնիսկ չափազանց անկեղծանալուց: Այս վերջին պարագան պէտք է անպայման ի մտի ունենալ՝ յանկարծ պազչառ չհուշակելու համար բանաստեղծի ինչ-ինչ գրացումները, որոնց ակունքն աննախապաշար անմիջականութիւնն է:

Ազնաւորի բանաստեղծութիւնների մէջ արեւոտ արեւելքային է սիրում, տաղնայում, խորհրդածում եւ աղօթում: «Ես լիզուով իմ փրօնացի», — ասում է նա, կարծես ընդգծել ուզելով այս հաստատումը: Եւ հակառակ երգային արուեստի բազմապիսի առանձնայատկութիւններին, նրա ստեղծագործութեան մէջ միշտ ու ամէնուրեք ներկայ է մեծ բանաստեղծը, որի զուրա լեզուն, պատկերների եւ զգայութեան թարմութիւնն ու ընդարձակութիւնը հոգեկան պոթկումների են վերածում նրա երգերը: «Ինձ տըրեցին», «Եւ սակայն», «Պէտք է գիտնայ», «Տո՛ւր մեզ այսօր», «Գնաց ուրիշ սիրոյ հետ», «Յաւերժութեան նախապարհը» եւ այս կարգի ուրիշ գործեր կարող են պատիւ բերել ոեւէ վաւերական բանաստեղծի:

Շարլ Ազնաւորի շույլ ու ազնաւոր՝ ազնուական տաղանդը հայ ոգու կենսունակութեան պանծացումն է համաշխարհային բեմերից եւ ձայնափիւռի կայաններից: Իր «Յաւերժութեան նախապարհ» վրայ հայ ժողովուրդի արտաբերած լուսեղէն ճիշերից մէկը:

Ա. ԱԼԻՔԵԱՆ

Բ. Գ Է Պ Ա Պ Ճ Ե Ա Ն

Պ Ա Ռ Ա Ի Ը

Քոզ քովի իմ Կոզ Կոզի իմ մէջ մէջի  
Մէկ զսեզուած մէկ մարմին  
Օրօրուիով տատանելով ցնցուելով միտքիս  
Իրարու քով իրարու ինչ իրարու մէջ իրարմով

ԶԱՐՅԷ ԽՐԱՆՈՒՆԻ

Արթնցաւ: Եօթանասունը՛հինգ տար-  
ւան աչքերով դիտեց առաստաղը, հին  
յարձանասալէ վառարանը, դիմացի մահի-  
ճը, որ ատենին ամուսնին, իսկ հիմա թո-  
ռոնը կը պտակահէր, զբաղարանը՝ լի  
այլեւայլ գիրքերով, ամուր մը դոցուած  
պատուհանը եւ փեղկերը, որոնց հտեւէն  
կ'երեւէին պարտէղի քանի մը ծառերը,  
մահիճին ծայրը դանուող ամանկեկ օբը-  
ճազոյն զդեռտապահարանը: Մահիճին  
մէջ պտակած տեսաւ անոր միայն մէկ  
մասը՝ ոտքերուն կողմի շրջանակը: Ա-  
տենին փայլուն Էրմէ էր որտի ձեւ ու-  
նեցող շրջանակը: Գլխուն կողմը չկրցաւ  
տեսնել, բայց գիտէր, որ անիկա ալ ժան-  
դոտած է: Ներքնակը, որուն վրայ կը  
պտակէր, չէր կրնար տեսնել, բայց կը  
զրար գոյութիւնը: Կը զգար նաեւ զըս-  
պանակներու հաճելի գիշողութիւնը, որ  
էր մարմինը նուազազոյն դիմադրու-  
թեամբ, տարիներու մտերմութեամբ  
կ'ընդունէր եւ կ'առաջնորդէր դէպի վար,  
դէպի գետին: Տարիներու մտերմութիւ-  
նը կ'արժէքաւորէր ինքզինք: Մարդս  
այլեւս յամառ չէր կրնար ըլլալ: Տարի-  
նէր շարունակ դիմադրէր դժուար էր:  
Հիասթափութիւնն ալ տեսակ մը բարե-  
կամական վերաբերմունք էր:

Վերձակը դանդաղ շարժումներով  
մէկդի հրեց, վեր ելլել փորձեց: Նախ  
սրունքները, յետոյ՝ իրանը թեւերուն  
վրայ յենած: Ահա կը նստի մահիճին ե-  
զերքը, մարմինը փաթթուած կարճ թե-  
ւերով գիշերանոցով մը, կուրծքը կիսա-  
մերկ: Իրանի վերի մասը ուղղաձիգ չէ,  
թեւերը, որոնք աջակցած էին կանգնե-  
լուն, կը հանգչին զիստերուն վրայ: Գը-  
լուիսը վար ծուած է, աչքերը սեւեռած  
զորդին ծայրը, ուր ոտքերը կը հանգ-  
չին: Ձեռքերը ծալած էր: Ձեռքերէն մէ-  
կը ինքզինք միւսէն ազատեց եւ զնաց շո-  
շափել ոտքերը: Մատները ճնշեցին ոտ-  
քին վրայ: Մատներու ճնշումը թողուց  
հետքեր: Բաւական երկար ատեն մը այն-  
պէս թուեցաւ, որ երեւակայական մատ-  
ներ դեռ կը ճնշեն ոտքին վրայ եւ ան  
կ'ախորժի այդ ճնշումէն, չ'ուզեր մոռ-  
նալ զայն շուտով: Ձեռքը վերստին բարձ-  
րացաւ, կանգ չառաւ միւսին քով, այլ  
դնաց դէպի աւելի վեր, թառեցաւ Էմմա-  
տին վրայ դանուող արիւմիւնիումէ քա-  
ռակուսի տուփի մը վրայ:

Տուփը արին մէջ առաւ: Ամբողջու-  
թեամբ չկրցաւ, տուփը աւելի մեծ էր,

քան իր ավուր Բայց եւ այնպէս վստահ էր, որ ամուր մը բռնած է տուփը, ավը այդ կարողութիւնը ունի եւ տուփը ապահով է: Միւս ձեռքը միացաւ առաջինին: Միասնաբար եւ քնքշօրէն բռնեցին տուփի վարի մասը, անանկ որ՝ վերի մասը տեսանելի դարձաւ: Վրան կիսաշքի մը սեւ տառերով: «Սմիթսի բարձրորակ գնդասեղները: Մէկ ձեռքով տուփին վարի մասը բռնեց, միւսով կափարիլը բացաւ: Գնդասեղներու սուբ դարձանոտը սլացաւ գէպի թէթը, դանդաղ կերպով: Համբոց մէջ մէջի եւ կողք կողքի իրարու փաթթուած ծուռ ու շիտակ գնդասեղները, որոնք գնդասեղի նուրբ մոխրի մէջ կը պառկէին: Գնդասեղներու ծայրը սեւցած էր, նոյնիսկ կարելի է ըսել, որ անոնք խանձած էին: Կափարիլը զոցեց, ժպտեցաւ գոհունակօրէն: Տուփին յատակը պաղ էր: Այս հաստատումէն ետք, վերստին քոճոտին վրայ դրաւ դայն:

\*\*\*

Հազար անգամ պնդեց, որ սույմային մէջ չամիչ չեն դնել: Ամէն ինչ ալ գիտնալ կ'ուզէ Աղաւնին: Իրբեւ թէ լաւ չէ եղեր շատ չամիչ ուտելը: Ես ալ իրեն ըսի, որ չամիլը կը մնասէ կոր՝ լաւ, բայց խորոված սոխին ի՞նչ կ'ըսես: Պատասխան չտուաւ: Այս անգամ ի՞նչ կ'ուզես, որ հարցնէ: Ի՞՞՞՞ թիչիչ քեզի ի՞նչ արդիւնց: Գիտէ, որ չեմ արործիր ատանկ խօսակցութենէ: Քեզի ի՞նչ բժիշկին ըսածը: Ան շատ բան կ'ըսէ: Իրեն եթէ մտիկ ընեմ՝ ոչինչ պէտք է ընեմ: Պէտք չէ յոգնիմ, շատ պէտք չէ ծխեմ: Ի սէր Աստծոյ, ի՞նչ ըրած ունիմ որ: Ամբողջ օրը կը նստիմ: Եռշաճն աշխատցնել չի տար, կը գուրգուրայ վրաս, անանկ չէ՞: Ի՛հ, երբեմն ալ մէջէն աշխատիլ կու գայ, չի գար, չէ՛: Դուն արդէն շատ աշխատեր ես կ'ըսէ, նոյնիսկ շատ խօսելուս ալ արգելք կ'ըլլայ: Այս բոլորը զիս սիրելուն համար կ'ընէ: Կը պատահի, որ երբեմն խօսիմ,

նոյնիսկ երկու անգամ պատեմ բան մը: Որքան որ ըլլայ, դրազած մարդ է աղջիկս: Կը պատահի, որ մտքին մէջինը արդիւն կ'ըլլայ մտիկ ընելուն: Որո՞ւ չի պատահիր որ: Ամէն բանին շիտակը. սըրամիտ է աղջիկս: Պատահած է, որ նարազատութիւնս չվերջացուցած՝ ան «հասկցայ» թաղը փակցուցած է: Եւ կարծեմ երթալէն աւելի սրամիտ կը դառնայ: Ատենին այդքան շուտ չէր հասկընար ամէն ինչ: Պիտի ըսես, որ քեզ տարիներէ ի վեր կը ճանչնայ, ըսելիքդ յայտնի է, անանկ չէ՞:

\*\*\*

Ատուան ընելիքները պարզ էին: Արթնալ, յետոյ հարուիլ եւ լուարան էրթալ, որ օրուան այդ ժամերուն պարպ կ'ըլլար: Բոլոր եւ փեսան մեկնած կ'ըլլային: Մէկը՝ իր դպրոցը, միւսը՝ իր խանութը: Կը մնար Եռշաճը, որ, իրմէ առաջ խոհանոց մտած՝ օրուան ճաշերը կը պատրաստէր: Պատուը չաճապարեց, մէկը միւսին ետեւէն ծխեց իր գնդասեղները, որոնք ծխախոտներ էին: Տաք տուփը դրպանին մէջ, ձեռքերէն մէկը անոր վրայ՝ մտաւ խոհանոց: Համբուրուցան եւ բարի լոյս ըսին իրարու: Պատուին բերանը նորէն միկրով կը հոտէր: Եռշաճը այս անգամ չզանգատեցաւ, որովհետեւ աւելի լաւ էր մօրը մենթոլ գործածելը, քան թէ ծխախոտ ծխելը: Ատենէ մը ի վեր մայրը խելօքած՝ կը յարդէր բժիշկին հրահանգները:

Կանգալատութեամբ եւ երանդով լըծակցաւ գործի: Ուրկէ՞ միաքը եկած էր մենթոլը: Բայց առժամեայ յաջողութեան մըն էր ասիկա: Կարեւորը ատուան սուրճը եփելն էր՝ օրուայ դազաթնակտար: Նախ եւ առաջ՝ որոշ եւ անփոփոխ ատուանութիւններ ունէր սուրճ եփելը: Սուրճը բրինձի, սպիւ եւ միսի չի նմանիր: Բրինձը եւ սպիւ կրնան ջար ունե-

նալ, միտին մէջ կրնան ոսկորի բեկորներ  
 դառնալ: Քանիցս պատահած էր, որ ճա-  
 չի ատեն մէկը ճշար, բերնէն հանէր քա-  
 րի եւ կամ ոսկորի կտոր մը: Այդ պա-  
 ճերուն ընդհանրապէս փեսան կ'արտա-  
 յայտէր իր զգացումները՝ կարճ եւ ազ-  
 րու ձևով: Վաճառական էր, վարժուած  
 էր կտրուկ խօսելու, յետոյ պոռալէն  
 պէտք չէ ազդուէր մարդ, քանի որ շու-  
 կային մէջ վարժուած էր բարձրաձայն  
 խօսելու: Որոշուեցաւ, որ պառաւը այլ-  
 եւս կ'երակուք չեփէ, իր առաջացած տա-  
 րիքով պէտք չէ որ շատ յոգնէր: Բժիշկն  
 ալ շեշտեց այս կէտը:

Շփոթումներու տեղի չտալու հա-  
 մար՝ տուփի մը վրայ գլխատառերով  
 «ՇԱՎԱՐ», ուրիշի մը վրայ՝ «ԱՍՈՒՄՆ»  
 գրուած էր: Խմբին իրենց սուրճերը եւ  
 լուցին՝ իրարու կրես նայելով: Դուստրը  
 դնաց շուկայ, պառաւը ներքին մղումով  
 մը վերստին լողարան՝ շարունակելու իր  
 դրոյցը ծխախոտներուն հետ, որոնք  
 մենթոլ էին իրականութեան մէջ:

Յերեկուան մօտ, երբ դուստրը շու-  
 կային արդէն վերադարձած էր, եկաւ  
 զրացի տիկին Անոյը: Գիրուկ, միջին  
 տարիքով այս կինը ծանրաբեռնուած կու  
 գար շուկայէն, նման թաղի միւս տիկին-  
 ներուն, առատան սուրճի այցելութեան  
 համար: Որովհետեւ պառաւը յոգնած էր  
 (Շուշանը այդ կըրակացութեան կու գար  
 միշտ), դուստրը դնաց խոհանոց եւ ե-  
 փեց սուրճը:

Տիկին Անոյը անուշ էր՝ բառին  
 քաղցր իմաստով: Միայն մէկ թերութիւն  
 ունէր՝ աչքերը կը չլէին, եւ նոյնիսկ  
 չէնք շնորհք: Պառաւը երբ առաջին ան-  
 գամ նշմարեց կնոջ չլէլը՝ խօսեցաւ Շու-  
 շանին հետ:

— Ուրիշ՝ հասկցար Անոյըն չլէլը,  
 — հարցուց ան:

— Ուրիշ՝ պիտի հասկնամ: Հետո  
 խօսած ատենը աչքերը իմ կողմը չի կըր-

նար կոր սեւեռել: Միշտ անկիւն մը կը  
 փախչին կոր:

— Զորմանալի բան: Ես ատանկ բան  
 չնշմարեցի:

— Ինչպէ՞ս կ'ըլլայ: Տարօրինակը ան  
 է, որ այս կնոջ աչքերը ո՛չ միայն դէպի  
 ձախ, այլեւ դէպի աջ ալ կը չլէն: Այս-  
 պիտին չէի տեսած: Հանդուցեալ աներս  
 ալ ունէր այս բանը, բայց ան միշտ մէկ  
 կողմ կը չլէր:

— Ինչե՞ր կ'ըրես, մայրիկ, — պա-  
 տասխանեց Շուշան, որ այդ օրը կար-  
 կըտուքով կը զբաղէր: Կարծեմ քեզմէ  
 զատ ուրիշ ոչ ոք նշմարեց Շուշանին չլ-  
 էլը:

Վայրկեանի մը համար տխրեցաւ,  
 յետոյ սաստիկ ուրախացաւ պառաւը, ո-  
 բովհետեւ ան միտի անձն էր, որ դիտէր  
 տիկին Անոյըն մէկ թերութիւնը: Ուս-  
 տի՝ իրեն պահեց այս զաղտնիքը:

Այսօր ալ կը չլէր տիկին Անոյը: Պա-  
 ռաւը, վարժուած ըլլալուն՝ շնորոհե-  
 ցաւ: Միայն զրուցելու ատեն ունեցաւ  
 դժուարութիւն: Տիկինին ըսածները լաւ  
 չհասկցաւ:

— Այս դիտելը լաւ չկըցայ քնանալ,  
 — ըսաւ պառաւը:

— Երէկ իրիկուն հիւր ունէինք,  
 — ըսաւ տիկինը:

— Ի՞նչ կ'ընէք, ստամոքսէս կրնա՞յ  
 ըլլալ, — շարունակեց պառաւը:

— Միշտ նոյն բաները: Նստեցանք  
 թուղթ խաղացինք, — պատասխանեց  
 տիկին Անոյը:

Ականջներուն հետ կապ չունէին լը-  
 սածները: Գիտէր, որ շխտակ է լսած:  
 Բժիշկն ալ հաստատած էր: Ականջները  
 առողջ էին, երիտասարդի տեանջ չէին  
 քնականաբար: Լսեց եւ հետեւեցաւ Շու-  
 շանին եւ տիկինին խօսակցութեան: Կար-  
 ծես դուստրը աւելի ճարպիկօրէն կ'ուղ-  
 ղէր հարցումները, որովհետեւ պատաս-  
 խանները իրեն համար ալ հասկնալի էին:  
 Սպասեց, մինչեւ որ հաշերէ խօսեցան եւ  
 յանկարծ մէջ նետուեցաւ:



— Մենք ատենին, պատերազմի չըրջանին, սոխ-հաց կ'ուտէինք: Յակոբս գործէն հանած էին:

— Խնդրեմ, ո՞վ սոխ-հաց կ'ուտէ:

— Մենք կերած ենք ատենին, պատերազմի ատեն:

— Փառք Տիրոջ, սոխ-հաց ուտելու աստիճանին չենք հասած: Ատանկ բան միայն զնշոճները կ'ուտեն եւ կամ շատ աղքատ մարդիկ:

— Ես մեր մասին կը խօսեմ, Յակոբիս եւ իմ մասին:

— Կը բաւէ, արկի'ն, կերէք, եւ հոտին, այդ խայտառակ հոտին դուք գիտացէք: Մենք մեր տան մէջ նոյնիսկ սալաթին սոխ չենք գործածեր:

— Մայրս հին օրերու մասին կը խօսի, — միջամտեց Շուշան: Պատմեցէք նայինք, ի՞նչ տեսակ ճաշեր պատրաստած էիք մեր հիւրերուն համար:

Պատուը լրած էր: Քառակուսի տուփը արկին մէջ ուժով մը սեղմեց, շոյեց զայն եւ սոխին եւ թարմ հացին բուրմունքը տեսաւ: Ա՛խ, պատերազմի անուշ օրերը:



Սուրբի պէս մարդ էր Յակոբս: Չայն — ձայն չէր ելլեր: Ո՛չ պոռալ ունէր, ոչ ալ կանչել: Կարծես տունը չէր: Անանկ խմել, խաղալ չուներ: Միայն նարկիլէ քաշելը կը սիրէր եւ ճաշ ուտելը: Ինչ առայր՝ կ'ուտէր: Բայց ես ալ համեղ բաներ կ'եփէի. տոլմաներ, պամբաներ, փուրք միսեր, խորովածներ, անուշապուրներ, կաթնապուրներ: Ի՛նչ որ ուզես: Հիւրերնիս ալ պակաս չէր: Կ'ուտէին, կը խմէին, զձեռքը դալար, որքա՞ն համով եփեր ես, կ'ըսէին ու կ'երթային: Երբեմն ալ՝ զա՛խ, քու եփած տոլմային համը ուրիշ է», կ'ըսէին գտցած ատենին: Ստիպուած ես ալ յաջորդ անգամ ուզածնին կ'եփէի: Ատանկ շատ ունեւոր ալ չէինք: Բայց ինչպէս կ'ընէինք-կ'ընէինք՝ ուտելիք կ'ուտենա-

լինք: Յակոբս՝ խեղճը դործ մը գտած էր Սկիւտորի որբանոցը: Ո՛ւր մնաց դործին ապահովութիւնը: Կ'ուտէր, կ'ուտարուէր, մարդու հոգին կ'ելլէր: Տուածնին ալ բա՛ն մը ըլլար: Միայն դանդաղել դիտէին: Ազդին դործը ասանկ է:

Այս վիճակին մէջ ի՞նչ կրնայինք ընել մեր աղջիկներուն համար: Չեղբերնէս եկածը ըրինք, արդէն աղջիկ էին: Յասմիկ միջնակարգը աւարտեց, քանի մը տարիէն քախար ելաւ: Փարթէն կանչեցին: Գնաց, երթալը այդ երթալն է, մէյ մըն ալ չեկաւ: Շուշան աւելի մօտ էր կարգալու, նախ՝ միջնակարգը զրկեցինք, յետոյ՝ ուղեց յիւր տւարտել: Բայց մենք ի՞նչ ունէինք, որ լիսէ պիտի զրկէինք աղջիկս: Արհեստ մը սորվեցաւ, օր մըն ալ ամուսնացաւ: Փառք Տիրոջ, զայն յիշորանցուցի: Նեղ օրեր շանցուցինք, չէ՛: Սոխ-հաց ալ կերածք: Ուրախ էինք, որ պարկ մը սոխ կար մեր մասունքը: Ուրիշներ ա՛յդ ալ չուներին: Պատերազմի ատեն էր: Յակոբս մէկ քաղաքէն միւր կը զրկէին: Շուշանս դեռ չէր ծնած: Սելանիկէն Իզմիր, հոնկէ՛ Պուքաս եւ, վերջապէս, Իսթանպուլ: Ետտ բաներ կը պատմուէին այդ օրերուն: Ես դիտեմ, որ Յակոբս դժուարութիւն չքաշեց, միայն մանր բաներ պատահեցան իրեն: Ինչ ըլլալը այսօր հարցնեն՝ չեմ կրնար պատասխանել: Մոռցեր եմ: Ամէն ինչ յիշելիք չեմ ես: Միայն զուարթ օրեր էին, ա՛յդ դիտեմ:

Կարծեմ աւելի լաւ էր ամէն ինչ՝ աղջիկներու ծնունդէն առաջ: Յակոբս ինձէ՛ մեծ ըլլալուն՝ հասուն մարդ էր: Չկարծես, որ կատակէն չէր հասկնար: Քանիցս խնդացած ենք անվերջ, մա՛նաւանդ՝ Սելանիկ: Կը նստէինք ծով նայող բուրներէն մէկուն վրայ: Կ'ուտէինք, կը խնդայինք: Որքան որ ըլլայ՝ յիշատակներ ունինք այդ բուրներուն վրայ: Առաջին անգամ զիրար հոն տեսած էինք: Ես այն ատեն զպրոցական աղջիկ էի, իսկ ան մեծ մարդ, պաշտօնեայ: Ինձի նայած ու ժպտացած էր, ինձի անանկ թուեցաւ: Ետքը հասկցայ, օր միշտ կը ժպտի եղբի իր բարութիւնէն: Ես աւելի

զարմացած էի իր սպիտակ ձորթին: Այս  
ինչ արեւ շտեմած մարդ է, խորհած էի:



Յերեկուան ճաշը ուշ կ'ուտեին միշտ: Այսօր ալ անանկ եղաւ, որովհետեւ թոռան զայլուն սպասեցին: Ծամբան երկար էր, Երթեւեկի դժուարութիւն կ'ունենար երբեմն: Երեսն յալանի էր, որ արամազրութիւնը խանգարուած էր: Հաւանարար քննութեան մը արդիւնքը ստացած էր: Մայրը ճաշ լեցնելով զբազան ըլլալուն՝ պատուը միթարական բաներ մը ըսել ուզեց: Ես ալ թուարանութեան մէջ տկար էի: Տեսաւ, որ թոռը մտիկ չէր ընէր եւ չգային ու սրտեկը՝ կ'ուտէր անձայն: Պզտիկ եղած տանը կու գար եւ օգնութիւն կը խնդրէր: Դասերը աւելի դժուարացած էին: Ինչ ձեռով կրնար օգնել այլեւս: Սորոված էր միմիայն քանի մը ոտանաւորներ, որոնք նոյնիսկ մինչեւ այսօր զոյգ զիտէր: Ոտանաւորներ, որոնք կ'արտասանէր օրուան ընթացքին, ինքն իրեն եւ կամ ուրիշներուն երկայութեամբ: Ոտանաւորները թոռան չէին կրնար օգնել: Ձեռքէն ուրիշ բան մը չէր գար: Միբարը կսկծեցաւ, մի նեղուիբ բնի ուզեց, բայց բան մը չըտաւ:

Կէսօրէ ետք սենեակը քաշուեցաւ, թոռը իր ընկերներուն հետ խաղալու գացած էր, անանկ կ'ըսէր: Ետեւանը այցելութեան գացած էր: Թաղի տիկիններէն մէկուն՝ տիկին Պէզիքեանին, այցելութեան օրն էր, անոր տունը կը հաւաքէին եւ թուղթ կը խաղային: Պատուը քնացաւ, յետոյ՝ արթնցաւ, անվախ զբոսեց իր քառակուսի տուփին հետ, հարցուց իր որպիսութիւնը: Տուփը միայն լաւ լուրեր ունէր տալիք: Բնակչութիւնը կը շատնար եւ իւրաքանչիւր նոր բնակիչ իրեն հետ կը բերէր ջերմութիւն մը, որ աւելի հաճելի կը դարձնէր ներքինը: Երկարատեւ չէր ըլլար այս տաք մթնո-

լորտը: Լուս ու մունջ նորահարսները կը պաղէին իրարմէ՝ փոխադարձ հետաքրքրութեան եւ զուրգուրանքի բացակայութեան հետեւանքով, պաղեցնելով նաեւ իրենց բնակավայրը՝ քառակուսի տուփը:

Երբ փեան տուն եկաւ գործէն, ըստ սովորութեան, արտակարգ անօթի էր: Աշխատող մարդը միշտ կ'անօթենայ, խորհեցաւ պտուաւը: Եւ Ետեւանը, որ մոտիկին այս սովորութիւնը (չբսելու լաւ համար բնաւորութիւնը) շատ լաւ դիտէր, տանին տուն եկած եւ ճաշի պատրաստութիւն տեսած էր: Եթէ թուղթի խաղը աւելի նպաստաւոր արդիւնքով վերջացած ըլլար, գլխու ցաւը այդքան սաստիկ պիտի չըլլար՝ ինչպէս որ է: Մտեցուցած պիտի ըլլամ, բացատրեց իր ամուսնոյն, որ բան մը չէր հարցուցած: Եւ հաւանաբար բան մը չհարցուցած ըլլալուն համար պատմեց օրուան եղելութիւնները. աշխատանքի անվերջ հոլովութիւնը: Մինչ այդ ամուսինը կը քարեւէր իր կատուն, որ յանկարծ մէջտեղ ելած էր: Այս որբա՞ն խելացի արարած է, հաստատեց մարդը: Իմ գալիս ուրիշ՞ կը հասկնայ: Իսկապէս անանկ էր, միւսներն ալ համակարծիք էին:

Սեղանի շուրջ նստած էին հայրը, կատուն, Ետեւանը, թոռը եւ պատուը: Կատունն համար բացած էին թերթ մը: Ամէն ինչ, որ իրեն համար նախատեսուած էր՝ ծածուած վիճակի մէջ թերթին վրայ կը դրուէր հօր կողմէ: Մաքրութեան շատ կարեւորութիւն կու տային ուտելու ատեն, անոր համար պարզուած էր թերթը: Ետեւանը երկար-բարակ քառօղմերէ ետք, կրցած էր յաջողիլ եւ թերթը պարտադրել: Ատենին սեղանի լաթին վրայ եւ կամ գետինը զորդին վրայ կը դրուէին կատունն պատասանները: Բայց մաքրութիւնը կարեւոր բան էր, անոր համար էր, որ պատասին ճաշ եփելը չէին ուզեր: Եւ երբ մագի թել մը նըշ-

մարեց պնակին մէջ՝ վեր հանեց զայն, զոյնը քննեց, եւ՝

— Նորէ՞ն...

Հարցուց։ Ո՛ւ, հարցնել ուզեց։ Ծաղանակազոյն մազի թելը հանդարտեցուց զինք, կատուն գիրկը առաւ։ Հայրը կատուն հետ զրուցեց, սեղանին շուրջինները մասնակից դարձան այս երկխօսութեան՝ իրենց լռութեամբ։ Պառաւը թոռանը նայեցաւ, որ ասորժակով կ'ուտէր երկրորդ պնակ մը ապուր։ Հարցը ներու պէտք չկար, համով էր կերակուրը։ Նայեցաւ իր պարագ պնակին, շատ պէտք չէ ուտեր, լաւ չէր իրեն համար շատ ուտելը։ Թէ՛ թոռը եւ թէ՛ Եռչանը ըսած էին։ Թոռը ուտեալ էր, կը հասկընար այսպիսի բաներէ։ Իսկ հայրը ուրիշ պատճառներ առաջ քշած էր։ Ամէն ինչ սղած է, ըսած էր, կատունն ուտելիքը հազիւ կրնանք կոր վճարել, իր սովորական ձայնով, որ զինք շնանչոյղին հրամայական կրնար թուիլ։ Բայց պառաւը կը ճանչնար փեսան, նոյնիսկ շատ լաւ։

Եւ որովհետեւ մարդ էակը պատմելու պէտք ունի, միւսներն ալ սկսան խօսիլ։ Այլը պատմեց իր աշխատանքի մասին, թոռը՝ դպրոցի եղելութիւններու մասին, իսկ պառաւը՝ հին օրերու մասին։ Եւ շատ ժամանակ չկորսնցնելու համար՝ ըրին այս բոլորը միաժամանակ։ Ժամանակը սուշ էր։ Թայմ իզ մամի։ Յետոյ՝ ամէն մարդ ամէնէն լաւ ինքզինք կը հասկնար։ Անանկ չէ՞ր։

Ընթերցումը, մանաւանդ ճաշէն ետք, աւանդոյթ էր։ Հայրը կ'ուսումնասիրէր թերթերը՝ առաջին էջէն մինչեւ վերջին էջը։ Պատահած էր, որ վերտին կարգայ առաջին էջը։ Ընդհանրապէս բնութան իրեն անդամները ուշադրութիւն կ'ընէին, որ նման դէպքեր յաճախ չպատահին։ Անհամբերութեամբ կը սպասէին, որ հայրը վերջացնէ թերթերը եւ տայ զանոնք տղուն, կնոջը եւ պառաւին։ Մայրը եւ տղան կարելի եղածին չափ անձայն կը կարգային թերթերը, որովհետեւ հայրը, իրրեւ յոգնած մարդ՝ կը

քննար բազմոցին վրայ։ Բնականաբար, նախ անոնք պիտի կարգային թերթերը, տղան դեռ դատ պիտի սերտէր, Եռչանը ընկիւք կարգ մը դործեր ունէր։ Իսկ պառաւը, իրրեւ սպասման սրահ՝ կ'ընտրէր միշտ լողարանը։ Բազմաթիւ տարիներու աւանդոյթ մըն էր այս, բայց երթալու ատեն միշտ ամչկոտ կը մրմնջէր։

— Ես լողարան պիտի երթամ։

Եւ երբեմն, երբ լուրերը հետաքրքրական չէին, թոռը իրեն նայելով՝

— Նորէ՞ն պիտի ծխես, — կ'ըսէր։

Այսօր ալ կրկնեց այդ նախադասութիւնը։ Եռտով, անապարանօք դուրս ելաւ ճկունութեամբ մը, որ անսովոր էր իր տարիքին համար։ Ապահովութեան հասնելով՝ ծխեց իր ծխախոտը։ Մուխերը լողարանի բաց պատուանէն դուրս կ'ըլլէին եւ ծուխի իւրաքանչիւր հատուած կը նուազեցնէր մատնուելու վտանգը։ Այսօր ալ նամակ չէր եկած Փարիզէն։ Եստ զբաղած են, ժամանակ չունին գրելու, ըսած չէ՞ր տիկին Աղանին։ Տիկին Աղանին նամակ ստացած էր Փարիզէն։ Իրեն այդպէս գրած էր Յամմիկը։ Ինչպէ՞ս կրնար նամակ սպասել մէկէ մը, որ չափազանց զբաղած էր։ Այդ Երոսպան անտնի էր, մարդս կ'ուտէր։ Այնքան կ'ուտէր, որ մարդ նոյնիսկ իր հարողատ մօր նամակ չէր կրնար գրել։ Դեռ ինչե՞ր, ինչե՞ր չէր իմացած այդ Երոսպանի մասին։ Ընտանիքներ կը զայրալուէին, երիտասարդներ իրենց ծնողքը ծերանոց կը քէփին։ Իր վիճակը որքան լաւ էր։ Կ'ապրէր իր սիրելիներուն հետ, ընտանեկան բոյնի մը մէջ՝ քով քովի, կողք կողքի, մէջ մէջի, մէկ զանգուած, մէկ մարմին։

Մխախտի մուխը խորունկ մը թրեքուն մէջ քաշեց։ Ի՞նչ կրնար հնարել, որպէսզի վաղուան ճաշը կարենար եփել։ Կրնար ըսել, որ նոր կերակուր մը դուած է, աւելի չիտակը՝ վերապատած։ Կերակուր մը հին օրերէն, զոր միայն ինք

կրնայ Լփել: Պիտի կարենա՞ր Համոզել: Այժմուկով մը ջուրը քաշեց եւ ապացուցեց, որ լողարան դացած է:

Շուշանը բուրդէ վզնոց մը կը հիւսէր տղուն Համար, տղան սենեակը գացած էր դաս սերտելու Համար, Հայրը դեռ երկնցած կը քնանար: Ոչ ոք բան մը նշմարած էր: Ձեռք նետեց թերթին: Կը կարդար միայն թերթօնը: Սրուան լուրերը չէին Հետաքրքրեք զինք, ոչ ալ վերջին էջը: Իրեն Համար վերջին էջը, որքան անիկա ունէր իւրայատուկ անուն, ինչպէս թերթերու էջերը կ'ունենան՝ մարդական, դրական էջ, եւայլն, կը մընար վերջին էջը: Եւ այդ վերջին էջը երբէք չէր կարգացած եւ պիտի չկարդար: Թերթօնը՝ «Սիլույ նախըգնեմք» այսօր շատ Հետաքրքրական էր, յուզումով կարդաց: Տղան ամուսնութիւն առաջարկած էր աղջկան: Աղջիկը ընտանեկան պարազաներուն տեղեկացուցած էր առաջարկը: Ընտանիքը ընդունած էր եւ ուրախ աղջիկ մը յուզուած եւ լացած էր, իրեն հետ՝ նաեւ ծնողքը: Պատան ալ յուզուեցաւ, հազիւ կրցաւ գրպէլ ինքզինք: Ուղեց Համբուրը աղջիկը, որ չկար, շնորհաւորել զինք: Արդէն ուշ էր իրեն Համար, ժամը տասը կ'անցնէր: Ելաւ, սենեակը գնաց:

Թոռը, արդուկի սեղանը աշխատանքի սեղանի վերածած՝ դաս կը սերտէր: Միմիայն սեղանի փոքր լոյսը վառած էր: Այդպէս աւելի կրնար կեդրոնացնել ինքզինք: Երբ պատաւը ներս մտաւ կէս մութ սենեակէն, Թոռը իր կողմը նայեցաւ, երեսը ճճուեց: Պատաւը անձայն գընաց մահիճ եւ գիշերանոցը վերցուց: Հանուիլ եւ հագուիլը, ըստ սովորութեան, կատարեց լողարանը, Թոռը անհանգիստ ընել չէր ուզեր: Վերմակը բացաւ, նստաւ անկողինին եզերքը, բացաւ քառակուսի տուփին կախարիւր եւ Համբոյն գնդասեղներուն մնացորդները:

— Այսօր քանի՞ Հատ ծխեցիր, մեծ-

ժայրիկ, — Հարցուց Թոռը՝ սրամիտ ժըպիտով մը:

Առանց պատասխանելու՝ մտաւ անկողին եւ դարձաւ պատին կողմը: Միտքը գրադած էր: Արդեօք այսօր ժամը քանի՞ն պիտի պառկէր Թոռը, որ կտրեմար կատարել իր պարտականութիւնը: Դիւրին չէր ժամերով քնացած ձեւացընել: Մէկիկ-մէկիկ Համբոյն պարտականութեան իւրաքանչիւր կէտը: Ոչ մէկը պէտք է մոռնար: Ապահոված էր մո՞տ մը: Առանց մո՞տ ոչ մէկ բան կարելի էր ընել, միւսները ոչինչ պէտք է գրային՝ ո՛չ լոյս, ո՛չ աղմուկ: Միտքը թերթօնի աղջկան կառչեցաւ: Մոռցէին կարծիքը առած էր ամուսնանալէ առաջ: Արդեօք երջանիկ պիտի ըլլա՞ր: Ո՞ւր պիտի երթային՝ ամուսինը եւ ան: Պիտի դադարէ՞ն, թէ պիտի մնային իրենց տեղը: Կարելոք չէր նամակ գրելին, որովհետեւ բարեկամ մը պիտի իմանար, որ շատ զբաղած են եւ նամակ գրելու ատեն չունին: Այդպէս պիտի ըսէր բարեկամը: Հաւանաբար պիտի չհասկնար, թէ ի՞նչ կը նշանակէ սոխ եւ Հոց ուտելը, բայց այդ ալ կարելոք չէր, կարելոք իրենց երջանիկ ըլլալն էր:

Թոռը ժամը քանի՞ն մարեց լոյսը, չհասկցաւ, միայն նշմարեց, որ մութ է ամէն կողմ: Ականջները սրեց՝ լսելու Համար Թոռանը խորունկ շնչառութիւնը: Կամաց մը սոքի ելաւ, նրբանցքէն անցնելով խոհանոց գնաց, վառեց իր զաղտնի մոմը եւ մօտեցաւ հտեւի դրան, որ ուղղակի խոհանոցին քովը կը գտնուէր: Մէկ ձեռքը մոմը բռնած, միւսով շօշափեց կողպանը: Գոց էր դուռը, վատահ էր, որ դոց էր: Բայց մի՞թէ: Որոշեց իր ձեռքով բանալ եւ դոցիւ, վերջնական դուրսացում ստանալու Համար: Կամաց մը բացաւ եւ դոցեց, հրեց դռնափակը, կրկինեց քանի մը անգամ: Դուռը լաւ մը դոց պէտք է ըլլար: Տան ամենակարելոք մասն էր դուռը: Մոմին լոյսը մոռալ էր, կարելի չէր շատ բան մը տեսնել: Մատնեբով շօշափելը անհրաժեշտ էր եւ մատ-

ներուն աչքերը կը տեսնէին, թէ զոց է ամէն ինչ: Վերջին պահուն կը մատնուէր վարանուսի եւ ամէն ինչ ծայրէն կը սկսէր: Բաց մար եւ իր Յակոբը Յակուպի վերածէին: Վասնզ կար եւ սոխ եւ հաց: Յակոբը երբէք չէր ուզեր ըլլալ Յակուպ: Իրեն առաջարկած էին, որ ըլլայ, դործէզ կ'ըլլաս, ըսած էին, բայց Յակոբը մուսց Յակոբ: Արդեւք պէտք է ըլլար, որ բոնորէն իրազործէին սպանալիքը: Վերջապէս համոզուեցաւ, որ զոց էր, ամուր մը զոց էր դուռը: Մտը մարեց եւ, մատնեբուն վրայ կոխելով՝ սենեակի վերադարձաւ:

Թողը կը քնանար: Ենչառութիւնէն յայտնի էր: Մտեցաւ պատուանին, որ թողան մահիճին քով կը գտնուէր: Ամուր մը բունեց բոնիւր եւ քաշեց պանդազ, բայց ուժգին: Գիշ առաջուան վըտաւանութիւնը չունէր, թողը կրնար արթննալ: Մէկ, երկու, երեք, չորս: Աղմուկ մը լսեց: Ի՞նչ կ'ընէր թողը: Իր կո՞ղմը կը դառնար: Եթէ տեսնէր՝ ի՞նչ պիտի ըսէր: Հինգ, վեց, եօթը: Կը բաւէ, մեծ մայրիկ, զոց է, չէ՞ տեսներ: Կանգ առաւ, սիրտը կը բարսխէր: Ութ: Կր բաւէ, կրկնեց սղան: Ուրկէ՞ զիտնար, թէ որքան կարեւոր է պատուանին զոց ըլլալը: Աշխէնը այդպէս մտեցուցած էր, զինքը զգուշացուցած էին հայրը եւ պատաւը, առնին՝ երիտասարդ Սուրբիկը: Բայց մտիկ չէր բրած, երիտասարդ էր եւ արիւնը կ'եփէր: Երիտասարդ մարդը ամէն ինչ կրնար ընել, բայց այդպէս չեղաւ, հիւանդացաւ եւ իր սիրելի եղբայրը՝ Արմէնը զնաց անվերադարձ: Համոզուած չէր, բայց եւ այնպէս զնաց Արմէնին քով՝ գլուխը շոյելու: Զդէ, որ քնանամ, մրմնջաց թողը: Ուղեց զոնէ համբուրել փոքրիկ մանուկը, որ կը քնանար նոյն մահիճին մէջ: Մտեցաւ, չրթունքները դպցնել ուղեց մանկական թարմ մորթին, այդ պզտիկ մարմնին, բայց չեղաւ: Պզտիկը վերածուեցաւ ժորոջը եկած, համեմատաբար կոտւ մորթով էակի մը, որ զինք կը հըրէր:

Յուսալքուած վերադարձաւ իր մահիճը: Մունկի եկաւ, արմուկները զբաւ ներքնոցին վրայ, երեսը յենեց բոունեցանրուն: Աղթեց լալով: Աղաչեց երջանկութիւն եւ երկար կեանք Արմէնին, Շուշանին, Յասիկին եւ թողան համար: Մոռցաւ ինքզինքը:

\*\*\*

Որքա՞ն անուշ էր իմ հայրը: Իրմէ տակի զարգացած մարդ չկար: Բանի՞քանի՞ լեզուներ գիտէր: Իրեն երկու քոթով հանրագիտարան կ'ըսէին: Ձրանեբէն գիտէր, գերմանեբէն գիտէր: Փառաւոր մարդ էր, հասակաւոր, ժորուաւոր: Նոյնիսկ օտար ընկերութեան աշխատակիցները կը յարգէին զինք: Առանկ մարդ չյարգես՝ ո՞վ պիտի յարգես: Մանաւանդ օտարին հետ իր լեզուով խօսիս՝ ուրիշ է, չէ՞: Գերմանացին ափ է բերան իրեն կը նայէր: Կօսք չէ ասիկա՝ երմէ տակի լաւ գերմանեբէն կը խօսէր: Է՛հ, որքան որ ըլլայ՝ զարգացած մարդ էր, ինձի ինք, անօրէն էր՝ շիմնետիֆերի բնկերութեան: Ի՞նչ բաժն էր ինձի ամուսնութեան օրս. ճնայէ՞, ապահով գործի մարդ է Յակոբը, ինձի պէս պաշտօնեայ, վտանգ չկայ: Աստուած ձեզի երջանիկ ընէ, զէ՛լ օրեր շտանէ՛ք: Երեւան գաղթեց: Օր մըն ալ իմացայ, որ հոն մահացեր է:

Որքա՞ն գեղեցիկ էր մեր տունը, ծովերուն վրայ: Պարպէզ մը մեծ, ծաղկազարդ, լեցուն՝ վարդերով, զորս հայրս մշակած էր իր ձեռքով: Ամէն ինչէ կը հասկնար, նոյնիսկ ծաղիկներէ, եւ ուտելէ, եւ խմելէ: Մենք հոն խողը փուլը եփելու եղանակ մը ունէինք: Մատնեբը հետը կ'ուտէիր, այդքան համով կ'ըլլար: Հացը իւղին կը կոխէինք եւ կ'ուտէինք անփերջ՝ մինչեւ որ հայրիկը, իմ փառաւոր հայրիկը արգիւնէր: Արմէնը մտիկ չէր ընէր երբեմն, բայց իրեն ոչինչ

կ'ըսէր հայրիկս: Տղան հիւանդ էր, թոքերը տկար եղողը լաւ պէտք է ուտէ:

Քոլոնիա բուրոզ մօրուքով եւ կարմրուկ աշտերով հայրիկս ծուած եւ զիս համբուրած էր, երբ ես առաջին անգամ պիտի երթայի միջնակարգ դպրոց: Հայրըս յառաջադէմ մարդ էր: Ազգիկս պէտք է կարգայ, ըսած էր: Ո՛վ կը խորհէր ատանկ բան այն ատեն, անշուշտ միայն հայրս, ի՛մ հայրը: Մի նեղուիք, ըսած էր, ես քեզի կ'օգնեմ: Եւ օգնեց ալ, իր կիներ՝ Երանուհի եանըմը շօգնեց, ան իր դուակներով դրազած էր, հայրիկս ալ մեզմով՝ Արմէնով եւ ինձմով: Թուարանութեան մէջ զօրաւոր չէի, բայց ի՛նչ փոյթ, հայրս կար եւ ան ինձեանոր մարդ էր: Անգամ մը նոյնիսկ պտած էր ուսուցիչին սխալը: Յաջորդ օրը դաջած եւ ըսած էի բոլորին առջեւ: Կարծրած եւ բաներ մը կակազած էր պարսն Ասատուրը:

Անուշիկ մարդ էր հայրիկս, միւս հայրերուն չէր նմաներ: Երբ ես վեց եւ Արմէնը հազիւ շորս տարեկան էինք, մեր ձեռքէն բռնած մեզ ծովափ կը տանէր: Մենք լէպլէպի, պիստակ ծախողները տեսներով՝ կ'ազաչէինք, որ մեզի զնէ: Մեր տեղը հիւանդութիւն էր կուտ ուտելը: Ամէն մարդ կ'ուտէր, մանաւանդ՝ հրեաները: Բայց մենք անշուշտ որ կուտ չէինք ուտեր, մենք տարբեր էինք, լէպլէպի պիտի ուտէինք: Եւ կ'ուտէինք, հայրս չէր մերժեր մեր խնդրանքը: Երբեմն նոյնիսկ վեր կը հանէր մեզ, ուսերուն վրայ, երբ մենք աւելի փոքր

էինք եւ, քնականարար, աւելի թեթեւ: Մեր ձեռքերէն կը բռնէր, որ վար չիյնանք. հաճելի էր վերէն վար նայելը՝ թռչունի նման: Ծարուեակ կը խնդայինք եւ չէինք ուղիւ վար իջնալ: Նման պահերուն կը խնդար քիչ մը եւ կը նետէր իր հողերը մէկզի: Մենք ալ հասկցած էինք, որ անձ մը կը պակսէր իր շուրջ. մեր մայրը:

Մշուշի մը ետեւէն կը տեսնեմ մայրս: Ընդհանրապէս կը յիշեմ այն պահերը, երբ ան եւ կամ հայրս ծունկի վրայ կը նստեցնէր զիս: Երկու տարեկան էի եւ կամ երեք, չեմ յիշեր: Միայն զիտեմ, որ հայրս կը համբուրէր զիս երկար եւ ես նոյնիսկ չէի զգար իր մօրուքին թելերուն խայթը: Կը ձողէի, որ համբուրէ, երկարելով իմ կարծուկ թեւերը:

Ատկէ աւաղուան շրջանը չեմ յիշեր յստակ: Գիտեմ, որ կար մարմին մը տաք, տրոփիւն սիրտ մը, որ զիս կը հանդարտեցնէր:

Ա՛խ, իմ անուշիկ հայրիկը, իմ արեւ հայրիկը:



Հանդստացած անկողին մտաւ, վերմակը վրան քաշեց: Օր մը եւս անցած էր: Ներքնոցը իրեն աւելի մտերմացած էր: Մտերմանալով աւելի կը նահանջէր, զէպի վար, դէպի գետին:

ԲԱՏՅԻ ՔԷՊԱՊՃԵԱՆ

Կ Ա Ր Օ Տ . . .

Ողջ մնայու պարտադրանքէն  
Պիտի ինքզինքն ազատագրեմ . . .

Թէեւ դժուար ու դանդաղ,  
Այսօւհանդերձ, սնպայման  
Վերագառնամ պիտի ա՛լ՝  
Սուրճի բոյրով պարտութեամբ  
Բիրեղային վիճակիս,  
Ուր բացարժարժ աչքեր կան,  
Անճուն, ինչպէս արշալոյս,  
Ուր սեփական իմաստի  
Մաքառումին մրիկն է,  
Եւ աչքերը միաստի՝  
Միշտ տարաբեր ու ժպտուն . . .

Այսպէս ընդմիշտ, վերջնապէս,  
Հրաժարիմ պիտի ես  
Իր մարմինը սնուցանող կենդանի մը ըլլալէ,  
Եւ արտաքին անցարգելները թուր  
Պիտի ի սպառ խորտակուիմ,  
Թէ որ կրցայ խղճմտանքիս հոգածութեան յանձնուիլ . . .

Ա Ն Վ Ս Ս Ա Հ Ո Ւ Թ Ի Ի Ն

Անվտանգութեան սարսփով լեցուն՝  
Մարդիկ չարութեամբ կը կանխեն զիրար  
Եւ փուռերուն տղբու փութով խոնարած՝  
Ճանկեր կը սրեն ու կը մերկանան . . .

Ես ահաբեկուած՝  
Մատնեբով բարակ  
Մեծ պարապը շօշափելով՝  
Խրտչած հայեացքս կ'որոնեմ հիմա :

— Ո՛ր, խղճմտանք իմ, —  
Զգուանքի ու կարեկցանքի ամուսնութեամբ  
Սերած մաւթէն  
Ազատէ զիս . . .

Վարժանք Անանեանի երկերը լայնորէն յայտնի են աշխարհի շատ երկրներէ պատանիներին: «Անուանի ափից» և «Յովագոմոսի գերի-նեքը» վիպակները, որսորդական պատմութեան ժողովածուները բազմաթիւ հրատարակութիւններ են ունեցել ո՛չ միայն Տեղ ժամ, այլև արտասահմանում: «Անուանի ափից» վիպակը հրատարակուել է 18 լեզուով, 36 անգամ, առի՛ք քան մէկ միլիոն տպագրանկով: Որսորդական պատմութեան ժողովածուները տարբեր լեզուներով յոյս են տեսել 28 անգամ, այդ թուով՝ անգլերէն, չինարէն, ճափոներէն, արաբերէն, հնդկերէն, բենգալերէն, հունգարերէն, լեհերէն՝ մտա մէկուկէս միլիոն տպագրանկով:

Ե. Ժ.



### ՎԱՐՎԱՆԳ ԱՆԱՆԵԱՆ

Ներկայ ամսոյն 15ին, Երեւանի մէջ էր ժահանգացուն կնքեց Կանթաճանօթ դրող Վարժանք Անանեան, 75 տարեկանին:

Հայաստանի շեղծական վիպերէն մէկուն մէջ աշխարհ կլան մանուկ՝ Վարժանք Անանեան ինք եւս կրկնեց մեր անուանի դրողներուն գրեթէ հասարակաց կենսագրականը՝ կեանքի յետի առաջնաներէն բարձրանալով դրականութեան պատուարէր բարձունքներուն:

1905: Ծնունդը: Ծագական բունակալութեան շրջան: Ծանախեայ հասակ՝ Համալսարանային Առաջին պատերազմ: Մեծ սպանդը: Ազատագրական յոյսի մեծ ալիք մը: Յեղափոխական այնկոծումներ: Հարստահարութիւններու եւ պատերազմական տարիներու հետեւանքով հիւսնան Հայաստանի վրայ Հանրապետութեան հռչակում: Յետոյ՝ նոր տանկուձրայութիւն ու Հայաստանի խորհրդայնացում:

Այս մեծ իրադարձութիւններուն մէջ կազմուեցաւ Անանեանի մանկութիւնն ու պատանեկութիւնը, գրկանքներու հարուանքներուն տակ, մեծ դառնութիւններու ոլորապատճառին մէջ:

Եր կենսագրութեան առաջին փուլին մէջ ամէն ինչ կհետով միայն տրուեցաւ իրեն, կէս անօթի, կէս մերկ, կէս դպրոց (Վիպրո՛ցը... գլխիս փիլիսոփա՞ն) եւ դառնալուծ: Բայց հակառակ միակողմուր չբաւարութեան եւ տաւաբը դպրոցէն նախաճեծար համարող հօր ստիպողական փելիսոփայութեան, մանուկին սրտին շմարեցաւ ուսման շնորհը սէրը, եւ կարողաւ անդիմադրելի պայպկը անեցաւ ու անեցաւ մէջը, փնտոց, դտաւ ու յափեց տղազրբ ամէն բան, ամէն ձեւի գիրք, թերթի ամէն կտոր՝ տաւարի, շուններու, գայլերու ու սղելու: Միջմայրին մէջ է, որ մըն այլ, դեռ քանտանեայ երիտասարդ, տեսաւ, որ դրիւլը կը հոսի թուղթին վրայ եւ խորագրատուներու մէջ անհրաժեշտ տարր է արդէն:

Հետաքրքրական են մէջնդմէջ աւաւարած ու դպրոցական մանուկի իր փորձառութիւններն ու լուռ հակադէմութիւնները, այսպէ՛ նուաճած փառքը՝ Ուտուցիչին համար շնորհի ճուտց էր ան, հողաբարձունքի բարձրանալն տպաւորութեամբ՝ զնրանից Խո գոմի հետ է գալիս, մտքը նստող դասընկերուհին պիտի բացազանէր՝ զՊարոն վարժապետ, այս վայրենաւ հետաքրքրէ իմ մտքից, պատանիի իր պաշտամուկին առարկայ միւս դասընկերուհին երբեք պիտի չգիտէր նկատել իր դոյնութիւնը, բայց ինք, Անանեան, անկոտորում կամքով մը հետապնդեց ինք սանդղոյ մայր երազը, շնորհերու պաղանջներուն տիրապետելու թափը, զրկուր փորձերը, միջին ուր մը տաւարներուն հետ բարձրացած լեռներուն բարձրութեամբ բարձրացաւ հայ դրականութեան երկնակամարին վրայ, երբ իր սրտին դէմ տեսաւ



բար կուզու ծնացած աղջիկը, որչէն ժողովուրդը տարբերու մշտնջերուն մէջ, ինչ պիտի յայտնուէր ու մեկնարանէր այս տեղում իր մանկութեան ընկերներն ու ընկերուհիները մտնողովն նախապէս անտարածելի մտայման պատճառները:

«... Ի՛հ, դուք բարձուցում էք, մե՞նք ստորուցում... Դուք մեզ համար տեսանելի էք, մե՞նք մեզ համար՝ ոչ»:

Մտածումներուն երկուսն ալ նամականներուն վրայ վարդեր սփռուած չէին ի հարկէ Անանեանի ոտքերուն տակ, իր լալամ գրակառնութիւնը տարբեր երազներ կը յուզէին իր մէջ, այլ իրմէ պահանջուածը թուրովին տարբեր բան էր, որ ահագին աւելի խնցր իրմէ: Ինչ որ դժուար է պատկերացնել մտնողին, բայց նաեւ փաստ է, որ իր ստորագրութեամբ չյատարակուած են բնամարտի փրօնոր պայքարի փրօնոյն: Եւ ճիշդիկովն լուծել մտի պարզութիւնը խորագրուած գործերը եւ նոյնարեւոյթ արքիզ զիրքեր՝ ժամանակաւոր ու ժամանակագրելով: Ամէն ինչ բոլորէն իրենց յանձնուած նոյն մոլորութեան հետեւանքով էր, որ որիկներու հետ պիտի նա մտնողին կրակէ նոր սպանկերու մէջ, ուր պայանելի զմեքու ունայցման սուղին հետ ապրեցաւ նաեւ անմահան վախի, բանաստեղծի ստորագրութեամբ եւ շարժարկովի թուրը հանգրուանները: Ինչ կը ջանար բոլորիկներէն լուծել մտի պարզութիւնը, մինչ բոլորիկները, ըստ նախապէս լարուած զորոյցներուն, քանի որ անգամ ճշման լուծել իր սեփական մեծին պարզութիւնը, այն արեւուն քաղաքապետական օրինակներուն մէջ մահացու մեղքեր զիջելով ուրիշ: Փաստէր շատ են, որոնցմէ մէկուն համարձակ՝ «Ինչ-նայնպէս պիտուածէն էր ինչ, եւ ըստ ուրիշի մը՝ իր բարեմեծաւի ընկերները անուն գործիք ըլի է ետեւանքափոխական պրովոկացիաներով եւ փաշտուած գրպարուութիւններով»:

Այսպիսի զբոսաշրջութիւններով յաղեցած մէկու մը համար դիւրին չէր շնչել եւ ստեղծագործել: Այդպէս ալ եղաւ: Իր կենսագրութեան ծանօթ անձերը դիտեն, որ բնարձանաւի քննիչները լոյս տեսաւ 1931-ին, յաջորդ հասարակ՝ 1931-ին: Ամառը ինչ տարի ոչինչ հրատարակեցին իրմէ: Վախժանդ Անանեանի կենսագրին ամէնէն միջին տարիները:

Ստեղծագործական առումով յաջորդող սանձամեակը նոյնպէս հարթ չէր: Վախժանդ Անանեանի համար: Վերջինքն իր սեփական եղաւ անկուծը: Նոյն թուականին լոյս տեսան իր տարբերակի կերպը կրող Վեռնիկի Կարմիր (1931) խորագրեալ բարբառային ստեղծագործութիւնը եւ «Փերմայի մարդիկ» անունը կրող կրօնաստեղծական ամսագրիկը: Հարբերի քննադատութեան ուշադրութեան չվերջեցաւ այդ հանգամանքը: Հրատարակուած արձանագրեց:

«Յուսալի է, օրինակ, յիշել տաղանդաւոր արձանագիր, որտարդական մաքնիւնի սիրուած հեղինակ Վախժանդ Անանեանի «Տեղի մայր» մարդիկ վեպի բախտը: Անանեանի ծաւալուն վեպը պատմում է ցեղային-աստեղական կոլեկտիւնի անցման հարցի շարքը, մեր ճակններում գործող աւանդական հերթի՝ վայրի կենդանում, փոխարինել է ընտանի կենդանուն, բայց այնքան վտուտուած գծուած որտարդի եւ ընտրեան սիրանարի փոխարին արդէն չկար արժանի մարդ հերթը»:

Կրօնով եւ ժամանակի այս մտնող անմահան նախանձութեան մը չէր զարհուրու, այլ հետեւած էր գրակառնութիւնը կորու ինչպէր համարող պարտադիր սկզբունքին, որուն պատճառով վառուածը հասարակաց եղաւ ամէնուն, ու անբեւեակայիլի:

Վախժանդ Անանեանի ստեղծագործական ու ժամանական վերջը համեմատաբար հարթ եղաւ վերջին շատերը զարուն, յիտուական թուականներէն սկսեալ, մասնաւորաբար միւսնային տարիներուն: Համատարած հմայք մը ուղեւորեցին իրեն յաջորդաբար լոյս տեսած որտարդական պատմութիւնները, պատկերներն ու վիպակները, որոնց յաջորդին էջերը գրակառնութեան այդ սերը բարձրացուցին առանձին ժողովրդային մը, յատկապէս իրենց միջնադարային թարմութեամբ եւ մարդկայնական փորձառութիւններու հրատարակութեամբ:

Իր նկարին իր զետեղուած համակ Գիւլիանարեանի հաստատուէն նաեւ, ահա-առիկ ուրիշ վեպայութիւն մը, «Շալոնի»-ի մայնին մէջ լոյս տեսած, հաստատար անհախճեց հայ գրակառնութեան սղ պատմութեան մէջ:

«Ձեր գրադարակ յատկացում միայն օտար լիզուներով սպաքրուած գրքերին: 42 լեզուով սպաքրուել է: Ես գրեմ անցել եմ մի քանի հրատարակութիւններ...»:

Հարբերի բնութեան բանաստեղծութիւնը եւ կենդանական աշխարհին աշխարհութիւնը, ինչպէս նաեւ անոնց հետ մուտնուած ու զրացնութեան սպրոյց մեր ժողովրդային մէջ լայն խառը՝ իր զարաւոր աւանդութիւններով ու առաջնութիւններով օտարներուն մտնողներէն: Անանեանի տաղանդին շատ բան կը պարտի հայ մարդը, զիս չհաշուած անոր առանձին էջերուն աւելի սպրոյց իր հրատարակող, բարեխումբերը, հարատեւութեան մասնաւորաց անակնկալները:



Վ. Ա Ն Ա Ն Ե Ա Ն

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԴԱՍՏԻԱՐԱՎԿՉՈՒՅԻՆ

1

Ես վաղուց չէ, որ վեր եմ դրել տաւարածի մահակը: Ամաբանոցային կոկիկ այս քաղաքում ես սարից նոր բերած եղնիկի նման ամէն քայլափոխի դէս-դէն եմ նայում խրտնած: Ինչքա՞ն մարդ կայ այդ ամաբանոցում եւ ինչ ահեսակ հազուատներ ահա, որ չեն հագնում: Բոլորն անծանօթ, բոլորն անժառանգի: Եւ ինչ զարմանալի կարգեր ահա, որ չկան այստեղ. մարդիկ փութանակ թփուտներով զնայու, կոկիկ նանագարհներով են քայլում, եւ ոչ ոք ծառ չի բարձրանում: Մառ ու ծաղիկ պատած են փշալարերով, եւ ոչ ոք չի վազում կանաչի միջով ու չի թաւալում: Աթուրմա, լախաի խաղացող էլ չկայ... Բնութեան մէջ լինել ու աթուրմա չխաղա՞լ... Տարօրինակ է, շատ տարօրինակ ու անհասկանալի:

Քեռիս, որ աշխարհ տեսած, դարպացած մարդ է, Հանքային ջրերի առողջարանների քարտէսը ձեռքս է տուել ու պատուիրել լինել բոլոր նշանաւոր վայրերում: Բայց երեք օր է, ինչ այստեղ եմ եւ գեռ ոչինչ չեմ տեսել, այս միտրից միտքս չի պարզուել, չփոթութիւնս դեռ չի անցել: Ամաբանոցն ապրում էր իր ուրախ կեանքով, թատրոնում հնչում է Ձայնովսկու դիւթիչ երաժշտութիւնը, աշխատաւոր մարդն առողջանում ու բերկրանքով վայելում է այդ աննման ամաբանոցի բարիքները, իսկ ես, անբնիկ ու անլիզու, ամէն օր որոշ ժամերի վաննա եմ ընդունում, զանգի կանչով օրական ուտում եմ շորս անգամ, թփուտներում պառկած դիրք կարդում, իսկ իրիկ-նաղէմին միայնակ սար եմ բարձրանում՝ վերջալոյսը տեսնելու: Ա՛խ այդ երկրի դիւթիչ վերջալոյսը...

Մի օր էլ վճռեցի հենց առաջին պատահած մարդուն ցոյց տալ քեռուս տուած քարտէսը եւ իմանալ, թէ որտե՞ղ են դրանք՝ իմ տեսնելիք վայրերը, եւ ինչպէ՞ս կարելի է ընկնել այնտեղ:

Այդուհի, նստարանի վրայ համեստ դէմքով մի տիկին նստած՝ դիրք էր կարդում: Ռուս է: Ափսոս, որ աւաերէն վատ եմ խօսում, եւ այդ է պատճառը, որ այստեղ ոչ ոքի հետ չեմ ընկերանում: Բայց միայն դա չէ, այլեւ իմ բնական ամօթխածութիւնը, յետամնաց գիւղի, նախկին տաւարածի ամօթխածութիւնը, որ ես բերել եմ հետո մեր սարերից: Այդ ամօթխածութիւնն էր պատճառը, որ ես մի քանի օր տռալ Սեւ ծովի ափերից փախայ կիողովորսկի: Հազարաւոր աղամարդ ու կին միասին լողանում էին ծովում եւ մերկ փուռում աւաղի վրայ՝ կողք կողքի... Իսկի տեսնուած բան էր դա...

Ու հիմա կանգնել եմ այդ տիկնոջ առաջ կարկամած եւ ամաչում եմ նոյնիսկ շուտ դալ-զնալ:

Նա գլուխը բարձրացրեց եւ, հաւանաբար իմ դեղջկական կարմրած դէմքից դրութիւնս հասկանալով, սիրալիք ժպտաց ու հարցրեց.

— Ի՞նչ էք կամենում, երեսասարդ:

— Ներեցէք, ես... ես... չզիտեմ ո՛ւմ գիմիմ... — կմկմացի ես :

— Նստեցէք եւ խօսեցէք համարձակ : Դուք հաւանաբար առաջին անգամն էք լինում ամարանոցում, — ասաց նա այնքան բարեկամաբար, որ ես սիրտ առած՝ նստեցի ու սկսեցի իմ կոտորտուած ուսուերկնով :

— Այո, առաջին անգամ... Մենակ եմ... ուզում եմ նշանաւոր տեղեր տեսնել, բայց ցոյց տուող չկայ... Ա՛յ, օրինակ Լերմոնտովի մենամարտի տեղը... :

— Էլի ի՞նչ տեղեր կ'ուզենայիք տեսնել, — Հարցրեց նա Հետաքրքրութեամբ ինձ գննելով :

Ես պատասխանի փոխարէն ծոցիցս հանեցի իմ քարտէսը, որի վրայ կարճիւր մատիտով նշաններ կային արած... :

— Փեռթա է առել... որ գնամ, բոլորը տեսնեմ, — թոթովեցի ես :  
Նա բարեբարութեամբ ծիծաղեց՝ ցոյց տալով իր սիրուն ատամները ճերմակ շարքերը :

— Քեռի՛դ... Ո՞րտեղացի է քեռիդ :

Ինչպէս դուք կը խօսեցնէիք թոթովախօս ու միամտաբար գուրս արուող մանկան, նոյնպիսի Հետաքրքրութեամբ ինձ Հարցուփորձի ենթարկեց երկնագոյն աչքերով, փոքրիկ, ճուածեւ զէմքով այդ տիկինը : Իսկ երբ իմացաւ, որ ողջ կեանքս օտրերում, մրաններում ու ձմերանոցներում է անցել, երբ իմացաւ, որ որսի յետեւից ամէն ձմեռ թափուում եմ անտառներում ու ձորերում, նրա Հետաքրքրութիւնը բազմապատկուեց : Այդ տիկնոջ Համար ես արդէն գիւտ էի, կամ Հարուսդիւտ Հետաքրքիր մի արարած՝ այդ կուլտուրական ամարանոցում :

— Ո՞ր կ'ուզէիք գնալ այսօր, — Հարցրեց նա վեր կենալով :

— Մէկ է... Թէկուդ Լերմոնտովի մենամարտի տեղը : Կ'ասե՞ք ինչպէս գնամ :

— Կ'ասեմ... :

Եւ նա բացատրեց իմ մարչուտը :

Ձէ, գլուխս բան չմտաւ : Ինձ Համար աւելի Հեշտ է մեր գերդէց սարճրով գնալ Լոսի, քան կիսլովոզակից՝ Պեատիգորակ :  
Նկատեց, որ մոլորուել եմ, հասկացաւ :

— Իսկ դուք այն կ'ըմբերը չէ՞ք գնալու, — ներքին պայքարից քրտնած Հարցրի ես :

Փպտաց մտերմաբար :

— Վաղը գնալու եմ : Եթէ առաւօտեան ինը անց քառորդ լինեա կայարանում՝ ցոյց կը տամ ճանապարհը :

Ենթահակալութիւն յայտնեցի ու Հեռացայ : Ոչ, ուղղակի փախայ-կեանքումս առաջին անգամ էի քաղաքացի կնոջ հետ այդքան երկար ու Համարձակ խօսում :

2

Տարի թուաց մինչեւ բացուեց յաջորդ առաւօտը : Նախաճաշիցի ու անմիջապէս սլացայ կայարան :

Մտղկաւոր սարաֆանը հազին, ուտերը բաց, Հովանոցը ձեռքին, բարիկ սաքերին հասարակ սանդալներ՝ կանգնած է Հերթի, տոժա է գնում :  
Գլխի շարժումով բարեւա առաւ :  
Վաղնում բաւական մտերմացանք. ես այլեւ նախորդ օրուայ նման

կաշկանդուած չէի գտում ինձ: Այնպէս մտերմացանք, որ Պետախորհուրդում պարզութեամբ ասաց:

— Վասխնում եմ այս օտար քաղաքում կորչես: Ուզեմ-չուզեմ պիտի ուղեկցեմ քեզ:

Եւ աւագ քրոջ մտերմութեամբ թեւս վերցրեց, ապա զիչ քայլելուց յետոյ, ասաց կիսակատակ.

— Անչն'ր՛հք, թեւանցուկ անկ էլ չգիտէ...  
Հստ երեսոյթին սաստիկ կարմրեցի, որովհետեւ կանգ առաւ ու դէմ-զին նայելով՝ ինքնիրեն լշնջաց:

— Ինչպէ՛ս գոյնն անմիջապէս փոխում է... — Ապա զուարթ աւելացրեց, — է՛ր, երեսասարդ, լաւ է, որ դեռ հոգով անարատ ես մնացել:

Սաստանն տանի, թեւանցուկ արած քայլել չեմ կարողանում: Ինչպէ՛ս քայլեմ, որ կողքին չքսուեմ, ոտս ոտին շառնի: Ա՛խ, իմ այս անճոռնի ոտքերը...

Ես բառեր ճարեցի մտքումս ու ասացի.

— Գիտէ՛ք, ճիշդն ասած՝ ուղիղ տեղով քայլած չկամ, դժուար է ուղիղ տեղով քայլել... իսկ թեւանցուկ առաջին անգամն է... ներեցէք...

Եւ թեւը բաց թողեցի: Կարգին քրտնել էի:  
Նա այնպէս ուրախ քրքրաց, եւ այդ ծիծաղն այնքան զրնդուն ու դուրեկան էր:

— Ի՛նչ հետաքրքիր արարած ես, Աստուած վկայ, ես Մոսկուայում շատ մարդ եմ ճանաչում, ոչ մէկը քեզ նման չի:

Կարգին ձեռ է անում ինձ. երեւի իրօք շատ անճոռնի արարած եմ... Այդ օրը եղանք կերմնատոփի մենամարտի վայրում: Գլխարկս հանեցի ու յուզմունքով նայեցի հանճարեղ պոետի արձանին:

Տիկինը թաքուն հայեացքով գննում էր ինձ: Այս անգամ չծիծաղեց վրաս. ըստ երեսոյթին, չուզեց վիրաւորել զգացմունքներս: Նա կերմնատփի «Թեւան» արտասանեց կարծես իր համար, բայց հետզհետէ յսփշտակուելով:

— Վա՛հ, այս ինչքա՛ն լաւ, ինչքան երաժշտական ձայն ունի... Սա անպայման ակումբներում արտասանելիս կը լինի:

Վերադարձանք եւ քաղաքային գրասարանում բաժանուելիս հարցրի.

— Իսկ ձեռ անունը կարելո՞ւ է իմանալ:

— Ինչ կարիք կայ... Միեւնոյն է, այլեւս չենք հանդիպելու:

Ու չարածճի հայեացքով գննում է դէմքս. կարծես ուզում է իմանալ, թէ ինչ տպաւորութիւն կը թողնի տասնը:

Ես մայրուեցի:

— Բա քեռուս ասած միւս տեղերն ո՞վ պիտի ցոյց տայ, — քրթմնջեցի ես դժգոհ:

— Է՛ր, երեսոյթ, երեսոյթ, խուովե՞լ էլ գիտես, — հնչեց նրա երգեցիկ ձայնն ու գնդուն ծիծաղը: Ահաքը մեկնեց ու մտերմութեամբ ասաց, կարծես ինձ միտքարելու համար.— Նո՛ւ, մի՛ խուովիր, առաւօտեան ժամը տասին եղիր այսօրուայ հանդիպման վայրում:

Ես ուրախ սեղմեցի նրա ձեռքը: Որքա՞ն նուրբ, որքան քնքուշ է այդ ձեռքը, որ այնպէս անօգնական է պատուարուել իմ կոշտ ու խոշոր ափի մէջ:

Ես մի պահ կարկամել եմ: Նա հասկանում է, դէմքին խիստ արտայայտութիւն է տալիս ու զգուշութեամբ ձեռքը քաշում ափիցս:

— Նո՛ւ, բարի գիշեր, մի՛ մոլորուի՛ր, — լսում եմ նրա հնչեղ ձայնը: Թեթեւ սրտով բարձրանում եմ աստիճաններով: Ի՞նչ լաւն է, ի՞նչ բարի այդ տիկինը, տնայաժան ժանկարտաղջում աշխատելիս կը լինի՛. նրանք սովոր են բուրբի հետ վարուել, ինչպէս երեխաների հետ: Այնպէ՛ս բարի են լինում ժանկարտաղջիկ դաստիարակչուհիները:

Միւս օրը, պայմանաւորուած ֆամին եւ մօտեցայ ծանօթ նստարանին: Նա էլի երէկուայ գիրքն է կարդում: Այնպէ՛ս պայծառ, այնպէ՛ս մտերիմ է ժպտում ինձ: Նսյնիակ թւում է, թէ քրոջ կարօտ կայ նրա հայեացքում:

— Նո՛ւ, լա՛ւ քնեցիր, շորան, — հարցրեց նա կատակով: — Քնուիդ է՞լ ի՞նչ է պատուիրել:

Ու ծիծաղում է զընդուն, այնպէս դուրեկան ծիծաղով: Եթէ հնարաւոր լինէր ձայնագրել այդ գանգակ ծիծաղը...

— Քեզիս պատուիրել է, որ ձեռքի տաճարն էլ տեսնեմ:

Վեր է կենում, ձեռքս բռնում ու տերրասներով վեր ենք բարձրանում: Ամարանոցի թիկունքում անտառապատ բլուրներ են, որոնց գագաթները բաց են ու ծածկուած արշիական կանաչով: Մենք գուրս ենք գալիս անտառից ու մտնում ծով կանաչի ու ծաղիկների աշխարհը...

Այդտեղ իսկապէս ոչ մի «տաճար» գոյութիւն չունի, հենց ինքը՝ ողջ բնութիւնը, այս շնաշխարհիկ բլուրները, ուր ստեղծագործ յուզմունք են ապրել ուստի ժողովրդի հանճարները՝ Պուշկինը, Լերմոնտովը, այս անձման վայրերն իրենք են «տաճար»՝ «օւրի տաճար»...

Ես բնութեան դաւակ եմ եւ կարիք չկայ, որ սիրունիկ ուղեկցուհիս ինձ բացատրի, թէ ինչո՞ւ է այդ վայրը կոչուած «օղի տաճար»:

Աշխարհ ու ընկեր մոռացած-տարուած նայում եմ հեռո՛ւ, հեռու հորիզոնում մինչեւ ամպերն իրար վրայ բարդ-բարդուած, իրար թիկունքից աւելի ու աւելի վեր ելնող, մանուշակագոյն մշուշով քողարկուած Կովկասեան լեռներին: Նայում եմ էլլորուօի ձերմա՛կ-ձերմակ գագաթին, եւ հողիս, բնութեանը սովոր հողիս թաշում է դէպի այդ անծանօթ ու փառահեղ լեռնաշխարհը, գէպի Մեծ Կովկասի մթին ծմակները, ուր վխտում են եղջերուի նախիրներն ու այծեամենքի հօտերը:

Ուղեկցուհիս հայեացքով ինձ է դնում. երեւի ջանում է հասկանալ, թէ ի՞նչ է կատարւում իմ մէջ:

— Ա՛խ, այնտեղ լինէի՛՜ հրացանը ձեռքիս, դոնէ մի շարթով, գոնէ մի շարթով... — գառանցողի նման շնչում եմ ես հայերէն:

— Ի՞նչ, — հարցրեց նա ականջը մօտեցնելով:

Ես սթափուեցի ու թարգմանեցի ասածս:

— Ի՞նչ տարօրինակ աղայ ես, քեզ Մոսկուա պիտի տանեմ՝ Մեծ Թատրոնի դերասանների հետ ծանօթացնելու:

— Մոսկուա՞, Մեծ Թատրո՞ն... ի՞նչ գործ ունէք դուք այնտեղ:

— Կատակ եմ անում, ես Միմբիրուկի գիւղերից եմ:

..Մենք զատիվայրով ցած ենք իջնում:

Նա թէեւ պարզ շորերի մէջ է եւ հասարակ սանդալներ ունի հազին, բայց զգուսանում է:

Ներքեւում, անգունդի վրայ յաղարջի ու մուրի թփեր կան կախուած:

— Գնանք, ի՞նչ կը լինի, գնանք քաղենք, — թախանձեցի ես:

— Ի՞նչ, գո՛ւե՛լ ես, այնտեղից վայրի այծն էլ չի կարող իջնել, — ասում է նա ու երկիւղով նայում անդունդի յատակին, ուր կիսախաւարի միջից լեռնային վտակի վշվշոցն է լսւում:

Այս անգամ էլ էս եմ ծիծաղում՝ կողիտ ու լիաթոք:  
 — Էս հօ իսկական կոկիկ մայթ է:  
 Ու մի քանի ոստիւնով զառիվայրով ինձ ձորը նետեցի:  
 Նա բռնել է մի ճիւղից, ցած կոացել, սարսափահար անդունդին է նա-  
 յում ու կանչում:

— Ստեո՛ւպ, Ստեո՛ւպ...  
 Ի՞նչ զուարճալի է փափկասուն տիկինների հետ վայրի թաւուտում  
 լինել:

Մոռի ու հաղարջի պտուղներով ծանրաբեռնուած ճիւղերի մի խուրձ  
 դրկիս՝ զառիվայրով վեր եմ վազում թեթեւ ոտոտուտով. ուզում եմ զարմա-  
 ցրնել նրան:

Ի՞նչ կարճ է օրը: Նորից արեւը խոնարհուել է, ահա պտունկը կ'ընկ-  
 նի բլրին:

Մենք իջանք քաղաք:  
 — Ի՞նչ կը լինի միասին գնանք ընթրիքի, — խնդրեցի ես:  
 Նա, չզխտես ինչու, զժուարանում է:  
 — Ա՞յդ էլ քեռիդ է պատուիրել, — ասաց նա: Ու աչքերը, չարաճճի  
 աչքերը ծիծաղում են:

— Այո՛, քեռիս է պատուիրել... Ասել է՝ ոուս աղջիկների հետ ման  
 կը դաս, որ ոուսերէն սովորես:

— Հա՛ւ, որ քեռիդ է պատուիրել, գնանք, — ասաց նա ծիծաղելով:  
 — Բայց այն պայմանով, որ ե՛ս քեզ հիւրաւիրեմ:

Ու հարցական նայում է:  
 — Ի՞նչ... բա ի՞մ գլխին փափախ չկա՞յ, — վիրաւորուեցի ես:

Այդ նրան է՛լ աւելի հետաքրքրեց:  
 — Ի՞նչ փափախի հարց է...  
 — Բա տեսնուած բա՞ն է, որ կինը տղամարդուն պատուի, մեր երկ-

րում էրպիսի բան չկայ:  
 — Ա՛հ, չորա՛ն, չորա՛ն, գնա՛նք:

Նա աչքով-ունքով ինձ սաստում ու հասկացնում էր, որ էժանազին  
 ճաշեր պատուիրեմ:

— Սա օտար երկիր է, որ փողդ վերջացնես, ինչպէ՞ս ես վերադառնա-  
 լու... սնապարծութիւն մի անի, — մեն՞ ջրով նման խրատեց նա ու ինքը  
 պատուիրեց ընթրիքը:

Ես շատ անյարմար դրութեան մէջ էի:  
 «Ճիւղերի համեստ տպրոզ ուսուցչուհի է», անցաւ մտքովս: Բայց այս  
 ինչ է, դիմացի փառահեղ սրահից, արուեստի ու գրականութեան ինձ ծա-  
 նօթ յայտնի մարդիկ վեր են կենում, գլուխ տալիս ու ժպտում իմ ուղեկ-  
 ցուհուն: Տիկինը սիրալիբ ժպտաներով պատասխանում է նրանց ողջօյննե-  
 րին: Իսկ ինչո՞ւ են այդ մարդիկ տարակուսանքով ուսները թօթում, զըչ-  
 փըչում իրար հետ ու մեզ նայելով՝ ժպտում: Ո՞ւմ հետ եմ նստած ես, եւ  
 ի՞նչ տարօրինակ բան կայ, որ վուշի պարզ շորերով, հասարակ սանդալնե-  
 րով այդ տիկինը ի՛նձ հետ է նստած ճաշարանում:

Այդ երեկոյ բաժանուելիս զրեթէ խստութեամբ հարցրի՝ անցնելով  
 «գոռ»ի:

— Ինչո՞ւ էին մեզ նայում էն մեծամեծները:  
 — Սատանան նրանց տանի, ես ի՞նչ գիտեմ:  
 — Բայց ո՞վ ես դու...

Չգուժեմ եմ, որ Հարցիս մէջ սպառնալիքի շեշտ կայ. ի՞նչ մեղաւոր բաներ անես, որ չեմ մտածում այդ կնոջ մասին: Ինչո՞ւ պիտի թէկուզ այն գինեբայր ժպտալով խոնարհուէր սրտ առաջ: Այստեղ մի բան կայ: Երեւում է, որ շատերի հետ է «սիրի-բիրի» անում...:

Ես տանջում եմ այդ մտքերից, իսկ նա ծիծաղում է, անփերջ ծիծաղում: Կրկէսի ա՞րջ եմ նրա համար, ի՞նչ է, ինչո՞ւ է վրաս ծիծաղում: Ու վրդովուած շուտ եմ գալիս գնում քնելու: Այո, կսպիտ, ասանց բարբի դիշերս մաղթելու:

3

Միւս օրը ուղի չգնացի: Ո՞վ դիտէ ով է... Մենակ ես եմ, որ յիմար պարզամտութեամբ տարում եմ չինց առաջին պատահածով, ու ամէն ժըպտացող ինձ բարի ու անմեղ է թւում: Չէ՞, իմ քեռին այդպիսի բան չի ասել: Սա ամարանոց է, երկրի բոլոր ծառերից ամէն տեսակ մարդիկ դալիս են այստեղ. ով դիտի ինչ պտուղ է...:

Բարձրանում եմ Պղի տաճարը, բլուրն անց եմ կենում ու նստում ձորի պոնկին: Երէկ այս ձորից մոտ քաղցի: Մանկան հրճուանքով ընդունեց մոտի ճիւղերը եւ սեղմեց կրծքին: Անմեկին մի տխրութիւն է համակում ինձ, եւ թում է, դա ոչ թէ երէկ էր, այլ շա՛տ վաղուց... Թփերի արանքից դեռ նրա երկիւղած հայեացքն եմ տեսնում ու լսում տաղնապալից կանչը՝ «Ստեռպա՛, Ստեռպա՛...»:

Չէ, յիմարութիւն է, նրա ողջ հոգին իր անարատ պարզութեամբ արտայայտած է աչքերի մէջ: Նա չի կարող վատ արարած լինել, այդ անկարելի է, այդ քեռիս է մեղաւոր՝ իր աւելորդ զգուշաւորութեամբ:

Ես վար ցտակեցի, անտառոտ լանջով վազեցի ցած, մտայ քաղաքային այգին եւ դեռ հեռուից տեսայ նրան՝ ծանօթ նստարանին նստած, գիրքը ձեռքին:

— Անշնորհ, անշնորհ կա՛վալէր, ո՞ւր ես կրեի, — փոքրիկ ձեռքը մեկնելով ասաց նա:

Չէ, լաւ է, վիրաւորուած չի, էլի նոյն վճիտ հայեացքը, էլի նոյն բարութեամբ ժպտացող աչքերը:

— Ներքի, ընկեր, ներքի... գոնէ անունդ իմանայի:

— Նո՛ւ, անունը կարեւոր չէ, հանիւր քարտէսդ, տեսնենք քեռիդ է՛լ ինչ է պատուիրեր, — խօսքս կտրեց նա:

Ես քարտէսը հանեցի ու կարգացի կարծիք նշանները՝ Ժելեզնափողակ, Էսենտուկի...:

— Լա՛ւ, գնանք Ժելեզնափողակ:

Գնացքից իջնելիս նա ուշադիր տնտղեց արտաքինս, ձեռքով յարդարեց բլուրիս ծալքերն ու ասաց.

— Այսօր մաքուր ես հագնուելի: Մի՛շտ պէտք է մաքուր հագնուել:

Ու այնպէս է ասում, որ չվիրաւորուեմ: Եւ ինչպէ՞ս կարելի է վիրաւորուել այդ պարզ ու հարազատ արարածից:

Բայց էլի շառագունում եմ: Սառանան տանի, եթէ չլինէր իմ այս կարծիքը, երեւի կրկէսի կենդանու նման հետաքրքրութիւն առաջ չբերէի:

Մենք ծառի հովում, կանաչի վրայ պտուկած զրոյց էինք անում: Արեւստի ու դրականութեան մասին եմ խօսեցնում. չէ՞ որ ես դրանց եմ ծա-



բաւի : Որքա՞ն եմ երազել սովորելու մասին, քաղաքի թատրոնի մասի՞ն... Իսկ նա շարունակ խօսքը փոխում ու սարի կեանքից է պատմել տալիս, պարզ քոչուորնորի կեանքից :

— Ինչ կը լինի մի բան սուլես, — խնդրեց նա, — այնպիսի մի բան, որ լսած չլինեմ :

Նա կարմրելով սուլեցի մեր սարերում յայտնի «Չորան բալաթին» : Ձգիտեմ հասկացա՞ւ, թէ ոչ, բայց երբ իմացաւ, որ մեռած հովուի ձօր երգն է՝ ուղղուած անտէր միացած հօտին, զգացուեց, և նրա սիրուն աչքերում արցունքի շիթեր երևացին :

Նա սիրտ առած սուլեցի աշուղի երգն «Ալմաստ» օպերայից : Նա կը լանուած լսեց ու խնդրեց .

— Ստեռլա, զանիկ, սովորեցրու ինձ այդ երգը, ուղղակի հայերէն սովորեցրու :

Ու մինչև արեւը մայր մտնելը ես եռանդով սովորեցնում էի :

Բայց շնայած իմ թախանձանքին, այդ երգը նա չերգեց, և այնպէս էլ չիմացայ՝ բնութիւնը ձայնով օժտե՞լ է նրան, թէ ոչ :

Այդ երեկոյ նա կտրականապէս հրաժարուեց ընթերցի գալ, բայց երբ տեսաւ վիրաւորում եմ, առաց .

— Ընթերցի դրամով տոմսեր կը գնես, կը գնանք «Նուզնի Օնեգին» օպերան տեսնելու . այսօր Մոսկուայի Մեծ թատրոնի խումբը գասարովի է եկել : Դու կարդացե՞լ ևս «Նուզնի Օնեգին»ը, — յանկարծ գարձաւ նա ինձ :

— Այո, բայց վատ եմ հասկացել :

— Ո՞վ է քեզ աւելի գուր եկել :

— Տասեանան : Միրում եմ նրա երազեաւ ու թախտոտ բնավորութիւնը : Նրա համեստութիւնն ինձ դուր է գալիս : Մեր զիւղի աղջիկներն էլ են ամաչկոտ ու համեստ... .

Նա կանգ առաւ և հարցական նայեց ինձ :

Նա նկատեցի, թէ ինչպէ՞ս նա իմ վերջին բառերից ցնցուեց : Երեւի ըզզաց, որ իրեն եմ ակնարկում : Մի պահ բարձր արժանապատուութեամբ վերելից ներքեւ նայեց, ապա էլի իսկոյն մտաւ իր զերի մէջ, պարզաբարձէն ծիծաղեց և ուսիս խփելով անփոյթ չպրտեց .

— Գնանք ներս... Լաւ կը լինի, որ մեր զիւղն էլ, մեր զիւղի համեստ աղջիկներին էլ մոռանա... .

Դրամը ձեռքիցս վերցրեց և յետեւի կարգի տոմսեր գնելով, մնացորդն ինձ մեկնեց :

— Կարմրելու կարիք չկայ, վաղն առանց կուպէկի ես մնալու, և այն ժամանակ ապրանքատար գնացքով էլ չեն տանի քեզ քո հայրենիքը... Լեւորնցու յիմար ինքնասիրութիւնդ էլ թոյլ չի աայ, որ ինձանից, մի առաւ կնոջից փող վերցնես : Ի՞նչ կը լինի այն ժամանակ քո զբոսիւնը... .

Մենք տեղաւորուեցինք վերնայարկում, ուր մեծ մասամբ զերկէսի հասարակութիւնն էր տեղաւորուած՝ աղմկաբար և ուրախ :

Դիմացի կերպասապատ օթնակից նշանաւոր դերոջներից երկուսը (այո, Հենց նրանք, ևս նրանց ճանաչում էի հեռուից հեռու) վեր կացան և յարգանքով գլուխ տուին ուղեկցուհու... .

Նրանց զէմքին ես տարակուսանք կարդացի . կարծես ասում էին՝ «Այդ ո՞ւր էք ընկել, տիկին այսինչ...» :

Ուղեկցուհին բարեսրտօրէն ժպտաց և աչքով ինձ ակնարկեց : Նրանք ծիծաղեցին ու գլուխները շարժեցին, կարծես ասում էին՝ «Ի՞նչ օյրնազն է այդ տիկին այսինչ» :

Ընդմիջումներին գրոտնելիս նա ինձ բացատրում էր Չայկովսկու կրա-  
 ժըշտութիան այնպիսի նորերանգներ, այնքան պարզ ու խորր, որ ես զար-  
 մանում էի նրա երաժշտական կարողութիւնների, նրա նրբին ճաշակի վրայ :  
 «Երեւի մանկապարտէզում երաժշտութեան դասեր է տալիս», մտածեցի ես :  
 Աւ նրա բացատրութիւնից յետոյ Չայկովսկին սկսում էր ինձ աստի-  
 ճանարար հասկանալի դառնալ, թէ եւ մինչ այդ էլ նրա լիրիկական մեղեդի-  
 ները ես հողով ըմբռնում էի. շէ՞ որ լեռը, հովը, բնութիւնը մեղմ ու ներ-  
 զաշնակ ձայներ շատ ունեն, նրանք հասկանալի են իմ հոգուն : Ես դա հա-  
 կացրի իրեն՝ ուրիշացաւ :

— Գիտեմ, հովիւները շատ երաժշտական մարդիկ են, միայն կուլտու-  
 րան է պահանջում : Դա՛ս կարգա եւ թատրոն ու օպերա շա՛տ գնա :

Ինչքա՛ն լաւ է նրա ներկայութիւնը, նրա փոփոցը, տաք շունչն ա-  
 կանջին մօտ՝ ներկայացման պահին : Բայց արիւնս պղտորում է, երբ ընդ-  
 միջումներին «բարձր հասարակութիւնը» օթեակներէց լտնետներով մեղ է  
 նայում, ժպտում :

Ներկայացումից յետոյ մենք թեւեւեւ անցանք լուսնի լոյսով ողող-  
 ւած ծառուղիներով եւ կանչ առանք իմ սենեակի առաջ :

Երբ նա ձեռքը մեկնեց, որ «բարի գիշեր» ասի, ձեռքն ավու՛մս պա-  
 շած խնդրեցի .

— Ինչ կը լինի, գնանք ինձ մօտ :

— Օհօ՛, այդ շեղա՛ւ... Ա՛յդ էլ է չեւոյր պատուիրել...

Աւ մատը վրաս թափ տուեց : էլի աչքերը, շարանճի աչքերը ծիծա-  
 ղում են :

Գուցէ կը գայ, երեւի «նաղ է անում» :

— Գնա՛նք, — պնդեցի ես :

Այնպէս լրջացաւ, այնպէս վեհօրէն ու արժանապատուութեամբ նայեց  
 ինձ, որ ես նսեմացայ, փոքրացայ նրա առջեւ : Այդ պահին նա կերպարա-  
 նափոխուեց եւ բուրբոյրին այլ կին դարձաւ՝ անմատչելի՛, բա՛րձր :

Բայց դա միայն մի պահ տեսեց : Նա նորից պարզամտօրէն ծիծաղեց  
 եւ օւտիս խփելով ասաց .

— Գնա՛, գնա՛ եւ հանգիստ քնիր : Միայն ա՛յն արա, ինչ չեւոյր  
 պատուիրել է :

Ապա անսպասելի հարցրեց .

— Վաղը կը գա՞ս ինձ ճանապարհ դնելու :

— Ո՛ւր, — անակնկալի եկայ ես :

— Կայարան... Գնում եմ տուն :

Ես մնացի շուարած : Այդպէս ուրեմն, այլևս ողջ կեանքու՛մս երեւի  
 էլ չտեսնեմ նրան :

— Նու, նու, մի՛ տխրիր, էլի կը պատահենք : Դէ, բարի գիշեր :

— Գոնէ ասացէք ով էք, ձեր անունը, հասցէն... — թախանձեցի ես  
 նորից՝ «դուք»ին անցնելով :

Չգիտես ինչու, դժուարանում է, բայց չի էլ ուզում մերժել, չի ու-  
 ղում սիրտս կտարել :

— Լաւ, — ասաց նա քիչ տատանուելուց յետոյ, — ահա իմ այցետո՛մ-  
 սը... Եւ անդիկեւելից մի քառակուսի թուղթ հանեց ու մեկնեց ինձ :

Մենք բաժանուեցինք :

Մենեակ մանելուն պէս այցետո՛մսը նետեցի սեղանին եւ բերանքսի-  
 վայր ընկայ մահճակալին :

Մանր էր, շատ ծանր հրաժեշտ տալ այդ կարճատեւ ու թովիչ երուզին...

Այդպէս էլ լոյս շիտակեցի եւ քնեցի հազուատներու հազիւ:

4

Առաւօտեան երբ արթնացայ, արդէն ուշ էր: Արուզ հազուակեցի եւ մեկնեցի երկաթուղու կայարան: Այնքան էի շտապում, որ մոտացայ նոյնիսկ այցեատման նայել:

Ինչքան մարդ է հաւաքուել այտե՛ղ... ու շատերի ձեռքերին ծաղկեփնջեր:

Ինչ-որ նշանաւոր մարդու են ճամբու գնում: Ո՞վ կը լինի տեսնես...

Յենուելի եմ ծառի բնին ու ուղատում եմ իմ ճամնկապարտէղի ուսուցչուհուն:

Խփեց երկրորդ զանգը:

Վերջապէս ա՛ւա նա, այն տիկինը, որին բերել են այդ անհամար ծաղկեփնջերը: Եփեղ վազոնի աստիճաններէ վրայ կանգնած՝ նա օդային համբոյրներ է յղում իր երկրպագուներին:

Հիմա զնացքը կը շարժուի, իսկ ո՞ւր է նա:

Արագ քայլերով մօտեցաւ ինձ իմ տանտիրուհին եւ մատը վրաս թափ տալով, ասաց.

— Երիտասարդ կովկասցի, այս ի՛նչ եմ տեսնում, ընդամէնը մի շարաթ է, ինչ այտուղ ես եւ արդէն յաջողեցրել ես ուշաբրահաճու զերասանուհիներին կամփայտութի՛ւն անել:

— Ի՞նչ դերասանուհի, ցնդուե՛լ էք, ինչ է:

Նա պատասխանի փոխարէն ինձ մեկնեց այն այցեատմար, որ դիշերը ես նետել էի սեղանին:

Ձեռքից յափշտակեցի ու կարդացի.

Լ Ե ՈՒ Կ Մ Ի Լ Ա Կ ՈՒ Բ Ր Ո Վ Ի Ն Ա

Ս Ս ՈՒ Մ Մ ի ու ք ե տ մ ժ ո զ ո Վ ը զ ա կ ի մ զ ք ր ա ս մ ո լ ո լ ի

Կարդացի ու մնացի շուարած: Ահա թէ ո՞վ է եղել պարզ շարերով ու հասարակ ասնդաշներով այդ կինը...

Նայեցի վազոնի աստիճաններին կանգնած տիկնոջը: Այո, թէեւ չքեղ, ինձ համար օտարոտի է հազնուած, բայց իսկ եւ իսկ նա է, նոյն մանկական անմեղ ու դիւթիչ ժպիտը նուրբ շուրթերին, նոյն շարանճի ծիծաղն աչքերում:

Սա ապշած, կարկամած նայում եմ ներքեւից, եւ նա հետզհետէ հեռանում է, բարձրանում ամպերից էլ վեր, բազմում է այդ կիսաստուածուհին արուեստի արեւային բարձունքին, այնքան բարձր ու պայծառ, որ մի լիոնաւոր մարդիկ տեսնում են, ճանաչում են նրան, հրճում են նրա հանճարով ու երկրպագում նրա արուեստին, իսկ ինքն այդ անմատչելի բարձունքից սիրալիբ ժպտում է մեզ բոլորին: Ու կորչում եմ, փոքրանում, ու շքնանում: Ինչպէ՞ս կարող է նկատել ինձ մեր մեծ երկրի միլիոնաւոր մարդկանց այդ դորշ զանգուածի մէջ...

Ես ցնցուեցի, ձեռքով կարծես ինձ է կանչում, այո՛, Հենց ինձ՝ երէկ-  
ւայ մտերիմ ու պարզ ժպիտով:

Տեղումս կարկամել-մեխուել եմ, միայն յիշում եմ, որ նրա տուած  
նշանով մարդիկ ինձ տարան վազոնի գրան ձօռ: Կոացաւ, ձեռքս ամուր սեղ-  
մեց ու քնջուեցիս ասաց:

— Մնաս բարբի, իմ լաւ շորան, կը սովորես, Մոսկուա կը գաս, եւ  
այն ժամանակ քեզ անմատչելի չեն լինի ո՛չ Ձայկովակին, ոչ էլ իմ երգերը...

Գնացքը շարժուեց:

Բազմաթիւ գլխարկներ ու թաշկինակներ շարժուեցին օդում, իսկ նա,  
վազոնի բաց պատուհանից սիրուն դուրս գալու հանած, օդային համարյո-  
ւներ էր ուղարկում բուրբին: Այո՛, բորբոխ... Ես նորից փոքրացայ ու կո-  
րայ ընդհանուրի մէջ...

Ու այդ օրից առաջ գնալու, աբուեասի բարձունքներին հասնելու  
տենչն ինձ հանգիստ չէր տալիս եւ շարունակ մղում էր դէպի գործ:

5

Տարիներ անց ես արդէն գրականութեան մարդ էի, թերթի խմբագիր  
եւ հայ ժողովրդի պատուիրակութեան հետ գնացել էի Կրեմլ՝ կառավարա-  
կան ընդունելութեան:

Երբ Կրեմլից դուրս եկանք երջանկութիւնից փայլող դէմքերով եւ ըլ-  
տապեցինք մեզ համար պատրաստուած շքեղ բանկէտին, այդտեղ անակնկալ  
կերպով ես նորից հանդիպեցի նրան:

Ճաշակով հագուստի, արդէն նրբացած իմ դէմքի եւ կերթ շարժուած-  
ւերի մէջ նա գոռաբարձութեամբ ճանաչեց նախկին հովուին:

— Այո ո՛ւմ եմ տեսնում, այս ո՛ւմ եմ տեսնում, — գոչեց իր գրըն-  
դուն ձայնով եւ, ի գարմանս ներկայ եղողներէ, ինձ իր գիրկն առաւ: —  
Ինչպէ՞ս է փոխուել... ինչպէ՞ս, — կրկնում էր նա շուռուձուռ սալով ու  
բուրբ կողմերից զննելով ինձ:

— Նո՛ւ, թեոխ ինչպէ՞ս է, թեոխ է՛լ ինչ նոր բաներ է պատուիրել,  
— ինձ այնքան ծանօթ ծիծաղով ասաց նա: Եւ առանց պատասխանի սպասե-  
լու շարունակեց:

— Էլ չե՞ս կարճում, առա՛, կարճում ես, թէ ոչ, թէ՞ երեսիդ վա-  
րագոյրն արդէն պատուելի է... Այո՛, զգում եմ, որ այլեւս այն չես, այլ  
եւս չես շուռուձուռ... Փոխուել է ես... Լաւ է եղել, որ փոխուել ես...  
Բայց... ափսո՛ս, ախ, ափսո՛ս, որ փոխուել ես... Այնպէս անելի լաւ էր,  
այնպէս շա՛ւ լաւ էր... Այնպէս դո՛ւ էիր, ինքնատիպ... Հիմա քեզ նման  
այնքա՛ն մարդ կայ մայրաքաղաքում...

Ասաց շտապ կցկտուր ու ափսոսանքի նկատելի շշտով: Եւ ես զգա-  
ցի, թէ ինչպէս մարեց դուանքի ինձ ծանօթ փայլը նրա երկնագոյն անթե-  
րում, ու... հետզհետէ սասեց, հոգով հեռացաւ ինձանից...

Բանկէտի վերջում նա ոտքի ելաւ եւ երգեց իմ սովորեցած երգը՝ ա-  
չուզի արիան «Ալմաստ» օպերայից: Երգեց այնպէ՛ս սրտատուչ, այնպէ՛ս  
թախծու...

Ես զգացի, որ նա այլեւս իմ ներկայութիւնը չի զգում եւ կիւրովոր  
դըսկում տարիներ առաջ թողած հովուին է յիշում, իր երգի սրտատուչ եւ  
լեւէջներով նրա՛ հետ է խօսում...



Յ. Ք Ի Ի Ր Ք Ճ Ե Ա Ն

### ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՄԸ՝ ՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՆ Ի ԽՆԳԻՐ (ՆՈՒԹԵՐ՝ ՍԵՄԻՆԱՐԻ ՄԸ ՀԱՍԱՐ)

Շատոնց ընդունուած է «մանկավարժութիւն» եզրը հասկնալ ոչ-տառացի իմաստով. եւ «մանուկ» ինչ որ անոր ստուգարանութեան մէջ կը յիշցնէ կրկէսի «մարդուած» շուները, կամ փորձարկային լարիւրինթոսներու մէջ իրենց ուղին փնտռող տանէտները: Պէտք չունի՞մ, հետեւաբար, արդէն ընդունուած ճշմարտութեան մը համար պայքարելու. բայց մանկավարժութիւնը՝ ինք՝ կը շարունակէ, ահա՛ երկու դարէ ի վեր, իր ճշմարտութեան համար պայքարիլ: Գիտենք, որ այս եզրը, որ, ե՛ւ իբր յղացք, ե՛ւ իբր ըստուգարանութիւն՝ մեզի կու դայ Հեյլենտիան Հնադարէն, պահպանուած է՝ իր բովանդակութեան պարտադրուած հիմնական փոփոխութիւններու զննով-կրնանք ըսել, որ այսօր անիկա կը սահմանուի իբրիւ գումարը ծանօթութիւններու եւ կիրառելիութիւններու, որոնք կ'օժանդակեն «նոր» սերունդներու փթթումին. կամ, ուրիշ սահմանումով մը (արդէն աւելի երկզիմի...), իբրիւ այդ սերունդներու վարժեցումը՝ «կեանքին», եւ այլն, եւ այլն: Աւելորդ է շարունակել այս ընդհանրութիւնները, որոնք կը վիտան հողերանութեան, մանկավարժութեան ծանրախոհ, ինքզինք յարգող մտէն դասադիրքի մէջ, անշուշտ զարդարուած քնքերով եւ վիճակադրական տախտակներով, աւելի եւս յարգելի դառնալու մտահողութեամբ: Ըսել չէ, որ իմ խօսքս դերի-վեր կը նկատեմ մերժած տափակութիւններէս. առիկա ճշգիւի է դեռ: Մը-տածողական այս անդրադարձս դոնէ՛ տարբեր բան է, նախ եւ տուալ: Մանկավարժութեան շուրջ դարձող մտածում մը, ինչպէս իմինս, մանկավար-ժութիւն չէ տակաւին, այլ, պարզապէս, մտածում: Մանուանող՝ որ հոս, հարցը պիտի վերաբերի որչա՛ մտածումի մը, որոչ մտածելածեի մը:

Մեկնակէտիս իսկ, ուրեմն, կը խուսափիմ «մանկավարժութիւն» յը-ղացքի մէկ հիմնական հարցադրումէն, որ կը վերադառնենք նաև իր կիրարկ-ման մէջ: Այսինքն.— Մանկավարժութիւնը պարզապէս «վարժեցում» մըն է, քէ... վարժեցում՝ ազատութեան: Այս հիմնական հարցադրումէն խու-սափելով, հաւանաբար խուսափած կ'ըլլամ նաև ժամ-ժապ Թուոսյէն երկու-երեք դար ետք եկած ըլլալու, կամ 40ական թուականներէն փախած ժամա-

նակավրէպ գոյապաշտ նկատուելու անպատեհութիւններէն: Ռուսափած կ'ըլլամ, մա'նաւանդ, անպատեհութենէն՝ Հարիւրաւոր էջերով պատկասելի աւարտանառ մը խմբագրելու (եւ աւարտին անգրապատնալու, որ վերջին Հալուով բան չեմ գիտեր մանկավարժութեան մասին): Նախընտրելի է անգիտութեան այդ յայտարարութիւնը ընել հիմակուրէն, եւ խոստովանել, որ զանազան ընթերցումներէ եւ աւելի քան տասնամեակ մը մանկավարժական (հետաքրքրական) փորձէ ետք, — չեմ գիտեր, թէ ի՛նչ է մանկավարժութիւնը: Իսկական կամ երեւութական այս անգիտութիւնը միակ հակասութիւնը չէ այս պահու կացութեանս արդարեւ, ո՛չ միայն կը պատրաստուիմ չգիտցածին մասին խօսելու, այլեւ ջատագովական խորագիր մը կու տամ իսոյքին — խորագիր՝ որուն երկու բառերը՝ «մանկավարժութիւն» եւ «տարբերութիւն» յաճախ կը վանեն վերար. ամէն մանկավարժութիւն չի՞ թախիբ, որքոն ալ «ազատական» ըլլայ կամ «յուսակոյնական», բնորոշներ՝ մտնելներ առաջարկելու փորձութեան: Սակայն, փոխանակ Հարցը զնելու իր անպարփակելի ընդհանրութեան մէջ (եւ վերադառնալու իր սկզբնական Հարցադրումին՝ վարժեցումը քէ ազատութիւն) —, կ'առաջադրեմ գայն ճշգրտել, այսինքն՝ Հարց տալ, թէ «հայեցիութիւն» կոչուած տեսակարար ինքնութիւնը կրնա՞յ փոխանցուիլ զբնական կամ բացասական բնորոշներու ընդմէջէն. կամ, աւելի ընդհանրօրէն, անիկա կրնա՞յ պարփակուիլ Առյուծաբնակ եւ այլ Առյուծաբնակ դասական ստորագրութիւններուն մէջ: Ռորհրտածութիւնս պիտի կիրարկեմ «երիտասարդութիւն» անուանուած բնակչագրական խաւին (ինչ որ պարզ պայմանականութիւն է եւ կը ծառայէ միմիայն արդարացնելու «մանկավարժութիւն» եզրը): Ըսենք, որ երիտասարդութիւնը, ինչպէս այլուր, հոս ալ առաջնահերթութիւնը պէտք է ունենայ —, եւ բաւարարուի՛նք: Հարցը, որ աւելի ճշգրտօրէն կը դրուի, ուրեմն, հետեւեալն է. — Ինչպէ՛ս կարելի է հայ դասակալ Սփիւտի մէջ: Հարցադրումը զգալիօրէն կը տարբերի «ինչպէ՞ս կարելի է հայ ըլլալ» հարցումէն, որ այլ առիթով գրուած է ուրիշներու կողմէ:

Այս առաջադրանքով, արագ «ընթերցում» մը պիտի ընեմ երկու գրութիւններու, որոնք ներյայտօրէն կամ բացայայտօրէն կը յուզեն սփիւտքեան մանկավարժութեան մը Հարցը: «Մտածուած»՝ 1930ի եւ 1950ի միջեւ, անոնք երկուքն ալ կ'արտայայտեն զոյութիւն ունեցող ընկերա-մշակութային «զգազափարարանութիւններու» միաձուլութեան բարձրագոյն աստիճանները: (Կը մնայ Հարց տալ, թէ նուազա՞ծ է արդեօք այդ միաձուլութիւնը...):

Առաջին գրութիւնը կը կրէ 1930 թուականը, եւ Վազգէն Շուշանեանի ստորագրութիւնը. Շուշանեանի վիպային զործը ճանչցողներուն ասորբի՛նակ պիտի չթուի մէջըրեւած հատուածներուօ ոճը: Ընթերցումէն ետք, պիտի բաւարարուիմ քանի մը մտանանչումներով:

Շուշանեանի գրութիւնը ո՛չ ամբողջուօ զեկուցում մըն է եւ ոչ ալ հանգարտ ու պայծառ խորհրդածութիւն մը: Գրոնիկ մըն է անիկա, լոյս տեսած՝ Փարիզի «Յառաջ» օրաթերթին մէջ, «Ինչպէս կը մաշի հայ ժողովուրդը» խորագրով, եւ հարազատօրէն կ'արտայայտէ զգայնութիւնը ինքզինք «չափահաս որբ» կոչող սերունդին: Առանց խորացնելու այդպիսի ինքնանշանումի մը ենթադրութիւնները, մասնանշեմ միայն, որ ան լայն հեռանդկարներ կը բանայ մեր հայրերու կամ մեծ հայրերու սերունդի ախտաբանական խորքին վրայ: Գրութիւնը կը պատմէ ու կը նկարագրէ, յարողական լուսարձակումներու ձեւին տակ, 1920էն 1930ի Փրանսահայ երիտասարդութեան կեանքը: Երկու մէջըրեւում բուսարար պիտի ըլլան արթնցնելու արդէն՝ մեր մէջ պահուած հոգախտաբանը, մենք՝ որ սորված ենք (զոնէ՛) բանաձեւեր խորհրդանշել մեր էական «պակաս»ը, «պարապ»ը, ճանչնալ եւ ընդունել

*Օտարը, որ միշտ եղած է ամեն ինքնութեան մէջ. ուրիշ խօսքով՝ որ կը յաւակնինք հասած ըլլալ կրկնակ պատկանելիութեան, սփիւռքայութեան:*

*Բայց խօսքը ձգենք այս գլխաւահաս ուրջին եւ, արտաճանաչելով հանդերձ, գործենք հասկնալ.—*

Ո՞վ են այս քիսադէմ, սեւ կամ խոր մութ աչքերով ու խոշորաբերան արդիկը՝ որ յաւաքար կեցած ինքնաշարժներուն քով կը ծխեն,— Հայեր: Ո՞վ են, դէմը, սրմարանին յառաջամասը նստած խումբ մը այս ճանաչողութեամբ մարդիկը, — Հայեր: Վազը պիտի չաշխատին միթէ... Ո՞վ են սա երեք երիտասարդ տղաքը, որ կը բարձրանան, ծեփծեփուն ու յոյլ: Հեռուէն կը գառ, որ պէտք է լաւ բուրն: Կ'անցնին զլիտարաց, շագակարտ, բարձրաձայն: Ինչպէ՞ս կ'ըլլայ, որ գոռուց մագեր ունին: Սափրիչի ունելին աշխատած է իրենց զլուխներուն վրայ անշուշտ: Ինչպէ՞ս լաւ հագուած են: Ո՞վ են, ի՞նչ են, — Հայեր, աշխատանք տղաք: Բայց ո՞ր կ'երթան գիշերուան այս ժամուն...  
*Լուս, մտախոհ՝ կը հետեւին իրենց: Յապաղած ազդիկներ կ'անցնին երեքնելով իրենց գէր կամ նիւար երանձները ու ամեն անգամ հայ տղաքը ակնարկութիւն մը կամ հիացումի, ծաղրանքի, ցանկութեան կամ գարշաճի արդարեւ ազազակ մը կը ձգեն գետին, ազգիան ոտներուն առջեւ: Օգը խոհաւ է միշտ, գիշերը՝ շնչատ: Լէ ՀԱՆՆ գացող մթերքի կտաշար մը կ'անցնի դանդաղ, ծանրամարմին, ծոյլ, շնչատ՝ ինչպէս գիշերը, իր թանձր ծուխովը քուճարներով արդէն ծանր ու թուճար օգը: Մեր ու քուճարեան դատարկապարտներ կը սլաւան յալօրէն, պարտքներով իրենց ցաւազին ապտեղու-թիւնը:*

Տղաքը կը քայլի դանդաղօրէն, բայց ազակեղն: Յետոյ կը կենան լուսաւոր ու լայնօրաց դրոմ մը առջեւ: Լայսին մէջ՝ գումատ են ու խոնջ: Իրենց նայածներուն մէջ կայ անորոշ ճանաչողութեամբ, բռնի ու հանգստութեամբ կարտ, այլիւ հանգիստ ու գիտութեամբ ծարաւ: Մէկը դեռ մանուկ է կարծես, փողոցի մանուկի տառապած դէմքով: Հայու սեւ ու ազուր աչքեր ունի ու էգի շարժումներ:

Շնչատ ու ծանր է օդը (նաեւ) գետնափոր այս արածին մէջ: Ի՞նչ ծանր հոտ է ասիկա, — էգի, գանգան բուրումներու, ծխախոտի, սգելից բնականներու, մարդկային շունչի, բրտիմքի ազտի ու գարշ հոտ: Խորքը ցած բնով մը կայ ու արեւելեան նուագածուններ՝ թանձրամարմին ու ծոյլ կը յօրանցեն իրենց նուագարաններուն վրայ: Մէկը թանձր է, միւսը ուտի, կայ չուքակ մը, տարագիր դասի մը ու այս բոլորին մէջտեղ մերկամարմին ազդիկ մը՝ խնկէշ, մեռած աչքերով: Քիչ մը վարը ճագն է: Լպրծուն ու փայլուն մագերով, լպիրշ շարժումներով երեք-չորս տղաք, որ գեղեցիկ ըլլալու զիտակցութիւնն ունին եւ որ գտնելի են միայն՝ կը նուագեն անօրինակ գործիքներու վրայ: Դաշնակ մը կը հեկեկայ: Սպանիական մեղեդի մըն է, ինչպէս փողոց՝ որ սուտ ու հասարակ յուզումով մը կը գիւնովցնէ լայնօրէն: (...)

Լպրծուն շարժումներով նազ նուագող տղաքը, որ յայտնի չէ, քէ ինչ ազգութեան կը պատկանին, որ գուցէ չեն պատկանիր. սեւէ ազգութեան՝ մերթ ընդ մերթ լիր ազգակներ կ'արձակեն:

Դէմը, բեմին քով՝ ուրիշ խումբ մը կայ՝ կրկին երիտասարդ հայերու: Ընտանի դէմքեր են, լուսաւորակն (՞) Հայու համակրելի, գրեթէ սեւ դէմքեր: Ու յետոյ՝ այն երեք հայ երիտասարդ տղաքը, որ ծառայիկն վրայ էին քիչ առաջ: (...)

Հայոց ժողովուրդ, Հայոց ժողովուրդ, մեծ քաղաքին խնկէշ ու համայնակով գիշերուան մէջ քու երիտասարդ տղաքներով կը հիննաս, ստաբերկրեայ պարասրահներու մէջ՝ քու ազդիկներովդ *ԻՔՔԻՔ ԹԵՄԻՔ* ու *պարբէն*

կը պարտա ու քու օտարացած նուագածուններով թրջակամ փողոցային երգեր կ'երգես արեւմտեան քաղաքին սրտին վրայ, Հայոց հագարամեա՛ն ժողովուրդ: Ո՛ր պէտք է քեզ փնտռել, Փարիզի սեւ արուարձաններուն անշուք փողոցներուն մէջ՝ ուր մանուկները պարզօրէն կ'ապաստին. թէ՛ հոս՝ ուր ահա տասներկինգ հայ երիտասարդներ խմբով կը գիջանան, առատեան երեքին, մտացած սմէն բռն:

Ճագը կը վերակնի: Յայրատ ու տգեղ արար մը՝ արար պարուհիի մը հետ դէմ դիմաց կը տարնեն յետոյ: Օդը՝ շնչատ է միշտ: Կարծես թէ հիւսնդ ենք բուրս: Արար պարուհին, պազուտ ու լայն բերանը բաց կը կախուի անկարող ծերուկի մը վրայ, որ թղթադրամ մը կը օտնեցնէ անոր յոգնած ծիծերուն մէջ: (...)

Խոնջ է այս: Հայ կիներ եւ թրքուհին կը պարեն դէմ դիմաց: Բոչորը ոտքի են կրկին ու կրէէ շողացող աչքերով կը հետեւին երկու կիներուն գոնիկի, խենկշ, շուայտ շարժումներու: Հայուհին բարակ է, երկար: Թրքուհին աւելի լեցուն է ու սպիտակ: Ու իրենց աչքերուն մէջ՝ սաստանակ կը քրքայ, լեզուն դուրս գաած: Հայ կնոջ երանգները կարծես պիտի խախտին իրենց անդէն: Երկուքով ինկան յատակին վրայ ու կը սուրան գարջ ու անկարելի գալթառամներով: Պար չէ տոնկա, այլ՝ կրէի ճապայ: Խուժանը կը ճշայ կրէն, մարդիկ չկան հոս, այլ՝ անասուններ: (...)

Ինչպէ՞ս կը պատահի, որ խորհեամբոյս բազմութեան մէջ, նայուածքը անընդհատ կանգ կ'առնէ: Իրենց վրայ: Հագուած են միւսներուն նման, յանախ նոյնքան լուս: Մափրուած են լուս: Բայց հագար հոգիի մէջ սիրտդ կը զգայ, որ հայ են: Անշուշտ արեան ժայնն է ատկեա: Որովհետեւ բուրս նոյն արիւնը կը կրենք, Ռիւ Լաֆայէթի թուրքերէն սկսեալ մինչեւ Սիթրոյէնի բանուարները: Հայոց ժողովուրդն է ստիկա՝ այս քաղաքին ցաւերուն, աշխատութեան ու շուայտութեան մէջ, որ ինքզինքը կը նանչնայ, որ ինքզինքը կ'առնէ՝ խալ ու քաճուն անկուրքեամբ մը: (...) Կու գան գաւառներէն, պանած սակաւին լուսաւորչական հայու անուշ միւտոնը, որ յետոյ պիտի կարծեցնեն անշուշտ... (...)

Լուսաւորչական հայու տաք դէմք մըն էր այդ տղունը, քիչ մը գոց, քիչ մը շատ մուր, կարծես քիչ մը թիւտ գիծերով:

Եկած էր ուսանելու, նախակրթարանը նոր աւարտած էր: Երբ կը նայէր աչքերուդ, կը զգայիր, որ երկչոտ է, կոյս, հոգին մաքուր է ու սիրտը անուր: Առաջին օրերը անմեղ ու լուս տղայ մըն էր. գլխարաց՝ մուր ինկած ատենը կ'երթար տուն: Երբ հանդիպէր՝ տեղուկ ձեռքն կը սեղմէր ու կը զգայիր ամբողջ բարեկամութիւնը, որ կար այդ սեղմումին մէջ: Կ'ապրէր չարքորս յարկի խուց մը, միճակ, անընկեր: Բայց շատով ընկերներ գտաւ: Մէկը զինք տարած էր հատարակ, գարջ հանրատուն մը: Տարած էր գուցէ լուս տաղութեամբ: Կոնիսելու համար վտանգը, որ կը փաթթուի բուրս տղոց օրումբներուն այս քաղաքին մէջ: Այս տղան անկայն իրենցաւ տիպին մէջ՝ մինչեւ վիզը: Երեք ամիս տառապեցաւ: Կ'ուզէր քայքայել, բայց կը զգայիր իր ամբողջ ցաւը: Կարծես կասկածելի բժիշկ մը կը բուժէր գայն ու հիւանդութիւնը անշուշտ կը եիննար:

Հիմա ուրիշ տղայ մըն էր ու: Խօսերուն ու շարժումներուն մէջ ազատ էր, համարձակ, գրեթէ լիբր: Հաւաքած էր փողոցի անարգ բռտամբերք մը ու ամէն անգամ դէմքիդ կը թքնէր փողոցային գոնիկի խորհրդածութիւններ: Դարձաւ ծոյլ, անաշխատ, դիւրին կեանքը սիրող: Օրումն ամէն ժամուն սրբաբանն էր, մինչեւ ուշ գիշեր, մինչեւ ուշ առատ: Սկսաւ խմել ու խմելը



սիրել: Օր մըն ալ ետ կանչեցին գայն ու տխրութեամբ գնաց ընդմիջտ: Խնչ տարաւ հետը: Բագնացի յիշատակներ, քանի մը փրանսերէն բառ ու հին ջերմամիզութիւն մը: (...)

Քիչ մը թույն էր ու քիչ մը թանձր, աչքերը սակայն գեղեցիկ էին ու սեւ, առատ, քաշաշին մազեր ունէր: Որպէս ամբողջութիւն՝ մարմինը ներգաշմակ չէր: Մէջքէն վար այդ մարմինը եետզիտէ կը հասածար: Բուսերը գրեթէ տգեղ էին, բայց շեռ գիտեր ի՞նչ բան կար վրան, որ սիրտը կը մնար շփաթ իր առջեւ: Առաջին անգամ գայն տեսայ ամերիկեան սրճարանի մը մէջ: Նստած էր լեռն ուսանողի մը հետ, ծունկը ծունկին ու գլանիկ մը՝ Սերկուած շրթունքին վրայ: Կուրծքերը հարուստ էին ու իր բոլոր շարժումներուն հետ՝ կարծես պատրաստ էին ցատկելու: Վայրկեանը անգամ մը կը հակէր Էովի տղուն վրայ ու խնկնչօրէն կը համբարուէին: Երկրորդ անգամ գայն տեսայ փաէր սրճարանի մը մէջ, արեւայական ուսանողներու հետ՝ որ ձեռքէ ձեռք կ'անցընէին գայն: Կուրծքի, երկար սաւն, ինքզինքն հասնող, թէ ուսանողուի է. գրամի համար չ'ընէր, բայց ընկերներս աչքերս բացին: Ուշ գիշերներուն կը հանգիպէի փողոցը: Գիտէր, որ հայ եմ: Աչքերը կը կախէր ու քայլերը կ'արագացներ: Տեսայ Փարիզի անյատակ գիշերը կը ծածկէր գայն աչքերէս: (...)

*Անժիլապէս Համաձայն պիտի ըլլանք իրարու՝ հաստատելու Համար, որ նախ եւ առաջ, Շուշանեան մեզի կ'երեւի Վիտաշը, զօտարը ստանձնելու դժուարութեան մէջ: Նշենք նաեւ, որ ստանձնման այս անստակութիւնը, որ «ճուրղոց» սերունդի մը առջեւ տառապանք կ'ենթուզէ՝ շուտով կը ստանայ սեռային ընդմիջ: (Արատազրուած Հաստատմանը արագած կացութիւններէն աւելի, նոյնիսկ գրեթէ ամբողջութեամբ՝ պիտի ծանրանամ Հեղինակի՛ն վրայ, ի՛ր Վիտաշեանական յիշատակը — որքան միտնէ՛րն ալ ունենան նոյնպէս բացայայտ առարկայական արժէք): Եւ այդ Վիտաշը, զոր չափահաս որբը անասակ է ստանձնելու՝ առաջին Հերթին՝ միւս սեռն է. առիկա է կատաճառը՝ սեռային տարբերութեան իբր կորուսումի վայր երեւելուն: Հոս խախտուած զայութեան՝ ամբողջութիւնը, սերեմն, Շուշանեանի բառով, «էզնն է, կամ զօտարուհին»: Կա՛յ կարիքը ճշդելու, որ մեր զրոնիկազրին սեռային զարդարութիւնները կասկածի ենթարկող ամօթխած սպրդատացութիւն մը չէ ըրածս: Խանգարումը, որուն կ'ակնարկեմ՝ հոգեկազմի իւր խախտում մըն է, որ կ'ընայ զգործնականօրէն մէջ Հետեւանքիս շունենայ իսկ: Հետեւարար, Հեռու են այս զինարկումէն՝ զանապանային բամբասանքի եւ զայթուկութեան արամազրութիւններ:*

Հարկ է, սակայն, աւելցնել, որ խանգարումը կ'երեւի ո՛չ միայն օտարուհիին, այլեւ զսեփականն կնո՞ր՝ Հայուհիին առջեւ նաեւ. ինչ որ ցոյց կու տայ, թէ Հարցը ծագումի, ազգութեան տարբերութեան չի վերաբերէր, այլ՝ Հիմնական, ամբողջային այլութեան մը:

Բայց պէտք է շարունակել. աւելի մանրամասնող վերլուծում մը այս դրութեան, շուտաւարուած նաեւ Շուշանեանի գործէն ուրիշ տարբերով, անմիջապէս պիտի յայտնարե՛ր, որ ինքնութեան (կամ... այլութեան) պատճառով տաղնապահար սերունդի մը այս տառապանքը՝ արտայայտութիւնն է մեզի ծանօթ զգացական երկդիմութեան. անիկա կը ծածկէ ո՛չ միայն ինքնահանոյ մագոխականութիւն մը, այլեւ՝ ամօթահար դիտամոլութիւն մը (voyeurisme): Փաստը Շուշանեանը ինքը կու տայ, իր վէպերէն մէկուն մէջ ըրած խոստովանութեամբը. — «Կը ստէ ան, որ կ'ըսէ, թէ երեսունքի տեսքը համոյ՛ք չի պատկաներ իրեն»: Եւ Շուշանեան միակը չէ իր սերունդին մէջ:

ուրիշներ ալ կը ցուցաբերեն որոշ զգացական անկանոնութիւններ՝ տարբերութիւններու ամէնէն հիմնականին՝ սեռային տարբերութեան առջեւ — Շահնուր, Որբունի, Նարդունի... կարելի է ցանկը շարունակել: Եթէ ընտրութիւնս մտաւորականներու, գրողներու միջեւ է կատարուած՝ անոր համար է պարզապէս, որ այս վերջիններէն միայն իրենց երկերուն ընդմէջէն, մեզի ձգած են արամադրելի տարրեր՝ հոգե-ընկերարանական խոյզի մը համար: Եւ դրեթէ մեզմէ ամէն մէկը սխիտ կարենար, իր մանկութեան աշխարհի չափահասներուն մէջ, դանկտ տարրերը, զորս մատնանշեցի: Բացառապէս է, ինծի համար, որ ցեղասպանութենէն անցած եւ արեւմտեան Սփիւռքը կազմած հայ երիտասարդութիւնը արտայայտած է այլութեան, օտարի իր մերժումը՝ մասնաւոր մարմնի, սեռային տարբերութեան գետնին վրայ, աւելի՛ ջան մշակութային, մտային մակարդակին. օտարը՝ իբր ճանաչում, «զիրութիւն»՝ յաճախ ստանձնուած կը թուի (անշուշտ ինչ կը վերաբերի այս սերունդի ճամբորդներուն): Մասւոր վերնակատոյցները՝ զարգանալով՝ յաճախ կայացուցած են պաշտպանողական համակարգ մը, ծածկող՝ օտարի մերժումը՝ մարմինին կողմէ: Պէտք է անմիջապէս ճշդել, որ արեւմտեան այս Սփիւռքը ցոյց տուած է մերժումը օտարին նաեւ իբր միտք, իբր ճանաչում՝ մասնաւոր մտաւորապէս համեստ իր խաւերուն մէջ: «Հայաստանացիներ»-ը, իբր զաղափարարանութիւն, յաճախ դրոշմուած է «օտար» ճանաչումի, «օտար» մտքի մերժման ձեւին տակ:

Առանց ծանրանալու այս հիւանդութեան օխտանանջման վրայ, բաւական բացայտ՝ գրութեան մէջ, կը բաւարարուիմ մասնանշելով, որ արեւմտեան «օտար» (ճառ...) յաճախ միջնորդ կը հանդիսանայ թուրք-օտար»-ի (թրքական երաժշտութիւն, պար...) ներածումին. եւ Շուշանեանի ըզրացական, ենթակայական անջրպետը նիշդ նոյն խառնուրդը կը յայտնարորէ իր մէջ, ինչ որ պարարահի ներքին տարածութիւնը, իր կողմէ նկարագրուած — խառնուրդ մը «եւրոպական» եւ «թրքական» կալուածներու: Բայց ինչ որ անմիջապէս ուշադրութիւն կը դրաւէ՝ հայ եւ թուրք պարուհիներու զէմանդիմանութիւնն է, անդուզական տեսարան մը՝ հոգեվերլուծիչի մը համար. պարզապէս, «սեփական» կիներ՝ հայուհին ներդրուած է Սեյիմէ-թրքուհիին՝ արմատական «օտար»ին կողմէ, դայն իր մէջ կը կրէ՝ Շուշանեանին պէս, որ, այս անհատաալիտրէն թելադրական տեսարանով, կը ցուցադրէ «օտար»ին անխուսափելի ներկայութիւնը իր իսկ մէջ. Հայուհին հայութեան այլացումը, պոռնկացումն է, կատարուած՝ Սեյիմէ-թրքուհիին կողմէ, արեւմտեան-օտարուհի պոռնկալարին մէջ. Չեմ շարունակեք ցուցմունքներս աւելի հետու. Հաստատներու շարքը ինքնին՝ բաւական պերճախօս է արդէն. չեմ ձեռնարկեք նաեւ անոր լեզուական քննութեան, թէ եւ ան ալ աներեւակայելի դիտերու կրնայ տանիլ մեզ:

Նոթերուս այս առաջին մասը եզրակացնելով, կը յիշեցնեմ սկզբնական բանձեւումս. այսինքն՝ որ ինքնութիւնը չի կրնար «ըլլալ» առանց այլութեան. որ «օտար»ը կ'ապրի մեր մէջ. որ իր մերժումը շնահեղձ կ'ընէ ինքնութիւնը: Այս դարու առաջին կէսին Արեւմուտքի մէջ ապրած եւ մտածած սերունդը ցուցաբերած է, մարմնի (յաճախ նաեւ ճանաչողութեան) մակարդակին, յաճախադէպ անտակութիւն մը՝ ընդունելու սեփական, ներքին, անխուսափելի «օտար»ը, եւ դայն համարկելու անով Հարստացող ինքնութեան մը: Ստանձնումի այս անտեսուած պահը անհասի (նաեւ հաւաքական «անհաս») գոյացման անհրաժեշտ ըլլալուն՝ հաղուարդէպ է եղած, պատմա-աշխարհագրական այդ դաշտին մէջ, համարկիչ ու համարկեալ ինքնութեան մը փթթումը:

Այս խանդարումը կը տանի երեք գլխաւոր կատոյցներու. նախ՝ ոչ-

տարբերակեալ, նախնական ինքնութեան, նոյնութեան տիպարին (պահպանուած) տիպար, — երբեմն ճշտեմատագործական» տիպար կոչուած), ապա՝ բարձրագոյն աշխարհի տիպարին (զմուռուած) տիպար, — կոչուած նաեւ՝ «արտաժամանական» տիպար)։ Եւ երկուքին միջեւ՝ շուշանեանական տիպար, որ կարելի է կոչել «պարտաւորման» կամ «ամուսնաւորման» տիպար։ Կարելի է նաեւ խօսիլ չորրորդ տիպարին մասին, որ կրնանք բնորոշել իբր «համարակեալ աշխարհեան» կամ «տարբերակեալ ինքնութեան» տիպար։ Կան դրադառնա՞ծ եզրակացութեանս մէջ։



Ինքնութիւն [աշխարհիւն] հարցը տարբեր ձեւով կը դրուի արեւելեան Սփիւռքի մէջ։ Բոլորիս ծանօթ պայմաններու մէջ, ճոտարչին հետ յարաբերութիւնը հոն արտայայտուած է նուազ ճշմարտամային ձեւով՝ առերևոյթ։ Ըսել չեմ ուզեր, որ հոյովոյթը հոն եղած է աւելի յաջող։ Մէջ Գարգալէս անող սերունդները պահուեր են (զժուար է փաստելն ալ, որ նոյն ձեւով չէ շարունակուիր դեռ...) գոց, Զերմանոցային, հականերուած (եւ ոչ պատասխանուած) կարելի է ըսել, շարունակելով փոխարեութիւնը...) միջուրտի մը մէջ, Եւ մարմնի, Եւ ճանաչումի դիմանկարու վրայ։ Արեւմուտք-ճոտարչը, իր հետաւորութեան պատճառով, զգացուեր է արեւելեան Սփիւռքի հորիզոնին՝ իբր քաջող, դրական բեւեռ. մինչ, լրացուցիչ բեւեռումով մը, արեւելք-ճոտարչը, «տեղական» օտարը վերածուեր է ժխտական բեւեռի — առկէ՝ արհամարհանք, ինքնամեկուսացում. առկէ՝ քաջողութիւն՝ դէպի Արեւմուտք։ Քաջողութիւն՝ սակայն ոչ գերծ Արեւմուտքի մէջ Եւրոպեանեան զգացած երկզիմութենէն։ Գարգալէս օտարին «լսանալ» «հետաւոր» է։ Կարեւորը՝ հոս՝ ա՛յն է, որ այդ երկզիմութեան մարմնական արտայայտութիւնները կը ներժողուին, կը «զբազնուին» ընկերա-մշակութային միջավայրին կողմէ։ Այնպէս որ՝ Արեւմուտքը կ'երեւի (Արեւելքէն դիտուած), փոխիփոխ՝ իբր օտարին մատչումի վայրը մարմնին համար, կամ՝ նոյն այդ մարմնի կորուստան վայրը։ Մատնանշուած պահպանողականութիւնը, այսպէս, կը վերածուի Զոգարային (Ներքոյի) կեցուածքի մը՝ Արեւմուտքի հանդէպ, Եւ քաջողութիւն, Եւ վանողութիւն ենթադրող։ Նախ՝ բարձրու (այսինքն՝ ուրիշներու միջեւ սեփական մարմինը ապրելու ձեւի) մակարդակին։ Բայց մարմնի մասին չէ, որ պիտի խօսինք հոս։

Ինչ որ պիտի նախընտրէի քննել Արեւելեան այս շրջանակին մէջ, յարաբերութիւնն է օտարին հետ՝ իբր ասոր ճանաչումին, դիտութեան։ Գաղափարարանութիւնը այս ճանաչողական մակարդակին է, որ աւելի հետաքրքրական երևոյթներ կը ցուցարբերէ Արեւելի տարածքին։ Թէեւ հազուադէպ պօրէն յոտակ բանաձեւումի հասած՝ անիկա ամէն տեղ կը զգացնէ իր ներկայութիւնը։ Առանց զայն հետապնդելու հոս կամ հոն, պիտի մէջբերեմ լայն հատուածներ՝ յօդուածէ մը՝ Հալէպի Հայ մամուլին մէջ լոյս ածած ձուկան թուականներու աւարտին։ Հակառակ անձնական որոշ շեշտի մը՝ գրութիւնը հիանալիօրէն կը ցուցնէ, ծայրագոյն ձեւի մը տակ, բոլոր լր՝ ակնայն իմանայի դրոյթները մատնանշուած գաղափարարանութեան. բան մը, որ թոյլ պիտի տայ մեզի զանցառելու յիշատակումը յօդուածագրին — ծանօթ անուն մը։ Խօսքը, ուրեմն, գաղափարարանութեանն է։—

Հաւաքական սուգնապնիրը «այլուս» եմ մեր մօտ։ (...) Մեր առօրեայ մշտումն իսկ՝ այլուս է մեզի համար։ Կը սպասիմք ապրելով։ — Ու այս անիմանալի հատուածում մէջ է մեր յաւիտեական գոյութեան, մեր առ-

հաւական պատմութեան ալ գազանիքը : (...) Ու տարբեր չէ, այսօր ալ, մեր կեանքին վիայութիւնը : Օտարութեան բոլոր ակերում վրայ, Սիիւտի բոլոր աստղերուն տակ : Կը շարունակենք այրիլ, որովհետեւ օրէ օր քիչ մը աւելի կը զգանք, թէ կը խրինք : Աւագիտումը դէպի երկինք կը բարձրացնէ մեր աչքերը : (...) Կեանքը կ'ընկնէ մեզ : Կը սպառէ մեզ : Կը քանչ մեր արիւնը : Բայց մենք կը փոխարինենք զանոնք այդ մանր՝ անզնային ու խոր տենչովը ապրելու : (...) Մտեր մեր դուռներուն առջեւ է դարձնել, այս անգամ սպիտակ ջարդի մը անշարիր վնասով : Տարիները լան մը սորվեցուցին թըշնամիքով : — մեզ մեր հոգիէն դաշունել : Մեզ մեր վազանն առջեւ թաղուլ ու տարապիկ, մերկ, սարսուռ, փոխանակ մեր այսօրը սպաննելու, մեզ գրկել մեր զգալիարական մտասուզումներէն, — ցնորքներէն, ինչպէս կը սանտառնեն իրենք : Մտնկի բերելու մեզ մեր «իմքնախարկութեանց» առջեւ, եւ մեր աչքերուն առջեւ փոփոխելու իրականութեան ծիւղանին, — հողը, հայրենիքը՝ միս ու ոսկորով, անոր փարթամ նուաճումները (...) : Բայց պիտի մնայ հո՞նք (...) Որովհետեւ հակառակ բոլոր գառանց երգի նահանջներուն», հակառակ կրանոզ քաղաքակրթութեան մը փորձիչ գառնօրէններուն, հակառակ տնտեսական շարիքներու ու բարոյական խոցերու, հայը կը զգայ առտիճանական վայրէջքը, դանդաղ տեղատուութիւնը, անփառանակ շիջումը : *Ու քահի օր կը զգայ՝ ԿԱՅ* : Իր գուրէն վեր բարձրանալու գերազանց լոյսն է անոր մահաւան սրտաւէրը : Իր շիջումը անօրինակ փայլատակումի մը վերափոխելու ուժն է՝ անոր տկարութեան անդրադարձումը : (...)

. . . . .

Օրերը կը շարունակեն մնալ տխուր, թաց, անպատճ : Կեանքը մեր յաւիտենական միամտութեան, մահուր ու անգորր ապրելու մեր երազին վերայ ծանրացող մզնաւանջ մըն է : (...) Մեր այսօրը շատ աւելի գաւառիւր անակնկալներ ունի, քան մեր երէկը : (...) Շատ աւելի խեղճ թշնամիներու մահափորձին ենթակայ է մեր ազգային օգին : (...) Ինչպէ՞ս շարժել այս բազմութիւնները՝ իրենց կրօնականութենէն դէպի գիտակցութեան ու զարթումի նոր թափ մը, իրենց նահանջականութենէն դէպի ծառայումի պիտի ու կենսամտոզ հագեղարձ մը : (...) Այսօր մեր անտարբերութիւնը աւելի կ'արժէ, քան մեր փիզիկական բնազդումը : Եւ ինչպէ՞ս արժէ մեզի այս խաղաղ մահը : (...) Եւ քիչեր միայն կ'անդրադառնան այս հանդարտ անկացումին : Այս ապառազ կորստեան : Անբարբառ տրամին : (...) Ո՞վ պիտի իջնէ մեր իրականութեան կատարներէն ու խորասուզուի բովնտի փողոցներուն, կիսալոյս բախտներուն մէջ, քաղցր թմրութեան մէջ գալկացող մեր երիտասարդութիւնը իր իմաստին տանելու համար : Ո՞վ պիտի ուզէ նոր հերթիս մը բռնկելով մեր կաթնակ սպոց հոգիին մէջ մանուսնը, զանոնք գէթ համակերպութեան զիւրիկն արդարացումն փրկելու, իրենց նախնիներու նախնական հաւատով մեծցնելու, ազօրք տէրունականով մը եւ հանապազօրեայ հացով ապրեցնելու համար : Ուշ է խորհիլ կորսուած սերունդին մասին : Գոր է արեւուտայ : Կիսամիջոցները են սեպագնդները, ուղեգիծները, կըշտամբանքն ու խրատը : Աւելի առաջ նայինք : Նայինք մանուկներուն, սեւեռնիքն անոնց տանակ աչքերուն, ու բան մը փոխենք անոնց զատիարակութեան կերպին մէջ : (...) Կը թաւալին օրերը, քաղաքակրթութեան լոյսը որպէս մագիլ կը խրի մեր միսերուն մէջ, կը խառնան իր բարիքները՝ մեր անպարտաւոր հոգիէն : մեր ցուրտ շրթներէն : Եւ կը մնանք իր հասարակութենէն, որովհետեւ մենք ամէնէն երաշխաւոր թշուառներն ենք մարդկային կեանքի համակերպութեան մէջ : (...) Անբարձեշտ է ետդարձ մը՝ դէպի ակունքը ցնդիմ, դէպի ելին վաստակ, ելին բարք, ելին խոնարհութիւն, ելին շուրջփութութիւն, — եթէ այդ բառը կրնայ բովանդակել մեր կոյս քաղաքակրթու-

թեան բոլոր լուսաւոր երեւոյթները: Անխաժեշտ է ետգործ մը՝ զէպի ազ-  
րիւրը մեր սրբագան միաստութիւններուն, — հաւատքին, առատելիքի, ա-  
ւանդութեան, «գիւղի ու գաւառի կեցեցողին» — եթէ այս բացատրութիւնը  
կրնայ պարփակել մեր կոյս պատասխանողութիւնը, աբժանապատուութեան  
առաջը բնագոյն, բարոյական մեծութիւնը: (...)

Մեր տուններէն ցլիտի սկսի այս յեղափոխութիւնը. մեր երեխաներու  
և մանուկներու մկրտութեան աստուանէն, անոնց խանձարութիւն՝ եթէ կ'ա-  
զէ՛ք: «Դաստիարակութիւն» բառին պէտք է սալ իր գորութիւնը, և գրոշմ  
մը դարձնել. դարձնել մոլեռանց կրօն մը և հաւատք մը: Մենք այդ «դաս-  
տիարակութեան» կ'ապաւինինք, երբ տղան ձեռնաւոր է արդէն, երբ բնագ-  
ղին անսխալ ու իմաստուն մղումներէն գերծուած է. երբ իր միջավայրը հա-  
սանցած և որոշ անկախութիւն հաշակած է արդէն: Դա՛րս պէտք է բերե՛նք  
մեր գաւառները իրենց բնօրինակ գրեթե անհասկանալիներէն, հագելով  
անբարոյական շո՛քի հոգով պէտք է լաւանք անոնց խանձարութիւնը, անոնց  
աշխարհուն լոյսն ու յեղուի առաջին թարթումները պէտք է բանանք իրենց ցեղա-  
յին աստիճանութիւններուն վրայ, չարհաշուութեան ու գրկանքի լուծը դարձը-  
նելով հարցը կոչում մը, արուն աստիճանները պիտի ըլլան իրենք: (...) Աշ-  
խարհ մը պէտք է «ստեղծել» հայ մանուկին համար. ստեղծել մը էրբայ թե-  
րուս, որ ոչ կրնայ հասունցնել անոր միտքը, բայց ապահով կ'ընծայէ անոր  
հագելան էութիւնը: (...) Իր նիւթական միջավայրէն կտրուած սերունդ մը՝  
խօսք պիտի ըլլար մարդերուն համար, զոյն ցլիտի դարձելը «գիւղացի»  
այդ բառին խաղան ու միասնա իմաստով: Բայց անոր մէջ մենք պիտի ազ-  
նուենինք յայտնութիւնը եին դրոշմով յաւիտեանապէս նոր հայուն: Մեր նոր  
սերունդները կը դեղին մեր օրերու ճազաբարձրութեան փարթամ լոյսին,  
յորդ գոյններուն տակ: Այսօր ընդհանրական գիտութիւն շատ է մեզի. այս-  
օրն «գարգազում» թո՛յն է մեր արիւնին, այսօրն համապարփակ հեռք՝ կը  
փակէ մեր հագոյն»՝ մեր ցեղին ակունքէն հասող բոլոր գուլալ ազբերակներուն  
մասին: Մեր հայութիւնը մեր միածայ, բայց կենսայորդ ազդեղնէ մէջ է,  
մեր բնագոյնական իմաստութեան, լեռնակնի հոգիին: (...) Զուլումի, գա-  
ռածման և այլատերութիւնի վտանգը կը սկսի գիտութեան մը յսկարանէն. և  
«աշխարհագրագիտութիւն» տիպարը՝ մեր հանրային կենսի բոլոր մարդերուն  
վրայ, նախատիմ մըն է մեր պատմութեան, մեր ներկային: (...) Այսօրն  
կիրք՝ ուսման, ընդհանուր գարգազումի, մասնագիտութեան ու «վարդապե-  
տութեան» նիւթապաշտութեան և վաշխառու ցանկութեանց գոգը կը նետն  
մեզ, մեր երիտասարդութիւնը կ'ընեն կամակար, չարիքի, շուկայիկ մարդե-  
րու բոլոր անխոստովանելի ազտեղութիւններովը շաղկապում: Եւ «ուսում-  
նական», բայց աշխարհիկ այդ երիտասարդութիւնը՝ բարիք չէ, որ կը բարդէ  
մեր պատիկ յայտերուն կամ մեծ ակնկալութեանց վրայ: (Տակաւին) պերճանք  
են համալսարաններու և լիկեոներու վկայաբուրքները: — Անշուշտ ժըխ-  
տումի մը բնոյթը չունին այս տղերք՝ իրենց ցարտ ու մերկ անկեղծութեա-  
նը մէջ: Բարձրագոյն կրթութիւն, գարգազումի և պատրաստութեան ան-  
նախ, յա՛զ ծարա՛ր՝ դրական փաստեր են մեր կենսունակութեան (...) Պայմանաւ,  
սակայն, որ այդ գարգազման գուգահեռ՝ հայութեան անցնելի դրոշմով ձեռ-  
ու դիմագիծ ստանայ նաեւ հանրային մարդը: Մենք պէտք ունինք նախ «հայ»  
մարդուն, ապա «գարգազած մարդուն»: (...)

*Պիտի չթաղուինք ներկայացուած յօդուածի ըստ էութեան ճնարկման  
խրոստին մէջ, որքան ալ փորձիլ ըլլայ ատիկա. — հակասութիւններու մաս-  
նանշում, բացայայտութիւն անընդունելի դրոշմներու վերբերում, ծանրակշիւ*

յայտարարութիւններու, ընդգնացող զպատգամներու ընդգծում՝ մաս չեն կազմեր մօտեցումի մեր եղանակին: Այս մտածումին զածկած անդիտակից սարքն ալ սպասիչ վերլուծումի պիտի չենթարկենք: Այսպէս, յողուածը յանձնելով ուշադիր ընթերցողի բնականօրէն, կը բաւարարուինք մեր տեսանկիւնը շահագրգռող մասնանշումներով:

Այդ տեսանկիւնը, կը յիշենք, կը կայանար քննարկելու մէջ՝ ինչ-նութիւն-այլութիւն յարաբերութիւնները՝ ճանաչողական մակարդակին: Եւ կը հաստատենք, առաջին իսկ շերտին, սարսափը բոտանի գիտութեան, մերժումը քաղաքակրթութեան լոյսին: Տեղ-տեղ երեւցող վերապահումները, ճեղքման մասերը ոչինչ կը փոխեն ամբողջ խորքով յայտնուող էական կեց-ւածքէն: Կը հաստատենք խուսափումը՝ յանուն հայու տիպարի (?) մը, որ երկնցս, երկրս՝ կը բնորոշուի իր... կուսութեամբ (չօգտագործենք փոխաբերութեան թիւադրանքը...): Սարսափ, յուսահատ քաշկրտում, խուճապ, որոնք, կոսմոսի մերձող հակակշիռը կ'սրնցուցած մտաւորականութիւն մը, Արեւմուտքի դէմ ստորակայութեան զգացումէ տառապող մտաւորակա-նութիւն մը ներկայացնել անգին՝ կը փաստեն օտարին ներկայութիւնը, անխուսափելի ներկայութիւնը նոյնիսկ հալէպեան ջերմանոցին սրտին-նոյնիսկ 1930ական օրերուն իր երիտասարդութիւնը ապրող արեւելեան սե-րունդին մէջ: Այս գրութիւնը աւելի ներշնչող ձեւով կը բերէ մեզի եւ մերժ-ումը օտարին, եւ քաշկրտութիւն մը ծածկող գիտակցումը՝ այդ օտարի ան-խուսափելիութեան: Աւելի ներշնչող, անշուշտ, քան առաջինը՝ Ծուշանեանի գրութիւնը: Վտանգը, որ Ծուշանեանի քրոնիկը կ'ապրէր մարմնի մակար-դակին, հոս՝ արեւելեան ընկերութիւնը յատկանշող բարոյական զգրաբն-նութեան մը ճշնշտումով, կ'արտայայտուի, ըսինք, ճանաչումի, գիտութեան, ուսումի մակարդակին: Ուրեմն, ամէն պարագայի, բոտանը ներկայ է այս գրութեան մէջ եւս, եւ կը կազմէ շարժառիթի իսկ անոր՝ գրութեան: «Օ-տար»-ին ներմղումը, մերժումը, անկէ ասդին մնալու, անոր օտարութեան մէջ զայն շտանանելու յամառութիւնը՝ այդ բոլորով կը դառնան աւելի բուն: Կարելի է այս բոլոր թեմաները անշատբար զարգացնել, փորձիք ի անշուշտ: Ո՛չ հոս, սակայն:

Մասնանշանք, այս երկրորդ գրութիւնը մէկդի դնելէ առաջ, որ անի-կա կը կապուի Ծուշանեանի քրոնիկին, կ'երկարաձգուի անոր մէջ: Այս յօդ-ւածին չափանիշներուն, եւ դեռ ատենց մասնակի կ'երբարկուծին համաձայն սպարապատուած՝ նոր սերունդն է, պատրաստուած՝ «մանկավարժներու (պէտք է չակերտել...) կողմէ, որոնց համար մեծապէս կարեւոր էր իրենց աշակերտներուն զկուսութիւնը» եւ ուղեղին «միաձայնութիւնը, — այս նոր սերունդն է, որ հակառակ ամէն ճիգի՝ պիտի կրէ քաշկրտութիւնը բոտանին (միշտ ներկայ՝ իր մէջ), եւ պիտի նետուի մարմնով եւ հոգիով խեղդուելու՝ բացարձակ այլութեան՝ ձուլումին մէջ: «Մանկավարժները դեռ այսօր՝ կը շարունակեն ողբալ. եւ կը շարունակեն (հակառակ երեւութեան արդիակա-նացման մը) պատրաստուել հակառակուած՝ «փառքէօրիզէ» սերունդներ, «առհաւտական» չափանիշներով: Ի զո՛ւր, որովհետեւ Ծուշանեաններու կող-մէ ողբացուած «լուսաւորչական» (ո՛չ կաթողիկէ, ոչ ալ բողոքական...) պատանին, նաւարկուած՝ Սէնի ափերուն, ճիշդ այն մէկն է, որ մեր ման-կավարժները... հակառակուած էին Հալէպ, Պէրթութ կամ այլուր: «Օտար»ը արդէն անոր մէջ էր եւ այդ բոտանը միայն կրնար դայն հասցնել տարբե-րակեալ ինքնութեան: Անգամ մը եւս, այլութիւնը բաղկացուցիչ էստարբն է ինքնութեան, զոր կը հիմնաւորէ, կ'արդարացնէ: Սակայն դժուար է այս ճշմարտութիւնը բացատրել մենապար մանկավարժներու:

••

Առաջին դրոյթը, որ, իբր եզրակացութիւն, կրնանք բանաձևել՝ այն է, որ կրկնակ պատկանելութեան, փիւռքայնութեան առարկայօրէն սահմանուած սերունդ մը չի՛ կրնար փթթիլ՝ նախնական եւ պահպանելի ինքնութիւն մը դառանող մանկավարժական միջավայրի մէջ: Կրկնզական ու միամակարդակ ըլլալուն՝ պահպանելի ինքնութիւնը անմիջապէս կը ստեղծէ իր հակառակը՝ բացարձակ այլութիւնը, որուն մէջ կը ձուլուի, կը կորուսի:

Երկրորդ դրոյթը այն է, որ մանկավարժութիւն մը, եթէ կը փոփոքի փոխանցելի մշակութային ստուել պատգամ մը եւ խուսափի իր զղաշտի ստորնանական անհետացումէն՝ կը յաջողի միայն եթէ ինքը յառաջացնէ, իր նոր սերունդներուն ձօս, իրենց հասարք այդ ժամանակ, մարտահրաւէր կարգայ անոր եւ, այդ ժամանակ միջնորդութեամբ իսկ՝ զանոնք առաջնորդէ ճարտարակեան ինքնութեան մը:

Յրորագր դրոյթը այն է, որ իր նպատակներուն դիտակից մանկավարժութիւն մը, արբերակեալ ինքնութեան ձգտող, չի կրնար գործածել գոթութիւն ունեցող քնորդներ: Պահպանուած-կուտարիւն-հակաանխաբիւն նախադր (նոյնիսկ իր իբր թէ արդիացած երեւոյթներով) եւ արեւմտեան սպառողական ընկերութեան մը կարիքներուն քաղեհնիական գոնացումն ձգտող նախադր մը՝ պարզապէ՛ս կ'արժեն իրար, այսինքն՝ ոչինչ: Առանց բընորդի մանկավարժութեան մը հակացողութիւնը յի սոփեստութիւն է, ոչ մէկ հակասութիւն: Ան պարզապէս մէկ ուրիշ տնտեսումն է յիզափոխական մանկավարժութեան, որ կը հաւատայ մարդկային ստեղծագործականութեան, իբր մարմին, եւ իբր միտք: Գոնէ՛ անոնց համար, որոնք իմաստ մը վերապահած են ճարտարագործականութիւնը բառին: Պէտք է ընդգծել, այս սուհանդերձ, որ այդ բառին գործածումը մեզ չի՛ նետեր սահմանելի, իրականի կալուածէն դուրս, վերացական կամ անորոշ չի՛ դարձներ մեր խորհրդածութեան առարկան: Տարբերութեան յարգանքն է (տարբերութիւն՝ ինքնութեանէն, եւ տարբերութիւն՝ այլութեանէն), որ կը կայացնէ նախն եզրը անոր, եւ զայն կը տեղադրէ գոյութեանական իրական դաշտի մը եւ ուրոյն մեթոտարանութեան մը կեդրոնին:

Այս վերջին մասնանշումները կը զանցեն իմ մտածումիս զաշտը, որովհետեւ կը թեւակոխեն բուն մանկավարժութեան կալուածը: Միւս կողմէ, ընկերա-քաղաքական հետեւանքները նման ըմբոսումի մը (որոնց խորապէս գիտակից եմ), նոյնպէս դուրս կ'իջնան իմ կալուածէս: Միտումս էր պարզապէս սահմանել նման մեթոտի մը գոյութեան պայմանները: Եթէ սահման մանկավարժութիւն միտէր նախի մը սորվեցնել վերադրել հօր մը մահէն ետք, փիւռքայն մանկավարժը (գոյութիւն ունի...) գիտի ըլլար, առանց յարակարծիքի, լուսագոյն դիրքը ունեցողը՝ սորվեցնելու ասորիլ առանց կայրութեան: Միտայն այս պայմանով պիտի կարենար իրագործել առեւելին, քան վարժեցում մը — այսինքն՝ իրագործել վարժեցումը... ազատութեան գործունէութեան իտէալ գալուտ մըն է, նախ քան ըլլալը՝ ազատութեան փորձարկման մը զլխադիր Վայրը, այսինքն՝ անգամ մը եւս, Վայրը ճանաչուած եւ ստանձնուած Տարբերութեան:

Թ. ԳԻՒՐԳԻՆԻ

Լ. Մ Կ Ր Տ Չ Ե Ա Ն

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

2 - ՀՈՒՆԳԱՐԻԱ

Տիրոր Մերայի սոյն «վարդապետութիւնները եւ արգելքները» յօդ-  
 ւածը զետեղուած է Փարիզի առաւելին «Կոնսոլիմենտ» եւսմանայ Հանդէսի  
 № 17ում (1978 թ.)։ Հեղինակը իր ուշադրութիւնը կենտրոնացնում է մի  
 հիմնական ու սկզբունքային դրոյթի վրայ եւ ըստ այնմ էլ ներկայացնում  
 ու լուսարանում զբաղանձլակութային համապատասխան փաստերն ու ի-  
 րադարձութիւնները։ Ինչպէս հեղտութեամբ կարող է նկատել ընթերցողը,  
 Մերային խուսափում է կտրուկ ու վերջնական անտարկեի վճիռներից, ա-  
 ռանց հրաժարուելու իր ներքին ու անխախտ համոզումից։ Նա ցուցաբերում  
 է որոշակի խոհականփիլիսոփայական վերաբերմունք, ինչ որ մտածելու  
 յայն դաշա է բացում նաեւ տարրեր մակարդակի ընթերցողներին համար։

Մի քանի խօսք վերնադրի մասին։

Հետեւելով լոյս տեսած բնագրի բառապաշարին, կարելի էր եւ վեր-  
 նագրեր ուղղակի թարգմանել «այսպիսի» «Ինգլանդը եւ թարուները» բառե-  
 րով, որոնք, թուով է, հասկանալի են իւրաքանչիւր Հայ ընթերցողի։ Բայց  
 նախընտրելով Հայերէն մտաւորապէս համապատասխան բառերը՝ վերնա-  
 դիրը Հայածեւ զարժրի, իմասնելով հանդերձ, որ դրանք լիովին չեն արտա-  
 յայտում սկզբնական բառերի բոլոր յատկանիշները։ Սակայն ամէն ինչ վար-  
 ծութեան եւ համաձայնութեան հարց է։ Եթէ ընթերցողն սկզբից եւեթ ի-  
 մանայ, որ «վարդապետութիւններ» եւ «արգելքներ» բառերը փոխարինում  
 են «դոգմաներին» ու «թարուներին», այնուհետեւ բոլոր դէպքերում կարող  
 է կողմնորոշուել այդ ուղղութեամբ ու ճիշդ ըմբռնել շարադրանքը, բաղկա-  
 ցուցիչ տարրերի ու ամբողջութեան կապերով։

Ներկայացուող յօդուածի հեղինակ Տիրոր Մերայի ծնուել է 1924 թ-  
 Բուդապեշտում։ Ուսանել է Բուդապեշտի համալսարանում եւ ստացել Հուն-  
 դարական գրականութեան ու յատիներէնի ուսուցչի վկայական։ Համալսա-  
 րանն աւարտելուց յետոյ ընտրել է լրագրական ասպարէզ եւ աշխատանքի  
 անցել Հունգարիայի կոմունիստական կուսակցութեան «Սարազ ցեպ» կենտ-  
 րոնական պաշտօնաթերթի խմբագրութեան մէջ։

Լինելով թերթի խմբագրական կոլեգիայի անդամ, Գորդների միու-  
 թեան ղեկավարներից մէկը, Կոլուտի անուան գրական մրցանակի դափնե-  
 կիր, — Մերային շատ չանցած խզում է իր կապերը հունգարական ստալի-  
 նականներից։ Նա դառնում է Իմրէ Նադի մերձաւոր բարեկամներից ու մար-  
 տակիցներից մէկը։ Նաղը Հին կոմունիստ էր, երկար տարիներ ապրել էր  
 Խորհրդային երկրում ու իրազեկ էր այնտեղի էրականութեանը։ Բայց նա ու-



նէր ժարդասիրական խմոր եւ շէր ձայնակցում ստալինականներին, ուստի եւ՝ խոչընդոտներով լի էր նրա ճանապարհը:

Այդ պայմաններում, Մերային զրկեցին բոլոր պաշտօններից ու կոչումներից, յայտարարելով օրէնքից դուրս: Դեռեւս մինչև 1956 թուականը Մերային արդէն յեղափոխական մտաւորականութեան առաջնորդներից մէկն էր, իսկ 1956ին էլ՝ Յեղափոխական Մասւորականութեան Շարժման Կոմիտէի անդամ: Մերայի Հունգարիայից հեռացաւ այն բանից յետոյ, երբ խորհրդրդային ղինուորական իշխանութիւնները առեւտրեցին Իմրէ Նազին ու նրա մի շարք բարեկամներին (այսպէս զնդակահարելու համար):

Բնկարգում կարճ ժամանակ մնալուց յետոյ, Տիբոր Մերային բնակութիւն հաստատեց Փարիզում, որանց եւ ապրում է մինչև հիմա: Նա հունգարերէն «Իրողալի ույշագ» («Իրական թերթ») պարբերականի գլխաւոր խմբագիրն է: Նրա երկերը թարգմանուած են երկու տասնեակ լեզուներով: Վերջին՝ «Իմրէ Նազի կեանքն ու մտեր» գիրքը, հունգարական դէպքերի 20ամեակին առթիւ, լոյս տեսաւ Միւնխէնում:

Մերայի տարագիր Պեն-Կլուբի Ֆրանսիական խմբի փոխ-նախագահն էր՝ ներկայացուող յօդուածը պատրաստելու պահին:

Լ. ՄԿՐՏՁԵԱՆ

Տ Ի Բ Ո Ր Մ Ե Ր Ա Յ Ի

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԱՐԳԵԼԲՆԵՐԸ

Վաղուց է սովորութիւն դարձել ասելու, թէ կոմունիստական բոլոր երկրներից Հունգարիայում կեանքը ամէնից հանդուրժելին է, եւ դրան կցելու մաշւած բառախաղը. «Հունգարիա՞ն: Դա ամենամահաւակիրի տաղաւարն է (բարաբը) սոցիալիստական ճամբարում (լազնբում)»:

Այդ պնդումը չի վերաբերում արբուստի վիճակագրականօրէն որոշելի մակարդակին: Միացեալ Ազգերի Կազմակերպութեան, Եւրոպական Տնտեսական Համագործակցութեան եւ Տնտեսական Փոխօգնութեան Խորհրդի համաձայնեցւած տուեալները վկայում են, որ բնակչութեան մէկ շնչին ընկնող արտադրութեան եւ եկամտախի մակարդակով՝ Վարչուսայի խմբակցութեան երկրների մէջ ա-

ռաջին տեղը բռնում է Արեւելեան Գերմանիան, ապա՝ Չեխոսլովակիան, ու միայն նրանից յետոյ՝ Հունգարիան: Ուրեմըն, խօսքը վերաբերում է ուրիշ բանի, որի արժէքը չի չափում դրամով ու նիւթական բարիքներով եւ առհասարակ չափազանց դժուար է ենթադրուած որեւէ չափման, մի բանի, որն իր իմաստով յիշեցնում է անգլո-աքսոնական «wasy of life»ը: Հունգարիայում մարդիկ աւելի թեթեւ են շնչում, քան այսպէս կոչուած «եղբայրական» երկրներում, կուսակցապետական խեղդիչ պաշտօնակալութիւնը Հունգարիայում այնքան ծանր չէ, հունգարները լրացուցիչ վաստակ գտնելու աւելի հնարաւորութիւն ունեն, նրանք համեմատաբար աւելի յանախ կարող են ուղեւորուել արտասահման, նոյնիսկ Ա-

րեւմուտք: Նրանց լեզուները այնքան կապուած չեն, վարքի ընդհանուր ձեւը աւելի ազատ է, հանգստի եւ ժամանցի հնարաւորութիւնները աւելի բազմազան են եւ, վերջապէս, ըստ հաշուի, բայց ոչ ըստ նշանակութեան, — այդ երկրում գրականութիւնն ու արուեստը պակաս են ենթակայ արտաքին միջամտութիւններէ եւ մանրախնդիր Հովնաւորութեան: Սըրանք ցոյց են տալիս, որ հունգարական Հասարակութեան կեանքը աւելի մեծ չափով է Համապատասխանում մարդկային ոգու օրէնքներին, քան միւս կոմունիստական երկրներում:

Յատկապէս գրական կեանքի մասին եւ բացառապէս նրա՛ մասին պիտի խօսեմ ես այստեղ, քանի որ երկրի ընդհանուր վիճակը, նրա առանձնայատկութիւնները պահանջում են սեւեռուն եւ լուրջ սուսմնասիրութիւն: Աւելին, բուն գրական կեանքի որոշ կողմեր, սակնք՝ գրական քաղաքականութիւնը, Հաւանաբար շատ մանրամասնութիւններով վրէպում են իմ ուշագրութիւնից, քանի որ ես արդէն Չ1 տարի է, ինչ սպորում եմ արտասահմանում: Այն պատկերը, որը ես տեսնում եմ այստեղից, անկասկած, կարող է մեղանչել անհամաչափութիւններով ու անըզութիւններով: Ստիպան ձեւափոխութիւնները այս կամ այն չափով Հնարաւոր են եւ ներսից նայելիս: Բացի այդ, որքան ինձ յայտնի է, միւշեւ հիմա ոչ ոք չի գրողուել ինդիւստրիալ ամբողջութեան քննութեամբ ու միայն դրա համար ես, նախապէս ընդունելով սխալների կամ անըզութիւնների հնարաւորութիւնը եւ նախապէս ողջունելով ամէն մի բարեացակամ քննադատութիւն, թողլ եմ տալիս ինձ գրողուելու այդ հարցով, յուսալով, որ այս աշխատանքը կը նպաստի նիւթի Հետագայ ճշգրտմանն ու խորացմանը՝ իբր բոլոր կողմերով:



Աւելորդ կը լինի շեշտել, որ հունգարական գրականութեան կեանքում, ինչպէս եւ ամբողջ երկրի կեանքում, կայ մի շրջաժամ գիծ, որն անցնում է 1956 թը-

ւականով: Ինձ համար այդ հասկացութիւնն ընդգրկում է ո՛չ միայն յեղափոխական իրադարձութիւնները, այլեւ՝ նախորդած երեք տարիները, երբ հունգար գրողները խիզախ պայքար էին մղում ստալինականութեան դէմ: Ինձ համար դա ընդգրկում է նաեւ յաջորդ չորս տարիները, ճնշամիջոցների, ձեռքադրութիւնների եւ ժահապատիժների ժամանակաշրջանը, երբ բազմաթիւ մարդիկ դատապարտուեցին երկարատեւ բանտարկութեան կամ կատարեալ լուրթեան, իսկ մեծ թուով գրողներ ու արուեստագէտներ հարկադրուեցին արտագաղթել: Բայց քանի որ ես այստեղ մանրամասնութիւնների մէջ մտնելու հնարաւորութիւն չունեմ, նախընտրում եմ սահմանափակուել որոշ պարզեցումով — զնահատել այժմեան կացութիւնը, դա համեմատելով 56 թուից առաջ եղած ժամանակաշրջանի հետ: Նման մտտեցումը, բնականաբար, նմարը կը թեքի յօգուտ ներկայի, քանի որ այդպիսով մեկէ համեմատում եմ քաղաքակրթական լուսազոյնի հետ: Ինչ էլ որ լինեն մեր անձնական համոզումները եւ ինչպիսի ախուր հիմքի վրայ էլ յենուելու լինի այս Համեմատութիւնը, միջազգային ու ներքին կեանքի իրողութիւնները վկայում են, թէկուզ եւ Ձեխտալովակիայի օրինակով, որ ժամանակի ընթացքը միշտ չէ, որ ուղեկցում է յառաջդիմութեամբ:

Եթէ մի խօսքով ընութագրելու լինենք եղած փոփոխութիւնների էութիւնը, ապա ես դա կը կոչէի վարդապետութիւնների մահ: Դա, բնականաբար, վերաբերում է ոչ բոլոր վարդապետութիւններին, բայց եւ այնպէս՝ նրանց մի շարքի, որոնք համարում էին անխախտ ու ամէնից կարեւորները: Այդպիսի վարդապետութիւններից առաջնագոյնը, որը պարունակում էր մի ամբողջ շարք կանխազրոյթներ, սացիալիստական ուխտովմէր: Ստալինա-ժողովեան դադափարախօսութեան տեսակէտից, դա գրականութեան ու արուեստի համար բարձրագոյն օրէնք էր, վերջնական նպատակ եւ դադաթներէից բարձրագոյնը: Դա նաեւ ուղիներից լուսադոյնն էր, քանի որ միակն



զափարախօտութեան դիրքից, այլևս պահանջում էր, որպէսզի կուսակցութիւնն ինքը երեւայ երկուս, զա լինի ի զէմս առաջնորդի, կուսակազմակերպութեան կամ, նուազագոյն զէտքում, ունէ կուսակազմակերպչի: 1952 թ. Երթեֆ Ռեւային, այն ժամանակ չլիտուոր կուսակցական զազափարախօտը, կազմակերպեց Տիրոք Դերիի «Պատասխան» վէպի դասապարտում, Հեղինակին մեղադրելով, թէ նրա հերոսը — խելացի եւ հմայիչ մի երիտասարդ բանուոր — անբաւարար արագ է կուսակցութիւն մտել: Երկար ամիսներ ընթացքում, ամբողջ Հունդարիայում պէտք է ամենայն լրջութեամբ քննարկուէր այն հարցը, թէ արդեօք վէպի հերոսը պէ՞տք է սպասէր 45 թուականին, ինչպէ՞ս որ նկարագրել է Հեղինակը, թէ անպայման կուսակցական շարքերին յարէր դեռեւս 30ական թուականներին, ինչպէ՞ս որ պահանջում էր Ռեւային: Այսօր չկայ այդպիսի կուսակցական զազափարախօտ, որը համարձակուի նման ձեւով ու հրապարակուի Հանդէս գալ նման հարցի շուրջ: Այսօր նրանք նոյնիսկ զգուշանում են նշել, թէ այս կամ այն դէպքում կուսակցական ղեկավարները պատկերում են ոչ ամենալուսավոյն ձեւով: Տասնեակներով վիպակներ ու վէպեր են երեւան գալիս, որոնց մէջ կուսակցութեան գոյութիւնն իսկ անտեսում է: Այսպիսով, կուսակցականութեան վարդապետութիւնը, թէ՛ ամենալայն եւ թէ՛ ամենանեղ մեկնութեամբ, անցեալի զիրկն է ընկել:

Այդ անցեալը կլանել է միաժամանակ եւս մի ամբողջ շարք ուղեկից վարդապետութիւններ, — բոլոր դրական առաքիներութիւնների մարմնացում դրական հերոսը, ուսումնքին թշնամի ամէն ինչի անձնաւորում բացատրական հերոսը, դրական ու բացասական պերսոնաժների զոգաւորումը (բաժնեչափումը), որը պէտք էր այնպէս անել, որ դրականները շատ լինեն, իսկ նրանց մէջ ընկղմուեն սակաւաթիւ բացասականները: Վերացրին զարեւսան արուեստի համարը, քանի որ ուզած երկ պէտք է «բազմաբանացուի»: Նոյն չափով վերացրին «Փորձալիցի» (ձեւապաշտութիւնը), քանի որ ուզած

երկ պէտք է հասկանալի լինի բոլորին եւ առաջին իսկ հայեացքից կամ առաջին իսկ Հնչիւնից: Անձնական շահերը պէտք է գոհարեւուէին հանրայիններին, լուստեսութեան պարտագիր լինելը հասկանալի էր ինքնին, եւայլն: Այս բոլոր վարդապետութիւնները այսօր այնքան են կորցրել ամէն մի նշանակութիւն, որ եթէ մէկնումէկն այսօր փորձի գրականութեան կամ արուեստի երկը քննադատել այսպէս կոչուած «բարձր չափանիշներն» զիրքից, ապա նա անմիջապէս կ'ընկնի որահայնողականի, յետագիմականի եւ պաշտօնական զազափարախօտութեան մոռնարկի դերի մէջ: Այսօրուայ Հունդարիայում կտրելի է առանց վախի դերի, դրել ու տպել, բնաւ ո'չ սոցիալիստական ուսուցիչի ոգով, քննադատական սեւիլիցի եւ Հնչ ուղղակի ապաքաղաքական վէպեր, «Հակա» կամ գերբարպաշտական վիպակներ, բուլուարային կատակերգութիւններ՝ զամուսին, կին, սիրական» եռանկիւնով, մարդկային մեծ ու փոքր արատները ծաղրող կատակերգութիւններ, միատիկական խոր բովանդակութեամբ յոռեստական եղբերդութիւններ, բանաստեղծութիւններ, որոնք նոյնքան անմատչելի են թէ՛ առաջին եւ թէ՛ երկրորդ ընթացման ժամանակ: Այս ամէնի համար ոչ մի Հեղինակ այլևս չի հետապնդում ու չի քննադատում: Ընդհակառակն, նրան կարող են նոյնիսկ դրահաւատել աւելի բարձր, քան նրա որոշ գրչակիցներին, որոնք շարունակում են ամբողջ ձայնով երգել՝ կուսակցութեանն իրենց հաւատարիմ լինելու մասին: Եւ երբ այս կամ այն երկը անցնում է թուրյատրելիի սահմանը, պաշտօնական քննադատութիւնը ամէն կերպ ջղմում է, որպէսզի իր յանդիմանութիւնները քաղաքական պատճառաբանութիւններ չաբունակեն: Հունդարական լուսագոյն գլորողներին մէկի նոր վէպը մի քանի տարի արգելուեց հրատարակել, բայց երբ դա Արեւմուտքում լոյս տեսաւ շատ երկրներում, հրատարակեցին Բուդապէշտում: Դրանից յետոյ կենարոնական կուսակցական պաշտօնաթերթը դետեղեց մի տեսութիւն, որի մէջ խուսափուում էր շուր-

փելի վէպն արգելելու իսկական պատճառները: Արեւմտեան մտմուլի դրուատական արձագանդները հերքելով՝ հունգարական քննադատը գրքի վրայ յարձակուեց սոսկ զեղադրական տեսակէտից, այն անուանելով տափակ, ճանձրալի, անբովանդակ: Բնաւ դրուատական չլինելով՝ այդ արձագանքը այնուամենայնիւ ակելի ընդունելի է, քան վաս մատնանշումը՝ քաղաքական վարքի գծով: Վարդապետութիւնների հնացումը վկայում է, որ դրականութեան ու արուեստի դէմ ուղղուած մշտական յարձակողական գործողութիւններից յետոյ՝ իշխանութիւնն այժմ դատապարտել է պաշտպանուելու: Դա հատարապէս ակելի լաւ է թէ՛ իշխանութեան համար, քանի որ նրա նախկին յարձակումները ամէնից յաճախ շրջուել են հենց իր դէմ, եւ թէ արուեստի աշխատողների համար, որոնք ստեղծագործում են ակելի հանգիստ իրազրութեան մէջ:

V Արդեօք ես չեմ իտէպլականացնում իրազրութիւնը: Կարծում եմ, թէ ես սոսկ նշում եմ իրերի իսկական վիճակը, որը Հունգարիայում, այնուամենայնիւ, ակելի տանելի է, քան միւս կրճուներտական երկրներում: Հունգարական գրականութեան մէջ եւ արուեստում, ինչպէս եւ ամբողջ հունգարական հասարակութեան մէջ, տեղի է ունենում «քաղքենիացման» (բուրժուականացման) կամ «վերաքաղքենիացման» մի ընթացք, որը անկասկած ակելի մեծ օգուտներ է տալիս, քան «համախոհութիւնը», որը, ի դէպ, երբեք դոյութիւն չի ունեցել: Այսպէս թէ այնպէս, նորից կարող են ծագել զանազան հոսանքներ ու դարձուներ, վերակենդանանում է գաղական ժառանգութիւնը եւ միաժամանակ ծաւալում արդիապաշտական միտումները: Այո, արդէն բազմակերպ, հեղեղը կրում է իր մէջ, սակայն, նաեւ համակարգի ամբողջ վնասակարութիւնը, նրա վախով՝ ներքին ու միջազգային ամէնից կարեւոր խնդիրներ առաջ քաշուելուց, մի գիծ, որն ակելի առաջ երբեք յատուկ չի եղել մեր գրականութեանը եւ որի երեւան դալու պատճառները — այդ մասին խօսք կը լինի յետոյ — չպէտք է որոնել մեր զրոյների

ու արուեստագէտների ստեղծագործութեան մէջ, նրանց յանդիմանելի դրա համար: Ինչ վերաբերում է բառի բուն իմաստով կուսու Գիւտական գրականութեանը, ապա դա Հունգարիայում իրենից ներկայացնում է ոչ ակելի, քան հոսանքներից մէկը, ինչպէս որ դա տեղի է ունենում արեւմտեան երկրներում, եւ ընդամեն համարեա՛ ակելի սակաւութիւն, քան, ասենք, Իտալիայում կամ Ֆրանսիայում: Կարելի է նոյնիսկ մատաւորէն ասել, որ իրենց կրճուներտ հռչակող զբոյնները այժմ անհամեմատ ակելի քիչ են, քան 1956ից առաջ: Այսօր նրանք չեն ներկայացնում նոյնիսկ յարգանք վայելող հունգար զրոյների ն տոկոսը, իսկ ինչ վերաբերում է նրանց իրական նյաւակութեանը կամ մատար աղբեցութեանը, ապա դա հաղիւ թէ գերոյից բարձր լինի:

Բայց ծանր մոլորութիւն կը լինէր կարծել, թէ ազատութեանը արուած այդ սակաւութիւն զիջումները ձեռք են բերուել ինքնիրեն, իրբեւ երկնային մանանայ: Իրանցից իւրաքանչիւրը հունգար զրոյներին ու արուեստագէտներին նստել ու նստում է ամէնորեայ պայքար՝ ամէն մի խօսքի, ամէն մի տողի, ամէն մի բառի համար: Այն, ինչ որ կոչում են ազատականացում, շագարոյ դօսեմարա է, յաղթանակներով ու պարտութիւններով, ինքնին վկայելով, որ դուս պատրանք կը լինէր ենթադրել, թէ իբր կուսակցութեան զեկապարտութիւնը կոմաւոր հրաժարում է լենինեան գլխաւոր դրոյթներից մէկից, ըստ որի՝ գրականութիւնը սոսկ «անուակ ու պտուտակ» է միանական ու անբաժանելի կուսակցական մեխանիզմում, կուսակցութեան դրած քաղաքական նպատակներին հասնելու գործիք: Եւ նոյնիսկ եթէ հունգարական կուսակցական պարագլուխները իրենց թոյլ չեն տալիս արտայայտուել լենինեան կոպտութեամբ ու ուղղագծութեամբ, հաղիւ թէ կարող են կասկածներ լինել, որ իրենց քաղաքագիտական գլուխներում նրանք պահում են միեւնոյն օգտապաշտական ըմբռնումը: Եւ, այդուհանդերձ,

— եւ այստեղ նկատուած է նրանց սարքերու թիւնը «Եղբայրական» երկրներէ միւս շատ կուսակցական ղեկավարներէց, — հունգար ղեկավարները լուրջ դաս են քաղել 1956 թ. իրազարժութիւններէց ու նրան նախորդած տարիներէց: Նրանք լուրջ դիտեն, որ առաջին Հայաստանի յարմար ու հարթ թուացողը միշտ չէ, որ այդպէսին է իրականում: Ղեկավարների հասցէին անընդհատ պահանջներ կ'ոճկու՛մը, իրերի միակողմանի ներկայացումը, ինչի հետեւանքով կորու վտահոթեան վարկը, ոչ-կոմունիստներէ մեռք ու ոտքերը կապկպելն ու բերանները իցելը՝ հունգար ղեկավարներին սովորեցրեց (եւ դա վկայում է նրանց անտարակուսելի զգոնութեան մասին), որ նոյնիսկ «անահկներէ ու պտուտակներէ» հրապարակման տեսակէտից աւելի լաւ է հետեւել «սպիրտ եւ ուրիշներին սպրիլ տուր» ըսկըզբունքին (նրա սենյակային ջերմաստիճանը, ինքնին հասկանալի է, ոչ մի ընդհանուր բան չունի՝ զբառակարգային պայթարի» հետ), աւելի լաւ է ազատականացումը, «խաղաղ դոյակցութիւնը», քան անընդհատ պատիժներ զործազրեղն ու կարգուկանոնի ծանր հետեւանքներով յղի կոչերը: Եթէ եւ չվախենային անսրամիտ կատակարանի համբաւ շահելուց՝ ինքս ինձ թոյլ կը տայի աւելու, որ բուր կոմունիստական մայրաքաղաքներից միայն Բուդապէսին է յաղորդել զործնականում մարմնաւորելու «հարիւր ծաղիկներ» հոշակաւոր քաղաքականութիւնը, որին նրա պեկիներն նախաձեռնողը, է զէպ սասած, վերջ տուեց իր երկրում արդէն մի քանի ամիս անց:

Մաղիկներին, ինչպէս յայտնի է, հարկաւոր է հող, արեւ ու անձրեւ. վարդերն ու շուշանները բաւական հազուադէպ են ծաղկում վարդապետութիւնների ճառագայթների տակ: Բայց յաճախ ծաղիկներն անեցնում են ցանկապատուած պարտէզներում: Ահա եւ այսպէս մենք մօտենում ենք «ցանկապատին» հունգարական զբաղանդութեան ժամանակակից կացութեան մէջ, որտեղ վարդապետութիւններէ հնացման ու փոշիացման հետ միա-

ժամանակ բացայայտորէն դրսեւորուած է մի այլ գիծ. որի զոյութիւնը բացառուած է «նովուերգութեան» ամէն մի հնարաւորութիւն՝ արտահատի ու իշխանութեան միջև: Եւ այստեղ ինձ վիճակուած է հըրոտեցնալ տուլ Մատի ձեռնարկին տերմինաբանութեանը: «Յանկապատ» եւ նախկող բոլոր բառերն աւելի են յարմարուած իմ նիւթին, քանզի խօսքը վերաբերում է արգելիւնի (թաթունների) համակարգին: Ըստ նոր «Հունգարական համալսարան» (Ակադեմիայի հրատարակութիւն, Բուդապէս, 1963 թ., հտր. 6), «թաթուն» բառը նշանակում է «միասնական ծագում ունեցող սնահաւատ արգելի» անուանելու, անմիջապէս շրջուելու կամ փոխարարութեան մէջ մըտնելու հասկացութիւնների, մարդկանց կամ իրերի հետ, որոնք սրբապան են համարուած ու պաշտուած. իրը ինքնին, այդպէս կոչուած: Այդ աւանդոյթի ծագումը կապուած է նախնական մարդկանց վախի հետ՝ զերմական ուժերից: Տարածուած է ամէնից առաջ պոլիէնկոյտների մէջ, բայց յատուկ է նաեւ այն ժողովուրդներէ մեծ մասին, որոնք սպրում են նախնադարեան հասարակութիւններով, որոնց միացուկները պահպանուել են նաեւ աւելի բնաշրջում կրօններում:

Ինչպէս որ անյապաղ կը տեսնենք, այդ բնորոշումը տառապում է որոշ թերութեամբ, բայց լիովին ընդունել է իր բնականէս: Այսպէս, եթէ Հունգարիայի դրական - զեղարուեստական կեանքը մաքրուած է վարդապետութիւնների մեծ մասից, դա նրան չի խանգարում լցուած լինել բաղձաթիւ արգելիւներով: Եւ այստեղ նա հասնում է կոմունիստական միւս երկրներին (ինչպէս է ասուած «Հունգարական համալսարան»-ում. «... յատուկ է նաեւ այն ժողովուրդների մեծ մասին, որոնք սպրում են նախնադարեան հասարակութիւններով, մարդկանցով եւ իրերով, որոնք սրբապան են համարուած, որոնց անունը տալը չի թոյլատրում միասնական ծագում ունեցող սնահաւատ արգելի» (մեղմատութիւն «ցննապատե-

լուց») : Եւ հիմա, այն բանից յետոյ, երբ մենք քննութեան առնենք անհետացած վարդապետութիւնները, ոչ մի հիմք չունենք լուր առգելիքների մասին, որոնք հաստատօրէն իրենց տեղն են գրաւում :

Այդ արգելիքներից առաջինը Խորհրդրդային Միութիւնն է : Կտրականօրէն արգելում է քննադատութիւն յիշեցնող որեւէ բան զբնի խորհրդային պետութեան ու կոստակցութեան հասցէին, որեւէ բան, որը վերաբերուի նրա բոլոր ժամանակներին դեկալարներին, նրա ներքին ու արտաքին քաղաքականութեանը, նրա հաստատութիւններին ու գործունէութեանը : Այստեղ հակատութիւն չկայ Խորհրդային մշակութիւն առաջնութեան մասին վարդապետութեան շքացման իրողութեան հետ : Աւելին. բնաւ պարտադիր չէ ո՛չ Խորհրդային Միութիւնը «par excellence» նմոյշ գնահատելը, ոչ էլ նրա ընդօրինակումը Հունգարիայում : Պարզապէս պէտք է լաւ իւրացուի այս կանոնը. — ոչ մի տպագրի քննադատութիւն Խորհրդային Միութեան հասցէին (մասնաւոր խօսակցութիւններում ամէն ինչ տեղի է ունենում, հասկանալի է, այլ կերպ) : Պէտք է յիշել, որ բոլոր հրատապ քաղաքական հարցերում Խ. Միութիւնը միշտ, ամէնուրեք եւ ամէն ինչի մէջ իրաւացի է եւ որ նրա ոչ մի յայտարարութիւն կամ գործողութիւն չպէտք է ուղեկցուի բացասական կամ կասկած յարուցող մեկնաբանութիւններով :

Ինչ վերաբերում է անցիակին, ոտուրինեան ժամանակներին, ապա 20րդ համապատմարից յետոյ երկուսն են եկել մի քանի վերականգնող ու վէպեր, որոնք զբուրեն են Մոսկուայում տարագրութեան մէջ ապրած եւ այն ժամանակի սարսափներին վկայ եղած գործերի կողմից : Բայց այստեղ էլ իշխանութիւնը ցուցաբերեց ձեռքերի ճարտար ճկունութիւնը : Անհրաժեշտ եղաւ, ասենք, մի հին կոմունիստի այդ նիւթի շուրջ գրած յուշերը բռնագրուել, որը առաջնորդում եղել էր արտաքին գործերի նախարար, իսկ փառաւոր անցեալ ունեցող մի այլ խոշոր վեպերանի թող չտալ հրատարակելու իր յուշերը, դա այնքան կարեւոր էր, որ

ուստիկանութիւնը խուզարկութիւն կատարեց նրա մօտ եւ խեց ձեռագրի բոլոր օրինակները :

Արգելքը տարածուեց է նաեւ այն դերի վրայ, որը խաղացել է Կարմիր բանակը 1956 թուին Բուխարեստում եւ 1968ին Պրագայում, նմանապէս Հունգարիայի գրաւման մէջ, որն ահա տեւում է ՅՅ տարի : Ոչ մի հունգար գրող չի կարող այդ նիւթի շուրջ գրել դատապարտման նուագադրն մի խօսք : Նոյնպիսի լուծեամբ են շրջանցում եւ ԽՍՀՄի հաստատրիմ գաղնակիցներն ու բարեկամները : Հուսակի Չեխոսլովակիան, որը բաժն է նետում գրողներին, նոյնքան անձեռնմխելի է, որքան որ Հոնեկերի Արեւելեան Գերմանիան, որն իր արուեստագէտներին արտաքուստ է երկրից : Կարելի է խօսել անարդարութեան, չարիքի, իշխանութեան չարաշուտներին, բացայայտ կամ քողարկուած վէճերի մասին, երբ խօսքը վերաբերում է երկրագնդի ուղած կէտին, — այդ երկրներից բացի : Այստեղ այդ ամէնի մասին պէտք է լուել՝ արգելում է : Երկրագնդի եւ Մոսկուի նման երկրները ենթարկում են այդ կանոնին այնքան ժամանակ, քանի դեռ նրանք լաւ յարաբերութիւններ ունեն Մոսկուայի հետ, եւ անմիջապէս դադարում են ենթարկուել նրան, հենց որ յարաբերութիւնները փշանում են :

Հունգարիայի կոմունիստական կուսակցութեան զեկավարները կետ արգելք են : Այսինքն՝ առաջին քարտուղարը, քաղբիւրոյի անդամները, նախարարները եւ միւս ամէնից պատասխանատու արգելիքները (ինչպէս նշել է մարդաբան Թոմաս Վ. Նորտկոտը, նախնական հասարակութիւններում արգելք էին ցեղապիտաններն ու քուրմերը, որոնք վայելում էին սեփականութեան ու առանձնաշնորհների յաւիտենական իրաւունք) : Հասկանալի է, որ անձի պաշտամունք, այդ բառի նախկին նշանակութեամբ, այլեւս գոյութիւն չունի, այլեւս անհրաժեշտ չէ ոեւէ մէկին փառաբանել, ո՛չ ոտանաւորով, ոչ էլ արձակով, ոչ ոք չի ստիպում ձեզ այլեւս առաջնորդի անունը

վանկաւորել եւ ծափահարել կէս ժամ : Բայց նրա հասցէին նուազագոյն քննադատութիւնն իսկ կտրականապէս արգելուած է : Դա տարածուած է նաեւ այն բոլոր մարմիններէ վրայ, որոնք պահպանում են այդ առանձնաշնորհները, կուսակցութեան, իրրեւ այդպիսին, որտեղ կանութեան եւ բանակի : Եւ այստեղ հաստատութիւնը՝ կուսակցութեան, նրա առաջնորդներն եւ նրա պաշտօնեաներն իմաստութիւնը դեղարուեստական-գրական ստեղծագործութեան մէջ արտոցոյնը պարտադիր չլինելու իրողութեան հետ միայն երեւութական է : Քանզի եթէ ովորանա երգել յանձնարարող վարդապետութիւնը չբացի է, անձեանմանութեան արգելքը մնացել է :

Բ. Եւս մի արգելք — բոլոր բանավէճերը վարչակարգի բնոյթի մասին, նրան նախորդած ժամանակաշրջանների կապակցութեամբ : Արգելուած է հարց տալ, թէ արդեօք իսկապէ՞ս սոցիալիստական է այն վարչակարգը, որն ինքն իրեն այդպէս է կոչում : Արդեօք բանուոր դասակարգը իսկապէ՞ս իշխանութեան դուրս է գտնուած : Արդեօք իսկապէ՞ս ազատ են այն ընտրութիւնները, որոնք ամէն անգամ ձայնների 98-99 տոկոսն են բերում թեկնածուներին : Արդեօք իսկապէ՞ս ժողովրդի անունից են հանդէս գալիս նախարարները, պատգամաւորները, կուսակցական ղեկավարները : Իշխանութեան օրինականութիւնը կասկածի տակ դեռ այդ հարցերի հանդէպ ղեկավարները թաղկապէս զգայուն են : Դիւրով չուկազի աշակերտները, նրանք, ում որ անուանում են Բուզապետի դպրոցի փիլիսոփաներ, չհասան թուարկուած հարցերին : Նրանք սուկ իրենց թոյլ տուին խորհրդածելու պաշտօնակալական համակարգի վերաբերեալ եւ միմեանց յետեւից կորցրին դիտական աշխատողների իրենց տեղերը : Եթէ չմտախ է զաջ՝ բառերի մէջ դեռ որեւէ իմաստ է պահպանուել, ապա պէտք է ստել, որ հենց ճախից բերող հարցերն են յատկապէս ջղայնացրելու իշխանութեանը : Բառական բնորոշ է այն իրողութիւնը, որ վերջին տաս

տարում գրողի հանդէպ սարքուած միակ դատավարութիւնը վերաբերում էր ընկերարանական քննութիւնը կրող «Գործարար» յին աշխատավարձ» վէպի երիտասարդ հեղինակին : Վէպում նկարագրուած էր զհարմիր տատղ տրակտորային գործարանի բանուորների կեանքը (որտեղ հեղինակն ինքը աշխատել է իրրեւ խառաս) : Գրողին մեղադրեցին, թէ ինչպիսի եղբակացութիւններ են բխում նրա գրքից : ամենածանր աշխատանքներով դրադուող բանուորները կարող են հասարակեւել զարդարակալութեան ժամանակների ընդհանրին : պետութեան կողմից կլանուած արձիութիւնները իրականում բանուորների թշնամիներն են հանդիսանում : Իշխանութիւնը պետութեան մէջ գտնուած է առանձնաշնորհալ դասակարգի ձեւը : որը բառական հետու է բանուորական խնդիրներից : Արգելքը անարգած դրողի դիրքը չհրապարակուեց, բայց ձեռագրի մի օրինակ «բունեցին» հարաւալուական սահմանում, եւ Բուզապետի դասարանը հեղինակին դատապարտեց ութ ամսուայ բանտարկութեան եւ տուգանք վճարելու՝ «պետական կարգի դէմ հանդէս գալու» համար :

Ճ Ես պէտք է խօսեմ նաեւ մի այլ՝ յափուկ արգելքի մասին (թէեւ տեղին կը լինէր ենթադրել, որ միւս ժողովրդական դեմոկրատիաների» միջեւ կամ նշրանց ու Խորհրդային Միութեան միջեւ եւս նման արգելքներ կան) : Խօսքը Տրանսիլվանիայի հունգարների կացութեան մասին է : Այդ ինդրի պատմական, աշխարհագրական, ազգաբանական եւ մշակութային մանրամասնութիւնները չափազանց խոր ու բազմազան արժատներ ունեն, որպէսզի կարելի լինէր այժմ դաքննարկել հանգամանօրէն : Ամփոփենք : Առաջներում Հունգարիային պատկանած, իսկ Առաջին Համաշխարհային պատերազմից յետոյ կնքուած հաշտութեան դաշնագրով Ռումինիային անցած Տրանսիլվանիա մարզում բուսական մեծամասնութեան կողքին ապրում է հունգարական փոքրամասնութիւն, կազմուած աւելի քան երկու միլիոն հոգուց, ընդամին



Բորոշ խոշոր շրջաններում Հունգարները մեծամասնութիւն են կազմում: Այդ երկու միլիոն ծարղիկ վայելում են, մեզմասամ, ոչ բոլոր քաղաքացիական իրաւունքները կամ, աւելի ճիշդն ասած՝ նըրանց իրաւունքները աւելի են կտրուած, քան ոււմիւնացիների իրաւունքները: Նըրանք մշտապէս ենթարկուած են խտրականութեան եւ այն միւս բոլոր արհաւիրումներին, որոնք յարուցում է բռնի բռնակցման քաղաքականութիւնը: Հարեւան մայր Հայրենիքի եւ Տրանսիլվանիայի Հունգարների միջեւ չկան ո՛չ ազատ կապեր եւ ոչ էլ ազատ մշտութեան փոխանակութիւններ, ու թէ եւ մէկն ու միւսները ապրում են կոմունիստական վարչակարգի տակ՝ նոյնիսկ թերթերի, Հանդէսների, կինոնկարների շրջանառութիւնը կանոնարկում է: Այսօրուայ Հունգարիայում աւելի ցաւայի քիչ խընդիրներ կարելի է հաշուել, քան այդ բացւած վէրքը: Բայց Տրանսիլվանիան՝ արգելք է: Երբ Հունգար դրոշմներին խեղճում են յուսահատութիւնն ու զայրոյթը, նրանք կարող են օգտուել բասկերի, յոյն կիպրոսցիների, Հարա-Մֆրիկեան սեւածորթների մասին խօսելու իրաւունքից, նրանք կարող են ստեղծել ակնարկութիւններ Տրանսիլվանիայի հետ՝ այլտրանութիւններին եւ տարազային տարրերի օգնութեամբ, բայց նրանց արգելուած է զոնէ մէկ սող գրել արանսիլվանեան Հունգարների այսօրուայ ճակատագրի մասին: Նրանք կ'ուզենային զոտալ, բայց դատապարտուած են լռութեան՝ ոչ թէ որովհետեւ Հունգարական զեկափարներին անյայտ է իրերի իսկական վիճակը, այլ՝ որովհետեւ Ռումիլիայում իշխանութեան զլուխ է գտնուում «եզրայրական» կուսակցութիւնը:

«Թարու» կուսակցութեան «Հունգարական համրագիտարան»ում արուած սահմանումը մէջբերելիս եւ նշեցի, թէ դատաւարութիւն է թերութեամբ: Այդ սահմանման մէջ բացակայում է մի էական ճշգրտում, քանզի «Թարու» բառը ունի երկու Հակադիր իմաստներ: Մէկ կողմից նա կիրառելի է այն բանի Հանդէպ, ինչ

որ համարում է սրբազան, սրբազորւած, անխախտ, անձեռնմխելի, իսկ միւս կողմից՝ այն բանի Հանդէպ, ինչ որ ճանաչուած է վտանգաւոր, տագնապեղնող, արդելիալ, անմաքուր (պիղծ): ՅԱՀՄԻՆ, կուսակցական աւագանուն, վարչակարգի բնոյթին վերաբերող թարուները, որտեղանում են առաջին կարգին, իսկ Տրանսիլվանիայի կուսակցութեամբ մէնք անցնում ենք երկրորդ կարգին: Հենց այդ խմբին կարելի է դասել եւ 1956 թուի Հունգարական յեղափոխութեանը վերաբերող թարուն:

Տարօրինակ երեւոյթ: 56ի իրազարձութիւններից յետոյ մի քանի տարուայ մէջ — ընդհուպ մինչեւ Յունկան թուականները կէսը — երեւան եկան բազմաթիւ միջակ վէպեր, թատերգութիւններ, պատկերներ, որոնք նուիրուած էին այդ նիւթին եւ դա մեկնաբանում էին ըստ իշխանութիւնների ցանկութեան՝ իբրեւ Հակաիդեալական խոռվութիւն: Բայց վերջին տասնամեակում նման ըստեղծագործութիւնները բոլորովին չքացել են: Դրանց Հեղինակները դիմել են նուազ փոփոկ բնոյթ կրող նիւթերի, Հենց որ ըստացել են Հանելիթ ու եկամտաբեր պաշտօններ՝ ի վարձատրութիւն Հաւատարիմ ծառայութեան (Գրողների միութիւն, Պեն-կլուբ, թերթերի ու Հանդէսների խմբագրութիւններ, Հրատարակչութիւններ): Աւելի յարժար տեղաւորուելով՝ նրանք աւելի լաւ Համարեցին այլեւս չանդրադառնալ 1956 թուի իրազարձութիւններին, առաւել եւս, որ իշխանութիւնն էլ աւելի լաւ Համարեց այդ մասին լռութիւն պահելը: Թէ ինչ աստիճանի արգելք է 56 թուականը՝ երեւում է նրանից, որ նոյնիսկ Հունգարական կոմկուսակցութեան առաջնորդի այն ժամանակ արտասանած ճառերը արգելուած են հրատարակուելու: Դա Հաւասարապէս վերաբերում է նրա թէ՛ այն ճառերին, որոնց մէջ Համարանք է Հնչում Հունգարական յեղափոխութեան Հանդէպ, եւ թէ՛ նրանց, որոնք նա արտասանել է աւելի ուշ, միեւնոյն յեղափոխութիւնն անանկելով Հակաիդեալականութիւն, բայց

խոսանալով լրիւ ներում 1956 թ. առաջ-  
նորդներին: Այն ստալինականները, որոնք  
կամեցան կուսակցութեան զեկավարին  
վարկարեկել՝ այդ ճառերի բնագրերը գե-  
տեղելով փաստաթղթերի ժողովածու-  
յում, անմիջապէս գրա համար վճարեցին  
աշխատանքի կրօնատում:

Պատկերել 1956 թուականը — ոչ թէ  
քաղաքական նիւթով աւարտեցնուեալ, ա-  
յլ՝ դեղարուեստական երկում — ա-  
ռանց հետեւելու պաշտօնական վարքա-  
դրութեան, այժմ անըմբռնելի է ա՛յն-  
քան, որքան որ իրադարձութիւններից  
անմիջապէս յետոյ: Խօսել այն մասին,  
թէ իրականում ինչ էր ներկայացնում ի-  
րենից 56 թուականը, ոչ թէ քաղաքական  
տերմինարանութեամբ, այլ՝ չտփածոյի  
կամ արձակի լեզուով, ցոյց տալ ժողո-  
վութեան՝ գործողութեան մէջ, միացած,  
համախմբուած, խօսել կուսակցութեան  
իշխանութեան քայքայման մասին, վա-  
ղանցուկ ազատութեան օրերի ու գիշեր-  
ների մասին, ապստամբուած ժողովրդի  
պահանջների ու նուաճումների մասին,  
երկրի անկախութեան ու վեհապետու-  
թեան մասին, չէզոքութեան մասին, բաղ-  
ժակուսակցակոնութեան մասին, բանու-  
րական խորհուրդների մասին, գործա-  
դույի իրաւունքի մասին, օտարերկրեայ  
զինեակ միջամտութեան մասին — բոլոր-  
ովին անկարելի է: Եւ ինչո՞ւ զարմա-  
նալ, որ 21 տարում չգտնուեց ոչ մի ինքն  
իրեն յարգող ու արժէք ունեցող գրող,  
որը համարձակուէր շօշափել այդ նիւթը:  
Կարելի՞ է արդեօք պատկերացնել ճշմար-  
տութեամբ շնչող (նշանակում է եւ ա-  
ռանց ինքնադրաբնութեան) ընկերային  
ուղղութիւն ունեցող մի գրական երկ, որ  
բի մէջ հեղինակը խուսափի արտայայտել  
իր անկեղծ վերաբերմունքը՝ իր երկրի  
բուրբոյին ոչ վաղ պատմութեան իրա-  
դարձութիւնների նկատմամբ:

Վտանգաւոր, տաղնապեցնող, պիղծ  
արդէքների թուին է պատկանում եւ վը-  
տարանդիական գրականութիւնը: Արեւ-  
մուտքում հունգարերէն լոյս տեսնող  
գրքերի ու հանդէսների ճնշող մեծամաս-  
նութիւնը երկիր չի մտնում, նոյնիսկ ե-

թէ նրանք բուրբոյին հեռու են քաղաքա-  
կանութիւնից: Արեւմուտքում ապրող լա-  
ւագոյն հունգար գրողների տնունները  
(եւ նրանց մէջ՝ ոչ միայն մէկ ապագայ  
դասական), որոնք յիշատակուած են գրա-  
կանութեան պատմութեան մէջ եւ ժամա-  
նակակիցների յուշերում, այդուհան-  
դերձ, անմատչելի են հունգար ընթերցո-  
ղին, նա չի կարող երկրում գտնել նը-  
րանց երկերը, նոյնիսկ եթէ այդ երկերը  
գրուել են ներկորդ Համաշխարհային  
պատերազմից առաջ եւ դրանց հեղինակ-  
ները անհաշտ ընդդիմադրութեան մէջ են  
գտնուել այն ժամանակուայ կիսադրա-  
մատիրական-կիսասաւատարական վար-  
չուծելի նկատմամբ: Ստացուած է արտա-  
ռոյ կացութիւն, երբ իր Փաշխտասիբա-  
կան համակրանքներով քաջածանօթ Սե-  
լինի վէպը կարող է հրապարակուել Հուն-  
գարիայում իբրեւ իսկական ազատակա-  
նայման վկայութիւն, իսկ միշտ հակա-  
Փաշխտ եղած գրողի գրքերը նոյնիսկ  
Հելսինկեան համաձայնութիւններից յե-  
տոյ սահմանը կարող են անցնել ոչ այլ  
կերպ, քան իբրեւ մաքսանենութիւն,  
կարծես թէ իօսքը թմրադեղերի մասին է:  
Եւ այդ իրադրութիւնը դարձեալ չի հա-  
կատում այն իրողութեանը, որ տարազիր  
գրողներից ոմանք իրենց մի քանի բանա-  
տեղծութիւնները կամ գիրքը Բուլղարիչ-  
տում տպուած են տեսել — գործեղակեր-  
պային նկատաւումներով: Մարդաբան  
Թոմաս Վ. Նորտուտը, որի անունը մենք  
արդէն յիշատակել ենք, նշել է, որ նախ-  
նական հասարակութիւններում, մշտա-  
կան թաքունների կողքին, գործում են եւ  
ժամանակաւոր, անցողիկ, փոխանցուող  
թարուներ, որոնք կարող են վերացուել  
որոշ ժամանակով կամ յօգուտ որոշ ան-  
ձանց, եւ նրանց գործողութեան վերա-  
հաստատումը կախուած է նշան արուած  
անձանց վարքադից, ինչպէս եւ ցեղա-  
պետի բարեպաշտութիւնից:

Մի այլ դիտմանական՝ Ֆրեդերը, իր  
«Մոգութեան արուեստը եւ քաղաքացի-  
նի բնաշրջանը» վերնագրով աշխատու-  
թեան մէջ գրում է նախնական հասարա-  
կութիւնների՝ անունների եւ ամէնից ա-

նալ մեռածների անունների հետ կապ-  
 ւած Թարունների մասին: Խորհրդային  
 պատմագրութիւնը պայտջոյ է, որ այդ  
 լայնօրէն յայտնի հին սովորոյթը դեռեւս  
 գործադրուած է: Խօսքը վերաբերում է  
 այն երևոյթին, որը լուսապէս նկարա-  
 գրուել է հին նախնազարեան հասարա-  
 կութիւններն ուսումնասիրած ազգագրա-  
 գէտների կողմից, երբ Թարուն խախտը  
 մարդը ինքն է Թարու դասնում՝ վտան-  
 դաւոր ու զօրեղծ Թարու: Վտանգաւոր,  
 որովհետեւ նա համարձակուել է ուրիշ  
 ներքին դրդելու իր օրիակին հետեւել, նը-  
 բանց մէջ արթնացելով խանգ ու նա-  
 խանձ, — շինչու նրան Թոյլատրուած է  
 այն, ինչ որ արգելուած է ուրիշներին,  
 — ու այգպէտով դարձել վարակիչ (տես  
 Տրէտոյթ «Տասնւնը եւ քաքաւն»): Խոր-  
 հըրդային հասարակութեան մէջ Թարու-  
 ները խախտողները յանախ լուծարուել  
 են Ֆիդիբապէս կամ, յամենայն դէպս,  
 նրանց անունները չգաջել են պատմու-  
 թիւնից, իսկ նրանց ձեռքբերումները դա-  
 տապալարուել այսուհետեւ լիովին մո-  
 ղացուելու: Այդ եզրանակը, իր անխուսա-  
 փելի հետեւանքներով, յարողութեամբ  
 վերասանկուել է հունգարական հողում,  
 ինչպէս եւ միւս ժողովրդական դեմո-  
 կրատիաներէ՝ հողում:

Մի քանի ամիս առաջ Բուզապիշուում  
 երևուց անգլիերէնից Թարգմանուած մի  
 գիրք, որի մէջ, ի շարս այլոց, խօսուած  
 է եւ 1919 թ. Հունգարական Կոմունայի  
 մասին: Այդ գրքի անգլերէն չրատարա-  
 կութեան մէջ կար մի այսպիսի խօսք.  
 «Հաւցարակամ կոմունիստների աւան-  
 գարդը (առաջապահ մասը) չի կարող հա-  
 մեմատուել ռուս կոմունիստների աւան-  
 գարդի հետ, որի մէջ կային այնպիսի խո-  
 շոր անձնատրուքիւններ, ինչպիսիք էին  
 Լեմինը, Տրագկին, Չիչերինը, Թակոպը-  
 կին, Բուխարինը եւ ուրիշները»:

Հունգարական Թարգմանութեան մէջ  
 այդ խօսքը հնչում է այսպէս. «Հաւցար-  
 ակամ կոմունիստների աւանգարդը չի  
 կարող համեմատուել ռուսական հետ՝  
 այնպիսի խոշոր անձնատրուքիւններով,  
 ինչպիսիք էին Լեմինը ու Յրա մարտակից-  
 ները»:

Ինչպէս տեսնուած էք, Թոյլատրուած է  
 զլուխ խոնարհել առաջադիւնների տ-  
 աջնորդների առջև, եւ զա նոյնիսկ բը-  
 նական է, բայց Տրոցկու եւ Բուխարինի  
 անունները՝ Թարու են: Ինչ վերաբերում  
 է անունների նկատմամբ Թարունների  
 զուտ հունգարական կիրառութեանը, ա-  
 պա զա վերաբերում է ամէնից առաջ 1956  
 թ. մահապատի ենթարկուած տաղ-  
 նորգներին՝ Իմրէ Նազին, Պալ Մալետե-  
 րին, Գեղա Լալոնցիին, Եոզէֆ Միլա-  
 դին, Միկլոշ Գիմէշին, որոնց բարձրա-  
 գոյն յանցագործութիւնը կայանում էր  
 նրանում, որ նրանք, լինելով կոմունիստ-  
 ներ, ձեռք բարձրացրին խորհրդային ու  
 հունգարական կոմունիստական վարչա-  
 կարգերի սրբազան Թարունների վրայ:

Անունների արգելքի խտուրթիւնը տա-  
 բանում է մարդկանց անունների սուհ-  
 մաններից դուրս: Բուզապիշուում մի շա-  
 բաթաթերթի մի քանի ամիս առաջ հրա-  
 պարակէց բարի համբաւ ունեցող մի գը-  
 րողի շատ մանրամասն գրուած յուշերը,  
 որը 1955 թուին ներկայ է գտնուել այն  
 ժամանակուայ հունգարական բռնակալ  
 (դիկտատոր) Մատիաս Թակոչու, մի քա-  
 նի կուսակցական զործիչների ու եւս եր-  
 կու գրողների հանդիպմանը: Հեղինակը  
 մանրամասն նկարագրում է հանդիպման  
 վայրը, մասնակիցներին, չի խուսափում  
 եւ յանդուգն խօսքից, — բոլորը նրա հա-  
 մար, որպէսզի բոս հնարաւորին ճշգրը-  
 տօրէն զգալ տայ, որ եթէ գրողները վա-  
 խենում էին բռնակալից, ապա նաեւ եւս  
 ինչ որ բնաւ կուսակցութեան վարկի օգ-  
 տին չէ), զգալով իր իշխանութեան ան-  
 կայունութիւնը, վախենում էր զլրոզնե-  
 րից: Հեղինակը յիշում է, որ խօսակցու-  
 թեան ժամանակ խօսք եղաւ մի Թերթի  
 փակման մասին, ու անմիջապէս իրեն  
 ստիպում է յայտարարել, թէ չի յիշում  
 նրա անունը: Տարօրինակ մոռացկոտու-  
 թիւն, եթէ հաշուի առնենք, որ նա Հիտ-  
 Նալի յիշում է, թէ ինչպիսի բաճկոն էր  
 հագել Պակոչին եւ թէ ինչպէս անդու-  
 չութեամբ չըջուեց սրճի բաժակը: Մո-  
 ղացկոտութիւնը առաւել եւս տարօրինակ  
 է, քանի որ 30 տարուայ մէջ, երբ Հուն-

գարիսյուն մամուլը ղեկավարում ու վերահսկում է կուսակցութեան կողմից, թերթ փակելու ղեկը կցակի էր: Այո՛, բայց նա կուսում էր «Գլխակամ քերթ» եւ պատմական դեր է կատարել 1956 թուի յեղափոխութեան հռչակման մէջ: 1956 թ. Նոյեմբերի 4ից ի վեր նա չի կարող այլեւս լոյս տեսնել Բուզապետում, բայց — ինչ որ աւելի կարեւոր է — դեռ ողջ է՝ Փարիզում, տարազրութեան մէջ: Դրա անունը թարու է, և հենց դրանում պէտք է փնտռել երկրում ապրող մեր դրչակցի յիշողութեան հասաքըբրական մթազնման աղբիւրը:

Այժմ մենք հասանք այն կէտին, երբ անհրաժեշտ է ցոյց տալ, թէ մեր գրական-գեղարուեստական աշխարհի լատազոյն մասը ինչպէ՞ս է կրում այդ թարուների քանակի աւելացումը: Աղագրութեանն են ասում են, թէ նախնական հասարակութիւնների անդամներին թարուները բնական են թւում, մարդիկ ապրում են նրանց իշխանութեան ներքոյ, վերջի վերջոյ դարարելով դրանք նկատել՝ նըբանք չեն հասկանում դրանց իմաստը, եւ ոչ ոքի նոյնիսկ մտքով չի անցնում դա որոնել: Այո՛, բայց չէ՞ որ հունդարները անցեալ դարի պոլիտիկայիներ չեն: Նըբանք ո՛չ միայն քաղածանօթ ու թարուներին, այլեւ ճշգրէն դիտեն նրանց աղունքները: Նրանք բնաւ բնական չեն համարում դրանք, այլ, ընդհակառակն, դիտեն, որ թարուներն իրենց պարտազըբւել են աւելի քան անբնական ձեւով: Հունգարների պատմութիւնը, ընկերային բնաշըբումը, մշակոյթի մակարդակը բընաւ թոյլ չեն տալիս նրանց դասելու նախնական ցեղերի շարքին, այլ՝ աւելի շատ՝ եւրոպական չափահաս ազգերին: Թարուները այնքան ատելի եւ նուաստացուցիչ են նրանց համար, որ մի քանի վարդապետութիւնների (դոգմաների) չքացումը անկարող է նրանց միխթարել: Բայց նոյն ժամանակ հունգարները դիտեն, որ այն գերհզօր օտար տէրութեան մէջ, որը իրենց այդ բոլորին է դատապարտել, ո՛չ միայն թարուների համակարգն է անձեռնմխելի մնացել, այլեւ դոգմաների մեծ մասը շարունակում է ծաղկել: Ուստի եւ՝

նրանք ներդամիտ են իրենց ներքին տէրերի հանդէպ, նրանց վրայ պատասխանատուութիւն չընելով ամէն տեսակ թափունքերի անխուսափելի ներմուծման համար: Նրանք աւելի շատ հակուած են ղեկավարներին երախտապարտ լինելուն՝ դոգմաների հեռացման, անհետացման համար: 56 թուից յետոյ, որը ցոյց տըբւեց, թէ գերագնացող ուժերի դէմ բացայայտ ապստամբութիւնը պատրուք է, ծնուեց ներկայի մի այլ պատկերացում: Անկարելի է ժխակել, որ իրերի ներկայ միմակում Հունգարիայի կացութիւնը լուազոյնն է հնարաւորներեց. թարուները դրոհել՝ նշանակում է անխուսափելիորէն մնաս հասցնել տոյ կացութեանը, նշանակում է ենթարկուել ամենադժման դոգմաների թաղարութեան վերադարձի մտանգին: Բացի այդ, գործել ձեռք բարձրացնել թարուներից մէկն ու մէկի վրայ՝ նշանակում է ուրիշների գլուխները վտանգի ենթարկել: Ասենք, եթէ թարուի վրայ ձեռք բարձրացնող գրական մեծ անուն ունի (նրա տազանդն ու ժողովրդականութիւնը հենց իրեն կարող են թարուի մակարդակի հասցնել), ապա նա թերեւս շատ աւելի մեծ վնասներ կը հասցնի իր անդէն, ժողովրդականութեամբ շտաշտպանուած գրչակիցներին, քան անձամբ իրեն: Յատկապէս այդ կարդի կացութիւն է նկարագրել Ֆրեդերը իր այն երկում, որի մասին արդէն խօսուել է. «Մադրի ցեղի աաջնորդը երբեք չի փորձում իր շնչով հրալը բարբոքել, որովհետեւ նրա սրբագամ շնչառութիւնը կարող է նրա ուժը փոխանցել կըբակին, կրակի վրայ կախուած կնուցին, կնուցում եփուող կերակուրին, այդ կերակուրն ուտող մարդուն, ինչ որ կարող է հասցնել այն կրակի վրայ եփուած կերակուրն ուտող մարդու մահուան, որն իր սրբագամ ու վտանգաւար շնչառութեամբ բարբոքել է աաջնորդը»: Որոչ չափով հենց այդ կախարդական լըբանով կարելի է բացատրել (այնքան սրբազան շնչառութիւններ կան, որ կրակը բորբոքող չկայ) այն իրողութիւնը, որ վարչաձեւը վճռակաւորէն պաշտօնական գրա-

քննութեան կարիք չունի: Ինքնագրաբեր-  
նաւթիւնը կատարում է իր գործը: Արդ-  
եօք կա՞յ աւելի ապշեցուցիչ բան, քան  
այն իրողութիւնը, որ հենց հիմա թը-  
ւարկուած, բայց իրականում անկասկած  
շատ աւելի բաղձաբիւ, երբեք եւ ոչ մէ-  
կի կողմից չգրանցուած, չկարգաւորուած  
թարուները գործում են՝ հակառակ ամէն  
ինչի: Քանզի դրանք բոլորն էլ ամէնքին  
յայտնի են աւելի լաւ, քան եթէ փորս-  
զրուած լինէին մարմարի վրայ:

Միւս կողմից էլ այն, որ թարուները  
միաժամանակ թէ՛ առում եւ թէ՛ պահ-  
պանում են (ճնշման տակ), չէ կարող  
հասցնել այլ բանի, հոգեկան խոր բա-  
խումներից բացի: Հարկաւոր չէ հոգե-  
կան ու Ֆրէճոյական լինել՝ յիշելու հա-  
մար Փրէճոյի «Տասնմը եւ քաթուն» այն  
էջերը, որտեղ խօսուած է երկակի վարքի  
մասին, որը ստեղծուած է թարուն խախ-  
տելու ցանկութեան եւ այն վախի միջեւ  
եղած լարուածութեամբ, որը յարուցում  
է այն: Քանզի թարուները վերջին հաշ-  
ւով ուղղուած են մարդու ամենախոր  
ձգտումների դէմ եւ այն իրողութիւնը,  
որ անհրաժեշտ է եղել դրանք հաշակել,  
վկայում է մարդկանց՝ նրանցից ազատ-  
ւելու բուն ցանկութեան մասին: Այն,  
ինչ որ պարզ հոգիներում սոսկ երկուու-  
թիւն էր, ժամանակակից մարդու հոգում  
նեարդայնութեան (նեւրոզի) է վերած-  
ւում: Արեւմտեան գրականութիւններում  
զոյութիւն ունի նեարդայնութիւն, որի  
ակունքները ոմանք տեսնում են գրամա-  
տիրութեան ճզնատմի եւ սպառողական  
հասարակութեան մէջ, ուրիշները՝ ընդ-  
հանրական գաղափարախօսութեան բա-  
ցակայութեան, երրորդները՝ անմաքուր  
խղճի մէջ: Գոյութիւն ունի նաեւ վտա-  
րանդիական գրականութիւնների նեար-  
դայնութիւն, որի արմատներից մէկն է  
հենց արմատների բացակայութիւնը (հե-  
ղինակների մօտ): Ինչ վերաբերում է Ա-  
րեւելեան եւ Կենտրոնական Մերոպայի  
գրականութիւնների նեարդայնութեանը,  
ապա գա զոյութիւն կ'ունենայ այնքան  
ժամանակ, քանի զեռ չափահաս ժողո-  
վուրդներին կը պարտադրուեն քարէ գա-  
րով թուադրուած թարուներ՝ իբրեւ բա-

ցարձակ արհամարհանք տաղանդի, բա-  
նականութեան եւ ստեղծագործութեան  
նկատմամբ: Ինչպէ՞ս կարելի է ստեղծու-  
գործել առանց նեարդայնութեան, լիո-  
վին աշխատանքի մէջ խրուելով, այնտեղ,  
որտեղ հարկաւոր է մշտապէս ինքն իրեն  
հարց տալ, թէ արդեօք իր բառը, նախա-  
դասութիւնը, միտքը չի՞ դիպչում այս  
կամ այն թարուին, որտեղ հարկաւոր է  
անընդհատ ծանրութեթեւ անել՝ ահա սա  
կարելի՞ է զեռ ասել, թէ՞ արդէն չի կա-  
րելի, որտեղ ստեղծագործական եռանդի  
մեծագոյն մասը պէտք է յատկացուի  
այնպիսի քայլեր հնարելուն, որոնք կ'օգ-  
նեն շրջանցելու թարուն կամ կողքով  
այնպէս սահելու, որ «վերելում» ոչինչ  
չնկատեն: Ի՞նչ իսկական զեղարուեստա-  
կան երկը ծնում է այդպիսի պարադա-  
ներում, ուր նա արժանի է կրկնակի՝  
յարգանքի: Բայց կարո՞ղ են արդեօք այդ  
պարագաները չաղղել զեղարուեստական  
երկերի մեծ մասի վրայ:

Ո՞ր պատճառով այնքան հեշտ եղաւ  
յաղթահարել զոգմաները, երբ թարուներ-  
ը այնքան կայուն են՝ փոթորիկների ու  
ժամանակի հոսանքի դէմ: Ես կարծում  
եմ, որ պատասխանը հեշտ է գտնել:  
Դոգմաները՝ պաղափարախօսութիւնից բը-  
խող հրամաններ եւ արգելքներ են: Սա-  
կայն, որքան էլ որ վարչածեւր պարծե-  
նայ իր գաղափարախօսութեամբ, նա լաւ  
գիտի, որ իրականում դա ամենաշատը  
լա՞ է իր նկարի վրայ: Եթէ մտածելու լի-  
նենք այդ նկարի արտանկարումների  
թուի մասին՝ Մարքսից-Լենին, Լենինից-  
Ստալին, Ստալինից-Յրուչչով եւ Ռոուչ-  
չովից մինչեւ մեր օրերը, եթէ մտածենք,  
թէ զեռ որքա՞ն վերաներկումներ պէտք  
է լինեն, ապա հեշտ է յանդել այն եղբա-  
կացութեան, որ այս կամ այն դոգմայի  
կեանքն ու մահը կապուած չեն վարչա-  
կարգի կեանքի ու մահուան հետ:

Թարուն՝ բոլորովին ուրիշ բան է:  
Թարուներն արմատաւորուած են քառ իշ-  
խանութեան մէջ եւ իշխանութեան ար-  
մատները գտնում են թարուների մէջ:  
Անկարելի է ապալել մի որեւէ թարու  
այնպէս, որ չաստանի հարեան թարուն,  
անկարելի է հրաժարուել որեւէ թարուից

այնպէս, որ դա սպառնալիքներ չյարուցի  
 Էլիսանութեան ամբողջ շէնքի համար:  
 Թարուների համակարգի թիկունքում  
 կանգնած են ո՛չ թէ պարբերութիւնները  
 (պարագրաֆները), ուսմունքները (գոկ-  
 որիւնները), որոնք կարելի է մեկնաբա-  
 նել այսպէս կամ այնպէս, այլ՝ պետու-  
 թիւնը, կուսակցութիւնը, «պետական ան-  
 հրաժեշտութիւնը» եւ «կուսակցական ան-  
 հրաժեշտութիւնը», իսկ իրականում ոչ  
 այլ քան, քան միեւնոյն փոքրամասնու-  
 թիւնը, որը 60 տարի առաջ յափշտակեց  
 Էլիսանութիւնը մեծամասնութեան նկատ-  
 մամբ եւ այդ ժամանակից ի վեր տարա-  
 ծել է իր թագաւորութիւնը միւս երկր-  
 ների վրայ: Սակայն այդ փոքրամասնու-  
 թիւնը լաւ գիտի, որ կրակի հետ չի կա-  
 բելի խաղալ ու, առաւել եւս, այդ բանը  
 թոյլ տալ անելու «անպատասխանատու»

տարբերին, որպիսիք են գրողները եւ ար-  
 ւեստագէտները: Նա գիտի նաեւ ու չի  
 մտանում ոչ մի բնույթ, որ այնքան ժա-  
 մանակ, քանի դեռ ինքը թոյլ չի տալիս  
 դիպչելու թարուներին՝ իր դոյութեանը  
 չի սպառնում ոչ մի լուրջ ներքին ուժ:  
 Բայց եթէ թարուներն անհետանան՝ այդ  
 փոքրամասնութիւնը կ'անհետանայ նը-  
 րանց հետ միասին: Դրա մէջ էլ հենց կա-  
 յանում է նրա ամենամեծ գիտելիքը: Թե-  
 բեւ էլ՝ նոյնիսկ միակը: Բայց նրա հա-  
 մար դա արդէն բաւական է:  
 Հունգարական գրականութեան, ինչ-  
 պէս եւ նոյն ճակատագիրն ունեցող միւս  
 գրականութիւնների համար, դա նոյն-  
 պէ՛ս բաւական է՝ զժրախտարար:

ՏԻՖՈՐ ՄԵՐԱՅԻ

Վ. Օ Շ Ա Կ Ա Ն

### Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Ե Ր Ի Տ Ա Ս Ա Ր Դ Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ն Ե Ր Ը

Առաջին յօդուած մը, «Հայրենիք» մէջ, 1979ի դարնան, փորձած էր վերլուծել Ժամանակակից խորհրդահայ միջակ բանաստեղծներու յատկանշական քանի մը երևույթները: Յանգելու համար քաղաքական տեսարանին, ուր շուարած նորեկը, ձեռքն ինկած դիմակաւոր, սիր քեղապարհականներու — մէկ կողմէն հաստատուն, մէկաթոն պաշտօնական մտաւորականները, որոնք դժման խաղին օրէնքները որոշած են իր ծնելին շատ առաջ, միւս կողմէ՛ անհնչելի անուններով կնքուած այդ քրթազրիչները, խմբագիրները, տեխնիկները, եւայլնները — դեռ գանկին վերի ոսկորը չկարծրացած՝ հրապարակ նետուած է իբրևա արտարժէքի ամէնէն խորխուղ ու շարքալէ քանակը՝ բանաստեղծը: Օրիշներով կը կշռուին այդ փերուսն երիտասարդները, որոնք գիշերային տարաշխարհիկ թիթեռնիկներու նման շնն կրնար մինչև առաջւայ ճշմարտութեան դիմանալ: Բացի՝ Գարուշ Հարեանցէն ու Հրաչեայ Սարուխանէն, եթէ յաջողին մերժել թունաւոր շաքարները, որ յանձնախումբերու անգուլթ բազմութիւններ կը հրամցնեն, յուսարով գիրենք կաշառել: Իսկ միւսները — տասնակներով անոնք հրապարակ կը հաւաքուին օրուայ էն ռոմանթիք պահուն՝ անօթիսած ու քիչ մը տրտում, սպասելով, որ գան մարդիկ գիրենք սպանդանոց առաջնորդեն: Եթէ արդէն տաղանգ ունենային՝ չէին տպեր իրենց դպրոցական փորձերը իբրևա գրականութիւն, այլ կը կառչէին ընկերութեան ծերպերուն, կը լռէին, կը վերածուէին մաքի պատարարութեան զաղտնի բանակի մը...: Վա՛յ այն բանաստեղծին, որ կ'արտօնէ, որ համբաւի հասած ու իր կարեւորութեամբ յղփացած տարեց մտաւորական մը ձեռքը իր ուսին դնէ ու ընկերանայ իրեն՝ իր բացառիկ ճակատագրի փնտրտուքին: Կայնիլ դիմացը անտարբեր, վիթխարի ու հեղձական տիեզերքին այդպէս բուլիլ, յախուռն ու սնշուշտ ծիծաղելի, բայց ինքզինքով բռնկած — կա՛յ աւելի գրաւիչ, անկրկնելի տեսարան երիտասարդ բանաստեղծին համար: Այդ ծայրայեղ, խիզախ կեցուածքին ջով ալ քանի՞ փարա կ'արժէ սա կամ նա պաշտօնան, որ անդիմազիծ կիսազրազէտ ու ջորաչէն յանձնախումբի մը պատգամը կը բերէ վտիա քերթողին, որ կը մերժէ...: Մէկ կողմէն երեւակայութիւն ու տեսողութիւն, միւս կողմէ՛ նպարտմանառի շորմիկան հալիւները պզտիկ տեսարակին անկիւնը: Ու ով գիտէ Հայաստանի մտաւորական ներքին կլիմայի ո՞ր ծէրին ու քմայքին կը հնազանդի Սերո խանգաղեանը, պատուակա՛ն ու վաստակաւոր զրազէտ, երբ Դաւիթ Յովհաննէսի «Անցնալ կարուստայ»ի կողքին վրայ նախարարի նման զրուցիւն մը կը զետեղէ, ինք, որ կեանքին մէջ մէկ տող բանաստեղծութիւն զրած մը: Նոյնը ըրած էր 1965ին Ալբերտ Իսախանեանի «Մալկէ կամուրջ» հատո-

ընկին Հրատարակութեան առթիւ: Դիւցազներդական Քեռի Թորոսի դե՛րը կը խաղայ, աղահամբերով սերունդներու շարունակականութիւնը, առհասարական ուժերէ մղուած, թէ՛ մասնաւոր դուրդուրանք մը անփորձ բանաստեղծներու հանդէպ, իրրեւ միակ անձերը, որոնց կը վստահուի, ուզեն չուզեն, ազատութեան անդին ջահը, լեզուի գանձը ու անցեալի աւանդը: Իսաղանեանի պարագային՝ դուքի ու հայրական կարեկցութեան տարր մը կայ անկասկած — բանաստեղծը հաշմանդամ է, արկածահար: Բայց արդէն ատիկա բանաստեղծի բնագոյնական ճակատագրին նիւթական նշանն է, զրդի ու խթան նոյն ատեն: Կար նաեւ երիտասարդին սոսկական արժէքը, որ նիւարկեկ հատրը լուրջ խոստումի մը կը վերածէր — մեծարենցեան երանք մը հոս, բակունցեան աշխարհի ոգիին թափանցումը հոն, կարօտի նուրբ ու անկեղծ շէշտեր, թախիժ ու ցաւ...: Սակայն հետաքրքրական է գիտնալ, թէ ո՛ւր հասաւ ու յանգեցաւ այս երիտասարդին արուեստը, ինչո՞ւ բացակայ է իր սերունդին ժխորէն: 1971ին մանրուկ վիպակ մը հրատարակած է ու հիմա, քառասունը անց՝ ի՞նչ սորվեցաւ իր անքուն զիշերներէն, անկողինին դամուած եւ, ուրեմն, սանձակոտոր երեւակայութեամբ ու զսպուած ըմբոստութեամբ դիտուած: Արդեօ՞ք Խանգաղեանի նախարանը դեր մը խաղաց իր լուրթեան մէջ...: Հետաքրքրական է գիտնալ, թէ նորերը ի՞նչ շափով կ'աղդուին հիներու խրատներէն, քաջայերունքէն կամ քննադատութենէն: Օրինակի համար, տարիներ առաջ Սերո Խանգաղեանի մէկ գրութիւնը՝ «Ձրոյց մերունց հետ» («Էրարուն», 1971, թիւ 1), ուղղուած՝ Դաւիթ Յովհաննէսին, Յովհ. Գրիգորեանին ու այլ բանաստեղծներու՝ զանոնք կը խրախուսէր, որ տոկան նեղմիտ քննադատներու յարձակումներուն, որովհետեւ իրենց դրածը առողջ, նոր, աղագային, նաեւ բանաստեղծական էր, թէկուզ երբեմն անբնական ու ցնցիչ: Քանի՞ հոգի ականջ կ'սխեց երէց գրողին ողջմիտ, առողջ խրատին, ու քանի՞ հոգի բացատրեց անոր, թէ արուեստի օրէնքները չափաւաւ իրիտ ու դաժան են մեր օրերուն, քան որեւէ մէկ ատեն ասկէ առաջ: Հաւանաբար ոչ ոք, ու Խանգաղեանը պահեց իր խորհրդանշական բարձր իմաստը, որուն արձագանգները պիտի աւելի ուշ լսէինք Ղարաբաղի առթիւ, իր որդեգրած հերոսական կեցուածքին ատեն:

Հայաստանի նոր ու հասունութեան ճամբուն վրայ լեզուի ու արուեստի հանդէպ պատասխանատուութիւն զգացող բանաստեղծները շատ չեն թիւում:— Հ. Էդոյեան, Ա. Յարութեան, Ա. Աւարեան, Գ. Յովհաննէս, Ա. Մարտիրոսեան, Է. Միխայիլեան, Յ. Գրիգորեան (որուն մասին «Գարուն» ամսագիրն ու Ալ. Թովիշեանի «Բառի սահմանները» հատորը յաճախ կ'արտայայտուին, բայց ցարգ միայն հաս ու կտոր քերթուածներով ծանօթ է ան Սփիւռքին): Ու՛ Ռ. Դաւոյեանը, որ առանձին նախադասութիւն մըն է մինչ իրմէ աւելի բարձր՝ Ա. Ալիբեանը, որ շատ ծանօթ չէ Երեւանի ինտելիգենցիային, բայց բաւական լաւ ճանչցուած է Սփիւռքի մէջ: Հասունութեան տարբեր մակարդակի վրայ գունաւոր ծաղկամաններու մէջ կը քնանան քերթողներ, որոնք ամբողջ զիշեր ու ցերեկ գետինը քարին պիտի նըստին, պաղ ոտքերին փոխնուն մէջ առած տաքցնեն ու սպասեն, որ իրենց հերթը դայ խօսք անկելու ու ըստ էութեան արտայայտուելու:— Հրո. Սարուխան, Գ. Հարեանց, Ա. Պարսամեան, Վ. Ալեքսանեան, Ս. Կոսեան, եւայլն:

Տարբեր երեք ծիրներու վրայ դարձող այս քերթողները իրարմէ հեռու պահող քաղաղական ուժեր կան, սուրբ թեմաներ ու հասարակաց ապրումներ, որոնք իւրաքանչիւրին քով կ'արտայայտուին տարբեր երանգներով եւ կ'արդարացնեն ճերմակ գործածութիւնը: Ժխտական խոստով մը



այդ «կէնճերը» կը բնորոշուին իրենց հակադրութեամբը հին սերունդի ինքնութեան, «լուսանոգիներուն» դրական ճաշակին ու յայտնի է, որ ասկէ ետք ինչ որ ալ ընեն, սպտոնան, խրատեն կամ շընեն՝ նորերը յաջողած են ամպերուն մէջէն ծակ մը բանալ ու նոր երկինք դռնել: Ենթադրելու է, որ ընթերցող հասարակութիւնն ալ կամայ-կամայ հրաժեշտ կ'անէ հիներէն, այդ ողջ լուսանոգիներէն — այդ իմացական մափիան, դրականութեան էմսփը, որ յիսուն տարիէ ի վեր բռներ էր հրապարակը ու արդիւր ամէն թուրմ պոռթկում՝ յանուն ինչ-որ աւանդութեան, ազգային պարտականութեան, կոմունիզմի էսթետիկային եւ ով գիտէ ուրիշ ինչ սուրբերու, որոնց ուժը մինչեւ մեր փերը չի հասնիր, բարեբախտարար: Տարօրինակ ձեւով մը, Հայաստանի մէջ տարիքը սահմանազուխ է թէ՛ կեանքի փուլերու, թէ՛ ալ դրական կենսունակութեան: Արագ ակնորկ մը 1975ին Երևան հրատարակուած «Փրակամ տեղեկատու» հատորին՝ ու յայտնի կ'ըլլայ, թէ ով որ այսօր 45էն վեր է ու պետական մեքենային կողմէ կնքուած է իրբեւ բանաստեղծ կամ գրագէտ՝ ոչ մէկ կշիռ ունի երկրին երիտասարդ արեան դրական փոթորիկներուն, հասանքներուն ու արկածախնդրութեանց մէջ: Այդ մարդիկը կամ բանասիրութեան, կամ թարգմանութեան, կամ քաղաքականութեան ե կամ ալ պարզապէս տափակութեան շուկան ծախսեր են իրենց երիտասարդութեան խաչաներն ու տաղանդը: Զգուշացնելու է հաւանաբար այն տղաքը, որոնք 40ի ժօտերը կը փորձուին բանասիրութեան կամ թարգմանութեան ցնծուհիներուն դիմել: Ատիկա աւելի ճակատագրական է բանաստեղծներու, քան արձակագիրներու պարագային, ու եթէ զանց անենք Արքաւան Ալիքեանը, որ միւս-մինակ կը շարունակէ մաքաթանը բոլորէն շատ առջեւ, ո՛չ ընդհանուր անտարբերութենէն, ոչ ալ պատահական հեղինակութիւնը ազդուելով՝ կը տեսնենք, որ միւս բոլոր անխոր վերածուեր են պատուարժան անձնաւորութիւններու, մշակութային խորհրդանշաններու կամ ալ ճամբուն եղբին հանգչած ու հանգած են, անկարող վազբին մասնակցելու: Յատկանշական է, որ «Տեղեկատու»ին մէջ յիշատակուած ձօն 100 ապրող բանաստեղծներէն աւելի քան երկու երրորդը անցեալ անկատար կամ շատ-շատ յարակատար ժամանակի մէջ կ'ապրին: Բանաստեղծութիւնը սիրոյ պէս ապրում մըն է, որ պէտք է ամէն առտու, ամէն գիշեր, ամէն ուրիշ-էնտ ձեւ ու խորք փոխէ, ստեղծուի ու քանդուի, շարժի, ապրի թարմ սնունդով, ոչ թէ ստանարանի պահածոներէ, այլ՝ տարաշխարհիկ, վտանգաւոր սեւ-շուկաներէ, ուր կը վիտան գաղտնի ոտիկանները, Ալլիան մամիշակը, որուն Բակունց կ'ակնարկէ: Պէտք է իր ինքնութիւնը կասկածի տակ դնէ, որպէսզի հողաթափի մը նման սովորական, տափակ, գործնապաշտ առարկայի չվերածուի, որ պէտքի պետական մեծապատիւ պաշտօնատարները զայն ձեռք-կայ-մէկ չընեն, զի թիւն ասկէն ինդալով կամ քֆրելով բան մը չի փոխուիր կացութենէն, երբ մէյ մը «Այլ» ըսես «Ել»ին տեղ, գիտնալով՝ որ սուս է կամ սըխալ է, կամ նոյնիսկ ձեռքդ ալ չէ, կրնաս կեանքդ վրայ տալ ու ասկէ ետք ապրիլ իրբեւ շրջուն մոմիայ ու այցելել Սփիւռքի պաղոյ գաղթօճախները, ասանց կարենալ մէկ հատ կայծ իսկ անոնց տալու, որովհետեւ քու ներսի արուեստի, ստեղծումի ու անկախ մտածումի կրակդ ժարած է: Հիմնական երեւոյթ է ասիկա — ինչպէս ինքնատիպ, ուժեղ, իցիւ թէ վերաւոր բանաստեղծական գործերը շատ աւելի զբաւոր կապ են Սփիւռքի ու Հայաստանի միջեւ, քան ցարդ հեւանդներուն այնքան սիրած, փայփայած այդ խալտարդէտ, ազմկոտ գերդաստանը յղացքներու, բառերու ու անվերջանալի շուրջպար բանած նախադասութիւններու, որոնք Հայիկ Նահապետէն կը սե-

րին: Այսօր, ռեփլէնս շարժումով մը մեր միտքն ու զգացումները կը զոց-  
 ւին, կը կղպտին, երբ Հայաստանէն ունէ մէկը սկսի սուշել, իստիլ կամ  
 պարզապէս մտրալ Հայրենիքին՝ չուրին ու Հովուն, Արարատին մասին:  
 բոլորովին անդիտանալով մեր ձանձրոյթի ու նորութեան ակնկալութեան  
 սահմանները: Հասկնալի է անշուշտ, որ Հայաստանի հայերուն համար, այդ  
 յղացքները սուրբ ու կենսական արժէք մը ունին ու կը յարգենք զիրենք ի-  
 րենց գաղափարներով, սակայն սփիւռքեան անցագիրը ըստած բան մը կայ,  
 զոր միայն մենք կրնանք տալ: Նորէ՞ն կրկնենք, թէ թմրած է այլևս «հոգ»  
 կոչուած շիղը արուեստի մէջ, մեզ անուագն յիսուն տարի ետ կը տանի ու  
 այս կացութեան յանցանքը Հայաստանցի քերթողներուն է: Եթէ կ'ուզեն, որ  
 իրենց գրականութեան շահեկանութիւնը վառ մնայ մեր զանգուածներուն  
 մէջ, պէտք է նորոգեն իրենց թեմաները, միանգամընդմիջս վտարեն իրենց  
 գրականութենէն Արարատը, Երևանը, Հայաստանը ու ինչ բառ, պատկեր,  
 բառերու զպրուցական խմբանկարներ, որոնք 19րդ դարու հայ գիւղացիի,  
 զիւղի, Հայ Հոգիի միջոցաւ մեզ պատանդ կը պահեն տակաւին: Այլ ո՛չ կա-  
 րօտը, ո՛չ հայրենարարութիւնը, ոչ ալ հայրենասիրութիւնը գրական թե-  
 մաներ են մեզի համար: Այս մտածումներէն կը ծագի այն համոզումը, թէ  
 ո՛րքան գրական գործ մը գատուի անցեալի ոճերէն, ո՛րքան կտրէ իր զգա-  
 ցական ու այլ կապերը Թումանեան-Իսահակեան-Չարենց նուիրագործուած  
 կապաշտական տանդութիւններէն՝ ա՛յնքան աւելի յոյս կայ, որ հայ ժո-  
 զովուրդին գրագէտները զիրար հասկնան: Դժուար չէ գիտակցիլ, թէ այդ  
 տանդութիւնները կենսական ու անփոխարինելի պաշտօն մը ունին Հայաս-  
 տանի մէջ — սակայն մենք ուրիշ մարդ ենք, յատուկ վիզալ պէտք է մեր  
 մտքի սահմաններէն ներս մտնելու համար: Չի բաւեր հայ ըլլալը, ոչ ալ  
 արկածով Հայաստան ծնած ըլլալը — անհրաժեշտ է արդիական ըլլալ, Չլրդ  
 դարու մարդ ըլլալ, պահելով օտակայն 10րդ դարու հայերուն գաղտնի ինք-  
 նութեան կնիքը, որ կ'արտայայտուէր ստեղծագործական եռանդով, անկա-  
 խութեան յամու պահանջով: Արդեօք անկարելի՞ է այս համադրումը, եկած  
 է դարը բոլորովին տարբեր, աննախընթաց արջն, ցեխէն, մայթէն ու վե-  
 բեխէն հաւաքուած փլշանքներով նոր ինքնութիւն մը հնարելու, կազմա-  
 կերպելու համար: Ո՞վ գիտէ...: Սերունդները իրարու կը յաջորդեն, սա-  
 կայն իրենց խօսքը չբանտմուծուած, բառերը չարթնցուցած ու ջով ջովի չա-  
 ըած՝ արդէն չկան, մինչ մենք արուարձանը նստած հարց կու տանք, թէ  
 ո՞րք զնաց ամէն մարդ, ինչո՞ւ ժամադրութիւնները չեն յարգուիր, մինչեւ  
 ե՞րբ մարդիկ մաքսաննդի պէս պիտի սպրին ու մենին՝ առանց մեղի յայտ-  
 նելու իրենց գաղտնիքը, առանց կտակի ու ժառանգորդի: Օրինակ, շահե-  
 կան պիտի չըլլա՞ր, եթէ խորհրդահայ ինքնասիրտ, զգայուն ու խիզախ քըն-  
 նագատ մը մեզի բացատրէր, թէ ի՞նչ եղաւ այն հարիւրաւոր տաղաչափնե-  
 րուն, որոնք բանաստեղծ չեղած՝ լուցին, որոնք նիհար, մտկոտ հատորիկ-  
 ներով կամ պարբերաթերթերու սիւնակներուն մէջ սեղմուած, ճզմուած՝  
 յանկարծ շողացին կայծոռիկներու պէս ու կորան գիշերին ծոցը: Մարդիկ  
 ինչո՞ւ կը խօսին, ինչո՞ւ կը լսեն, ո՞րք կը թաղուին ողջողջ, քունէն նոր  
 արթնցած, վախկոտ տենչեր սրտերին, սիրոյ ու ազատութեան աղիխարչ  
 ճիչեր հազիւ հասած մինչեւ կսկորդ: Ժամանակին Արբանակ Բաշխունի ա-  
 նուն բանաստեղծ մը կար, որ Ազրպէյջան կը բնակէր: Մեծ բան մը չէր ու  
 50 տարեկանին զեռ տղայական խանդավառութեամբ բնութիւն ու իտէալ կը  
 շրջէր, սէր ու կարօտ կու լար: Սակայն այս մարդը 27 տարեկանին գրեթե  
 էր:

Ես մարդն եմ սփա եւ ունեմ լեզու,  
Ես պիտի խօսեմ աշխարհի առաջ,  
Ես պիտի խօսեմ, ոնց ուրն է խօսում  
Հերոսի ձեռքում՝ անեղաշառաչ:

Ես պիտի կռուեմ մինչեւ վերջին շունչ,  
Փոյթ չէ, քէ մարտում քեւարեկ ընկնեմ,  
Կը կռուեմ երգով, խօսքով քոցաշունչ,  
Թէկուզ պարտուեմ էլ, պարտուած կը յազթեմ:

*Ի՞նչ ճակատագրի հետ ժամադրուեցաւ Բաշխունի, որ անփառունակ լուսնի տակ կամ համակերպումի մէջ գոցեց իր մտքին աչքերը ու մարեցաւ իր բարկութեան բոցը՝ առանց որուն դժուար է մեր դարուն բանաստեղծ ըլլալ ու Կաղանդէ Կաղանդ տոկալ:*

*Շատ յայտնի չէ...*

*Եւ կամ՝ Սիմոն Յովհաննիսեանը, որ հակառակ առդանդի ու բանաստեղծական խառնուածքի բացառապա բացակայութեան՝ միակն է իր ամբողջ սերունդին մէջ, որ Հայաստան-Սփիւռք իմացական կապի մը հարցը կը յանձնէր թուղթին: 1965ին հրատարակած «Նովեբրա սարեր» հատորիկին մէջ «Հայրեմախարոս հայտնուն» անուն քերթուած մը ունի, ձոնուած «Մի տուրիստուհու»: Ահա ինչ կ'ըսէ երիտասարդը.*

Նրան ես ուզում եմ երգել,  
Միայն քէ հասկանայ նա ինձ,  
Իր տունը նա հիւր է եկել,  
Սկիւ է հեռաւոր-հեռաւից...

Իրար հետ բաժակ ենք խփում  
Ու ժպտում յարգանքով խորին,  
Նա իմ մէջ եղբորն է փնտաում,  
Ես իր մէջ՝ քրոջս անգլին:

*Ռոտմաւորը կ'աւարտի նոյն անձկագին հարցումով — պիտի հասկընա՞նք զիրար: Թէ ինչո՞ւ սփիւռքցին ու հայաստանցին զիրար չեն հասկնար, ի՞նչ ընելու է, որ եղբայր ու քոյր զիրար ճանչնան հոն թէ հոս, Սփիւռքի մէջ ու հաւասար վաւերականութեամբ եւ իրաւունքներով — ո՞ւր է այս գեղեցիկ դադափարին շարունակութիւնը 1961էն առէին, ո՞ր հովերը առին-տարին մտածումի այս կայծը: Հաւանաբար երբեք չգիտնանք: Բայց կարելի է մտածել, թէ Պորհրդային աշխարհին մէջ, արուեստը տոկալու համար ժամանակին՝ անտեսական արժէքի փոխուելու է: Այսինքն՝ փոխանակ ըլլալու ինքնիշխան՝ ան նկատուի իրրեւ օժանդակ մշակոյթին, որ, իր կարգին, կը սահմանուի իրրեւ օժանդակը՝ կեղծ-քաղաքական ու կեղծ-ընկերային իրակառնութիւններու: Այսպիսի պայմաններու տակ ինչպէ՞ս յուսալ, որ բանաստեղծին խօսքը լուրջի տոնուի ու ան յաջողի իր ատրապորութիւնը չկեղծել ու իմաստասիր զեր խաղալ մարդուն ու մարդոց կեանքին մէջ: Երբ նորերուն լաւագոյնները գրառիս ու «ժամանակի» յղացքներուն շուրջ կը կազմակերպեն իրենց ամբողջ գրականութիւնը, իրականութեան մէջ միզ մըն է, որ կ'ընեն իրենց գործին հիմերը ամրապնդելու՝ զանոնք հեռացնելով իրենց անձէն, հա-*

յութենէն ու վարչակարգէն եւ արժանները խրելու մարդկային ամէնէն տարածուն մշակութային իրականութեան մէջ, որ շեղուց է ու ժամանակը, գլխաւորութիւնն ու միջոցը:

Այսպէս է, որ էգոյսանի, Մարտիրոսեանի, Յարութիւնեանի սերունդին արուեստը գրեթէ ժխտումն իսկ է սեւակեան, ու շատ աւելի շէշտ կերպով՝ չարենցեան աւանդութեանց: Ասիկա անհերքելի փաստն է մեր ժողովուրդին նորագուէրու կարելիութեանց: Նախ՝ մաքրուած է Ռուսական Յեղափոխութեան ու Երկու Մեծ պատերազմներու խանդին, ցաւին ու վիշտին մէջէն ծնունդ առած կեցուածքի գրականութիւնը, որուն հռետորութիւն անունը կու տանք: Հարուխի պէս բան մըն է այս, իր ամբողջ յուզականութեամբ ու պատանեկան անապարանքով՝ մարդոց զգացումներուն վրայ ազդելու: Լրջութիւն մը կայ նորերուն մէջ, որ մտածումի անկախութեան մը փաստը կը բերէ: Յետոյ՝ երկրորդ երեւոյթը սա է, որ մեծ բառերը, տայնօտարներու նման՝ չկրցան յարմարել մեր ժամանակներու կեանքի նոր պայմաններուն ու անհետացան: Ո՛չ իսկայիցմ, ո՛չ յեղափոխութիւն, ո՛չ ալ ազգի, հողի ու հայրենիքի թեմաներու տուանցքի փոշին, որ պղտորի անոնց տեսողութիւնը: Կճատներու պէս կարճ, այրուած բառեր, ծուռ-բռնուած պատկերներ, բնական ինքնատուութիւն,

Եւ քառի վրայից զգոյշ ու խնամեով քղենու տերեւը պիտի վերցնես -- Գանգի մա՛ բառը, Յշմարիտ է ու անողոք, երբ մերկ է, ու քանգի ցաւը նոր կիսմէ է քերում:

որ եթէ շատ անգամ խաղ է ու մենաշնորհեալ գրօսանք՝ յաճախ ալ կը հասնի իր նպատակին ու քերթուածը կ'ազատուի առօրեայ գետնաքարէ մտածումի քաղղութենէն ու կը բարձրանայ...:

Եւ, վերջապէս, երրորդ երեւոյթ — այս երկտասարդները կը հակադրեն նաեւ սեւակեան շրջուած ուժանթիւքին, որ պատգամներ արձակելով, ինքզինքին ընկերային կոչումներ տալով, մարդոց զգացումներուն հետ խաղալով եւ իմաստուն բանաձեւներ չպրտելով աջ ու ձախ՝ կը ջանար հասնի արձակ եւ, ուրեմն, անանձնական իր առողջ իբրեւ բանաստեղծական տող ըլլի: Այս իրողութիւնը չի հերքեր իր տաղանդին միւս երեսները, օրինակ՝ «Անլուսի զանգակատու»ի նուրբ ու յորդ քնարերգութիւնը, որ սակայն զոհ կ'երթայ իր իսկ ստեղծած աղմուկին ու չի լսուիր...: Կոմիտասի ճակատագիրը, մեր 1915ը ու վերջին պատերազմին տուած արիւնը գոնէ մէկ բան սուրբկցուցին — թէ՛ այն արուեստը, որ հայուն տառապանքէն անդին ու վերջէն հասնի մարդկային աւելի մեծ տառապանքին, որ բնագոյնական ալ նը կարողիք ունի՝ կը դատապարտուի Լէյտի Մաքսիմի նման քնաշրջիկի մը զգայախար երեւակայութեան մէջ բանտարկուած մնալու ու շանցնելու մարդէ մարդ, սերունդէ սերունդ:

(Շար. 1)

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ





ԵՂՆԻՒՐԸ և ԵՂՈՒԻՒԸ, կամ՝ Փոյգորային Վիպապաշտո քիւն:

(Եւսփոր), այլ գործի մը մէջ՝ կուժը կրօրէն բռնած գեղջուկի մը, երեք պատանիներու և գրկուած զանուկին հետ (Ելստազանանէն), ապա՝ նոյն ժանկամարդուհիները, միեւնոյն ժանուկները և կենդանական աշխարհի ներկայացուցիչ զանկերուն տեղ պատգործուած միջի (Եվերադարձ), իսկ բախտաւոր պարագային՝ լապտերը մէտին, իր պատանի խաղակիցներուն հետ Էմարաուիիւնը որանոջ պատանին, քրնրւած՝ Քախիժէն Քոչչոյան մարմիններու մեղի մզուածութեան և փնտառուքի սեմին բողբոջոյ յուսատու լոյսին հակադիր միջնորտին մէջ (Էմանրան):

Ըսինք, Ջոհրայի նորագոյն գործերուն նոյնինկ սակեալաջող ներշնչերը սակաւին չեն ազատագրուած մակերեսային վիպապաշտութեան և գորգանկարչային ծանօթ շափազանցութիւններէն: Եթէ գորգանկարչային ոեմին վերջին մաստորը գիծին շափազանցուած ներկայութիւնն է իւզաների կտաններուն մէջ անգամ, այնուամենայնիւ, ծրագրուած աշխատանքի մը տնօրնութիւնը յոյսը կը հանդիսանայ հիմնական թերութիւնը, խոցելի կէտ մը, որ շաւորչոյն կ'արտաստոյայ մանանդ գծանկարներուն մէջ:

Այս բոլորը անոր համար, որովհետեւ Ջոհրայ շուրջի չէ պատաստը շնչաորելու կարողութեամբ օժտուած հիւն ձեռքն և շնարայունջ արուեստագետի խմորէն: Պայմանաւ սակայն, որ իր գիծերը ազատագրուին աշխատանքը մասնող քրտիքին արուեստական կարգապահութիւնէն, լեցուին կենսիկ թրթիւրով, կշտոյթով, սենկով: Ջոհրայ պէտք է խորապէս անջառագանձայ

նաեւ, որ մշակութային աւանդի յաղթանաջուածով կը սկսի իւրաքանչիւր ճշմարիտ արուեստագետի ուզին, թէ՛ Փոլլորային վիպապաշտութիւնը այլևս սպասած գրամագլուխ է հայ գեղանկարչութեան համար, իսկ կենսիկ յաւերժական կայութիւններուն ու յոյզերուն հաստատումը նպատակադրող արուեստը երբեք չի կրնար բաւականանայ գաւառային վիպապաշտութեան նախնական մակարդակով:

Կեանքը Փոլլոր չէ միայն՝ Նախ և առաջ կենդանի ընթացք է՝ իր վերիվայրումներով, կանկաններով ու պոթիկումներով, սղաբողութիւններով ու երջանկութիւններով, փնտառութիւններով ու յայտնագործումներով: Բայց մանաւանդ՝ ներկային մէջ անցեալը խուզարկող և ապագան յայտնաբերող յառաջնադասք է, որ Քափ կ'ստանէ ուժեղ և խոր գրգռներէ, ազնի և վեհ նպատակներէ, սեփական կենսափորձով հաստատուած և օրըստօրէ աւելի արմատացող հոգեմտաւոր սկզբներէ:

Վերջապէս, արուեստի մնայուն գործ մը կենսիկ յաւերժական մէկ կայութեան կամ երեւոյն վերականգնումն է նախ և առաջ, ապա՝ սրբութեամբ, բիրտիւստեմբ, իմացական յանելումներով յաղեցած գաղափարական լիացումը:

Մեր կարծիքով, Ջոհրայի նկարչութիւնը պէտք է ձգտի սպրտուած ճշմարտութիւններէ ծրունդ առած, խորթափանց երեւակայութեան ինքնադրոջ դիմադիմով հարտացան և իր իւրախատուկ փիլիսոփայութեամբ յաւանդուող Էմարիտ արուեստի բարձունքներուն:

Ս. ԿՐԻՍՏՈՒՄԻԱՆ



Ք Ա Մ Ի Ն Ե Ր  
(ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆԵԱՆ)

(Գեյրուբ. 1979, 82 էջ)

Քիչ էր դժուար է սերնդակիցի մասին զրկել: Ժամանակը՝ անոր առաջին զրկման: Այնտեղ ենթակայական որոշ ազդակներ կը մտնեն, որոնք արգելք կը դառնան Հեռուստաթիւն մը ստեղծելու ընկերացուին եւ դորձին միջեւ: Սակայն կան նաեւ առաւելութիւններ: Յաճախ երբ զգրախօսողը ծանօթ է բանաստեղծի իւրաքանչիւր կողմին կամ շարքի երկնումին, ընկալանքար Հեռուստա կ'ըլլայ անոր շերթադրութեան հարմարութիւն, ինչպէս թիւրքանչիւր փորձի հոգին զանուսը ճիշդին:

Աւելի քան տասնամեակէ յետոյ կ'երկարին զԾանկները՝ խորագրով զգրքիին բանաստեղծութիւնները, որուն պատճառաւ Հեղինակին շերթադրութեան ընկալուածը կը Հեռուստա մասնակի ազդեցութեան եւ որոշ փոփոխութիւններ կը կրէ: Ասիկա զգալի է սողկրու շարքառութեան տեսակէսէն, որ էթէ սկիզբը աւելի զփակ է ու աւանդական (որինակ, «Ընկերացուին»), սակաւ կը բացուին եւ աւելի ճկուն կը դառնայ:

Այս փոփոխութիւնը կ'ազդէ նաեւ շերթադրութեան բովանդակութեան վրայ, եւ անոր կու տայ ունի անկեղծ եւ աւելի թելադրական շնչա մը: Անոր ամենին յատկանշական օրինակը Հեղինակին Հաւաքականութեան, Ժամանակը՝ ազգային Հաւաքականութեան հանդէպ ունեցած փորձառութեան մէջ կը դրսևորուի: Ան սկիզբը՝ «Ճիւղէ երկիր, ճիւղէ երազ» է, որ Հեղինակի, զազթող թռչուններու, Մասիններու, սիրտութեան կամ ամառութեան հետ կը զուգակցուի, որ Հանկի ու զգացական մթնոլորտ մը փոխանցելով Հանդիւր, վերացական կը մնայ: Այս զազթարախօսական եւ pseudo իրականութեան փոխարէն, ձերբանան, իր անցուցին ու շրջապատին վերադառնալով՝ կ'անցնի իր իրականութեան փնտրատուքին:

Թէ անբիթի սյներու վէջ՝  
Տաւներ կային դուռ-դրացի  
... Ու սմէրք.  
Իր զազթող մասներուն մէջ սեղմած Ժամին Պատուհանէ պատուհան՝  
կուզար երգիք յօրինելու:  
(«Ընկերացուին», էջ 12)

Հետաքրքրականը այն է սակայն, որ այս անցուցը թիչ էր անդիտակից արարք կը թուի կարծեմք, եւ աւելի՛ Հեղինակին շերթադրական

հասկացողութեան հասունացմամբ կը շահուի: Ասիկա կ'ըսենք, որովհետեւ թէ՛ իր հաւաքականութեան ընդհանուր արժանաբանութիւններն ու աւանդական ընկալման եղանակը կայ, եւ թէ իր ենթակայական փորձառութեան ճամբով ինքզինք հասկնալու ձգտումը:

\*

Այս երկրորդը՝ անհասական փորձառութեան ճամբով ընկալելու ձգտումն է, որ աւելի հարազատ է ձերանեանի խառնուածքին եւ շերթադրութեան: Անոր հիմնական նկարագիրը պարզ քնարականութիւնն է, որ կը զբաղէ կամ կը անպի իր առանձնութեան, սիրոյ ու շրջապատի հարցերով: Եւ ահա անորան կը բացուի ու ինք սկսածայ հարց կու տայ:

Թէ Բազմին մէջ հմարայր  
Մարդին որքա՞ն հմարայր են,  
Ու եղանակն ի՞նչ է արդեօք  
Յիշուելուք օրացոյցին տրամադրուած,  
Ձեռնն որքա՞ն ամառ ունի  
Իր ճիւղածակ կրակներուն մէջ քաղուած,  
Գարունն արդեօք՝ իր ծաւերուն ու մղարկերուն  
մէջ կ'անայ՝  
Որքա՞ն աշուն է պահած:  
(«Մտապտակներ», էջ 17)

Հոս թէ՛ սովորական ստորեան կայ եւ թէ անկէ բխող մանրոյթը, որ կազապարուած ու մեքենայած իշակի կը վերածէ մարդը: Ասիկա սովորական մարդու կենցաղն է: Իսկ Հեղինակին զժամանակները կրկնակի է, ան ո՛չ միայն ամէն օր կ'ազդի այս փորձառութիւնը, այլև զօրտակից է իր կացութեան...: Այս անկարողութիւնը կը շնչուի «Մտապտակներ» մէջ, ուր աւանդական եւ անվերջ օրեր կարու կը լաջորդեն եւ ուր ոչինչ կը փոխուի: Արտաքին կացութիւնը Հեղինակին կը դառնայ իր ներքին կացութիւնը, այլ տարրադրութեան մը տալով հարցին: Անոր անդրադարձը այն կ'ըլլայ, որ ան այլևս իր մեծութեան մէջ կը միջնուի, առանձնութեան բանաստեղծու զանաւորով:

Ճիշտ է, որ այս բոլորը չեն իտանուր եւ կը արուն որոշ պարզութեամբ, սակայն քնարական պարզութեամբ ընթացող բանաստեղծական նման աւանդութիւն մը կայ, որուն դրսևորումը կը

զատնան այս բանաստեղծութիւնները: Նոյն մը-  
 զումը ի յայտ կու գայ որոշ սպորտներու մէջ,  
 օրինակ, սիրային բանաստեղծութեան մը պա-  
 րագային, խարոյկէ շրթունքներով ու զվարդա-  
 հիւս Ռանիայի նկատմամբ ենթակային բոլոր  
 զգացումները նուրբ ու թափանցիկորէն կը զը-  
 ծագրուին:

Այս ձեւի բանաստեղծութիւններուն մէջ,  
 շնարկանութեան եւ պարզութեան կողքին, լզ-  
 գայի է պատկերային տարրերու ներկայութիւնը:  
 «Մտոր» ասոր մէկ լաւ արտայայտութիւնն է.

Կուն ամէն օր կը ծաղկիս  
 Մարդոց եղէ այճերուն մէջ,  
 Յետոյ զանոս կը բայքամսս  
 Քեզմով վանուած կոպերուն տակ խաւարին:  
 (էջ 57)

Մտոր, ըստ երևոյթին, որոշ կապակցու-  
 թիւն ունի նշանակին հետ, որովհետեւ այնուր  
 եւս կը յայտնուի:

Երբէ վայրի բայումնի՛ր,  
 Ու այճերույ, բաց այճերույ  
 Ենձն ձգած մութ գայներով՝  
 Ես կը Արիւմ  
 Մաս մը եմս  
 Ու գոյարուող աշուն-աշուն տերքնիք...  
 (Էկեւ գիշերային գրանգ, էջ 10)

Այս պատկերներու ներկայութիւնը, որքան  
 ալ արտաքին է կամ ֆիզիքական, յաճախ յստակ  
 զգայնութիւն մը կը փոխանցէ, ինչպէս յուշերու  
 մէջ արթնցող, խռովիչ զպէնկայան կարմիրը  
 շրթունքները սեւ աչքերով աղջկան: Վասնա-  
 բար այս երակն է, որ պէտք է զարգանայ, հո-  
 գերանական լիցք ու զունաւորութեամբ համար  
 ֆիզիքական պատկերներուն:

\*\*\*

Ինչպէս ընթացողը պիտի տեսնէ զՖամիլն-  
 ընտ շորս բաժնիներուն մէջ (մեկը քանցեցինք  
 բաժանումները), ձերանեան բանաստեղծութեան  
 աւանգական զնկարումով սկսելով հանդերձ, հե-  
 տըզեանտ անիկ ապա մեւ մը կ'որդեղէ եւ ա-  
 նիկ բաց լեզուական-նախադասական շարադա-  
 սութիւն մը: Իր առաջին գիրքով մշակած բա-  
 նաստեղծութեան մէջ կ'ուրուագուի կամ կ'ա-  
 սանձնանայ երակ մը, որ շնարկան է եւ պարզ  
 ու պատկերային ձգտումներ կը ժառանգէ: Որոշ տե-  
 ջեր ալ, ան կը յաջողի մինչեւ իսկ զբացակայիչ  
 իր կարգ մը բանաստեղծութիւններէն, ենթակա-  
 յական սպորտներու մասին խօսելով հանդերձ:  
 Մեր կարծիքով, այժմ զինն է, որ պէտք է  
 զարգացնէ ձերանեան:

Թ. Գ.

## ԱՆՐՋԱԿԱՆ ՎԱՂՈՐԴԱՅՆ (ՅԱԿՈՒՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ)

(Անթիլիաս, 1978, 110 էջ)

«Անթիլիան վաղորդայնը երկրորդ ժողովու-  
 ճուն է բանաստեղծ Յակոբ Մանուկեանի, որուն  
 անուան կապուած է սակզագործական ջանամ-  
 եայ կենսափորձ մը, կազմուած՝ իրարու ներհակ  
 երկու հանգրուաններէ: Եթէ Մանուկեանի առա-  
 ջին տանումեակի աւանդական գերթումները կը  
 առաւելին նկարագրական ու ձեռագրական տար-  
 րին արձակուածէ երանգներով, այսօր, առանձ-  
 նաշատկութեան համար արձանիք մըն է վե-  
 րացական ախորժակներ մատուց այն խոհանար-  
 նութիւնը, որ էրբեւ զլիաւոր լար կը թրթոսյ  
 երկրորդ տանումեակի անոր ստեղծագործու-  
 թիւններուն մէջ:

Մանուկեանի երկրորդ հանգրուանի հատորին  
 անցնելէ առաջ, պիտի ուզէինք դիտել տալ, որ  
 լեզուական շրթութեան, կատայի անուարաու-  
 թեան, խորհրդանշաններու ազատութեան եւ շա-  
 վազանցուած խորհրդանշանութեան տուրք տա-  
 լով հանդերձ, «Անթիլիան վաղորդայնը» նկատա-  
 լի յաւալորմութիւն մըն է՝ բազմաթիւ գլու-  
 նային մանապարհով (1971) խորագրեալ իր ա-  
 ռաջին գրքոյկին հետ:

\*\*\*

«Գլորզ Մելիտիեցի Գրական Մրցանակ»  
 հրատարակութեան արձանագան Մանուկեանի  
 «Անթիլիան վաղորդայն» գերթողագիրքը կը բաղ-  
 կանայ շորս շարքերէ, — «Ուղիներով անվերա-  
 դարձ», «Վաղորդայն վաղորդայն», «Հեռակայ-  
 նաց լուսամտներ», «Հոյսովայն եւ հեռակայն»:  
 Երբեք մէջ, այս շարքերը չեն ամբող-  
 ջացներ բանաստեղծարէ մը սպասուած նիւթի  
 կամ յղացի միութիւնը, հակառակ անոր, որ  
 «Հեռակայնաց լուսամտներ» շարքին գերթում-  
 ները մասամբ կը հեռանան հատորին միւս բա-  
 ժնիներուն ընդհանուր մթնոլորտէն, երբ սփիւռ-  
 քահայ պատկանելիութեան արձանագաները իրա-  
 բու կ'օղակեն ինչորոշ առարկայ բաժնիներ  
 թրուածները՝ առաջացնելով նիւթի յստակ միու-  
 թիւն մը: Ինչ կը վերաբերի հատորին մնացեալ  
 շարքերուն, անոնք առհասարակ կը շարժեն հա-  
 սարակաց թեմաներ: Արդոյ, կարծուի, տառապան-  
 քի, անհունախալու, Անծանօթին էութիւնը ինու-  
 զարկելու եւ ժամանակին մէջ արժանա նետելու



զբախութիներն են հիմնական շարքը հաստ-  
րին, որուն էջերուն բնթիցողը աննշատ կը  
հանդիպի Քրիստոսին անձանք զաղտազանք  
զառնալու անդէն լոնուած քերթողին, որ ան-  
յայտին արհեստներուն կը թեւածէ իրը ճշու  
հետախոյզ, որ Է...պիտի յանձնուի աներեւոյթ  
ծովու մը մակերեսային, որովհետեւ՝

Պօռը այստեղ վերադարձի երգ է հիմա,  
Տոսպալմէն՝ անցորդ անօրեւան,  
ար կը թել տփուներ անձամբօրին,  
լծորդելով իր ինքնուրուի տարազիր՝  
երգիկ մը երանանշ կայարդամբին:

(«Հատարարագիր», էջ 70)

«Անհրեւոյթ ծովուն, ճանձանք արհու-  
նին, Հայրուած հնարգիրն, Հիմնարուած բա-  
ռային, անգիր գիշարանվէպին, Հարտարեւուած  
պաղատանքին, անմարմնացեալ կարօտին, ան-  
վիշապարծ ուղիներուն, զողանքներու հարա-  
ցած ձղապատանքին, անցուցանիչ ճանապար-  
հին, անհարսնացեալ մտերմութեան, կարճ՝  
Պաներեւոյթ իրերու յայտնութիւնը՝ հետապնդե-  
լու մուշտօքն հրդեհուած այն բանաստեղծներէն  
է Յակոբ Մանուկեան, որոնց համար մտասեւե-  
ռուս է զօրերու ծածկադիր իմաստութեան մէջ՝  
թաքնուած խորհուրդները վերձանելու միջը,  
ըպեսքի մարդը Հանգրիմուի (ինչպէս պիտի  
ըսէր ինք) իր իսկական պատկերին, կայք հաս-  
տատել մամանակի յարգութիւն տարածութեան  
մէջ, անհունանայ ճանչմանակ տարածութիւն-  
ներուն զինհանիտ իմացութեանը եւ, մանա-  
ւանդ՝

Խորհուրդի պէտ անկիցք, անգրակամ,  
Ըլլալ թէ՛ ծանօթ, թէ՛ անծանօթ միանգամայն:  
(«Երանուրդ», էջ 47)

Պարզուած տուեաններէն մեկնելով, իրեւ  
կարկացութեան կարելի է ընդգծել, որ «Անըա-  
կամ վազարդայնը կը բախի մարդուն լինելու-  
թեան մշտտեւ հարցերուն, որոնք նախամար-  
դուն օրերէն կու գան, կը հուղուին մօտիկ անց-  
եալի ու ներկայի թուրքուհին մէջ, նոյն ուժգ-  
նութեամբ ետեւ կ'աշխարհեն զսաներորդ դարու  
աւարտին կանգնած սպանազանար բանաստեղծին  
էութիւնը՝ զառնալու համար սպառաշի երգը,  
ամէնօրեայ անաւարտ հուղույթ, այսինքն՝

...Ձգացողութեամ հրեղէն թրթիտ,  
Նորագ ըմբռնում վերին դայմութեամ,  
Պսակաղի'ր լիւրքիւմ...  
(«Վալիլիւրթիւմ պսակաղի», էջ 110)

\*\*\*

«Հեռակայնաց լուսամուտներ» շարքի երկրորդ

նուն քերթուածին մէջ, Մանուկեան կը կատարէ  
իր տաղանայն ու ճշուածը բնութագրող սա յար-  
տարարութիւնը:

Հնար բլլար ըմբռնել մեզ՝  
մեր գոյութեամ յղացքիմ մէջ նայնական:  
(էջ 78)

Գոյութեան այս զրգիւրը արտաքինացու-  
ցած վերի տողերուն համապատասխան յայտա-  
բարութիւններու կարելի է հանդիպել «Անըա-  
կամ վազարդայն» գրքի մէջ բոլոր քերթուածնե-  
րուն մէջ, երբեմն համոզիչ լեզուով, իսկ երբեմն  
ալ՝ կայրութեան մը հպարտիկ արձագանգը հան-  
դիսացող պոթիւնով մը նախնական տարազով:  
Այս յայտարարութիւն-պոթիւնները, ու-  
րոնք առհասարակ քերթուածներուն յղացքային  
մտութիւնը ցնցող միմտութիւններ են, հաս-  
կունենան դրական անգրագործ, երբ կուտայի  
միացողադ կլուցի մէջ կ'առաջացնեն լեզու-  
ած ելեւէջներ, իսկ միւս կողմէ՝ զգայնութեանց  
լողարձակութեանը կը ջերմացնեն վերացական  
աղօսութեան այն թանկ մթնոլորտը, որ հետե-  
ւանքն է խորհրդանշաններուն ներմտութիւնը  
կին:

Ըսինք, որ խորհրդանշաններու աղօսութիւ-  
նը եւ լափազանցութիւններու հասնող խորհրդա-  
պայտութիւնը հիմնական թերութիւններն են  
«Անըակամ վազարդայն»-ին, որովհետեւ լեզուի  
ծանրութեան հետ զգալիցանձ» անոնք ան-  
թարգմանելի խտութեամբ մը կը խնդրեն խոր-  
հրդանշան-բանաշինները: Օրինակ, «Անըարմաց-  
եալ մտերմութիւն» բանաստեղծութեան մէջ,  
դուք անձնական դերանունը ո՛ր մէկ ենթադրու-  
թեան դուր կը բանայ: Ո՛ր մէկ մասնանշուած կը  
կատարուի այս ուղղութեամբ, այլ միմիայն կը  
կարդանք նոյնքան միզամած հասցէագրութեան:

Դուք,  
Մեղեդիացած տրամաբխիւմ,  
Անձայնամիլ տառախումբերու  
Նրբերանց խալ:

.....

Դուք,  
Տպաւարպաշտ զիմաստունը

.....

Դուք,  
Ազգամզայն յայտնութիւմ  
Սերած՝  
Փամանակի  
Տոմէն անշտաւիդ

(էջ 10)



ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ՅԱԿՈՒՐ ՕՇԱԿԱՆ

ՀԱՄԱՊԱՏԿԵՐ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Եօթներորդ հատոր

Արուեստագէտ սերունդ

- 1.- Թորգոմ Պատրիարք Գուշակեան
- 2.- Յովհաննէս Յարութիւնեան (Թլկատիցի)
- 3.- Երուանդ Արմաբէշիանիեան (Երուխան)
- 4.- Ռուբէն Զարդարեան
- 5.- Սուրէն Պարթեւեան
- 6.- Գեղամ Բարսեղեան

Ութերորդ հատոր

Արուեստագէտ սերունդ

- 1.- Տիրան Զրաբեան (Ինտրա)
- 2.- Ատոմ Եարնանեան (Սիւսանքո)
- 3.- Լեւոն Սեդրոսեան (Շանթ)
- 4.- Երուանդ Օտեան (Երոս)
- 5.- Տիրան Զեօկիւրեան

Գին՝ Սուրիա Լիբանոն՝ 30 լ. ոսկի, արտասահման՝ 12 տոլար

Ստանալու համար դիմել՝

LIBRAIRIE DU CATHOLICOSSAT ARMENIEN  
ANTELIAS, LIBAN

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ

Ա Հ Ա Ջ Ա Ն Գ  
(Բանաստեղծութիւններ)

Հասցէ՝—

V. OSHAGAN  
UNIVERSITY of PENNSYLVANIA  
History Department  
207 College Hall  
Philadelphia, Pa. 19104

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻՔԱՆԱՆ 50 Լ. ՈՍԿԻ  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 27 ՏՈՒՐ  
ՀԱՏԱՎԱԶԱՌ 8 Լ. ՈՍԿԻ

بَاكِينُ  
مجلة شهرية ، ادبية وفنية علمية  
المدير المسؤول  
السيد ارتين كازنيك قرانجيان

•  
**PAKINE**  
REVUE MENSUELLE  
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire  
Dr. A. KAZANDJIAN

•  
**Բ Ա Գ Ի Ն**  
ԱՄՍԱԳԻՐ  
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

Խմբագիր  
ԳՕՂՈՍ ՄՆԱԳԵԱՆ  
Խմբագրության տեղամեկ  
ՅԱՐՈՒԹԻՆ ՊԵՐՊԵՐՅԱՆ  
ԱՄԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

B. P. 11 - 8404 - Beyrouth - LIBAN  
Tél. 296898